



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

9592

64  
F-14

1874

EB 2002

2911

Տ Ն Տ Ե Ս

64

ԿԱՄ

F-14

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ

Կր

ՀԱՐԿԱԻՈՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ,

ՀՆԱՐՆԵՐԻ ՈՒ ՄԻԶՈՑՆԵՐԻ

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՅՕՐԻՆԵՑ


ԱՂԵՔ. ՀԱՅՐ. ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆՑ

Ի ԲԱԳՈՒ:

88

1874

Ն. ՄԱԼԱՏԷԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ. ՏՊԱՐԱՆԻ:



1003  
11152

18 76

Ի ՆՇԱՆ ՍԻՐՈՅ ԵՐ ՅԱՐԳԱ-  
ՆԱՅ ԻԻՐ ԱՆՄՈՌԱՅ ԸՆԿԵ-  
ՐԱԿԻՑ

ԹՈՎՄԱՍ ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՓԱՆԻԱՆՑԻՆ

ՆՈՒԲՈՒՄ Է

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՂԸ

Дозволено цензурою Тифлисъ  
12-го Января 1874 года.

Անմոռանալի ընկերակից  
Թովմաս Առաքելեան.

Դառնալով զէպի Քեզ, իմ միաքս  
է— ոչ թէ միայն Քեզ, այլ բոլոր Հայե-  
րին— մի քանի խօսք ասելու այս իմ զըր-  
բոյկի համար: Ես այստեղ մտադրութիւն  
չունիմ ցոյց տալու լաւ տնտեսութիւն  
իմանալու կարեորութիւնը և ո՛չ այն պա-  
կասութիւնը, որ թէնի մեր գրականու-  
թիւնը այսպիսի զրքերի կողմից -- ո՛չ, ես  
միայն մի քանի նկատողութիւններ կանեմ  
այս զրքի բովանդակութեան և առանձ-  
նութիւնների վերայ:

Տեսեալ բովանդակումէ 200-ի մօտ  
յօդուածներ, որոնք կարելի է վերաբերել  
հետեւեալ գլխաւոր առարկաների և տպա-  
գրվում են այս կարգով:

- 1.) Սուրճ և ըմպելիք.
- 2.) Կաթ և իւղ.
- 3.) Գրաստ և կենդանիք.
- 4.) Թռչուններ (ընտանի).
- 5.) Շոր լուանալը.
- 6.) Երեխայ և ծծմայր.

- 7.) Քժշկական գիտելիք.
- 8.) Առանձին միջոցներ.
- 9.) Ծառ., խոտ և պտուղ.
- 10.) Խառն միջոցներ և գիտելիք.
- 11.) Չափսեր, կշիռներ. և
- 12.) Բառարան:

Յօդուածները այսպիսի կարգաւորու-  
թիւնը ամենեւին չի նշանակում թէ մէք  
սկզբի յօդուածներին աւելի նշանակութիւն  
և առաւելութիւն ենք տալիս, քան հե-  
տեւեայներին դա ամենեւին չենք ունեցած  
աչքի առաջ:

Ամենայն յօդուածի տակ մէք յիշել  
ենք այն աղբիւրի անունը, ուրտեղից  
առնուած են, կամ սկզբնատղբուրը, կամ  
ուրտեղից քաղուած կամ թարգմանուած  
է ուստականը:

Համարեա բոլոր յօդուածները թարգ-  
մանուած են զանազան զրբերից: Հետե-  
ւալ գրեանքը ընդ այսմ եղել են զխա-  
ւոր աղբիւրներ:

- 1.) 4 ամսոյ Русская Хо-  
зяйка ամսագիր.
- 2.) Энциклопедія կամ

миръ практической  
жизни.

- 3.) Книга технико-хи-  
мическихъ рецептовъ.
- 4.) Журналъ общепо-  
лезныхъ свѣдѣній.

- խի մասամբ. 5.) Пабетъ.  
6.) Բազմավէպ.  
7.) Տանու բժիշկ.  
8.) Дѣтское чтение:

Այդ զրբերից մէք կարող էինք ա-  
ւելի քան 3000 զանազան սնտեսական մի-  
ջոցներ և գիտելիքներ ժողովել. բայց մեր  
ջանքը եղած է միայն այն, որ ըստ կա-  
րելոյն մատչելի լինին Հայոց կեանքին և  
մանաւանդ մեր զիւղական ժողովրդեան,  
թէև խոստովանենք, որ մի քանի բաներ  
այս զրբոյկի մէջ այնու ամենայնիւ փոքր  
ինչ դժուար կ'լինին:

Գրքի մէջ ըստ մեծի մասին գործ  
են ածուած հասարակաց և երբեմն զրա-  
բար բառեր, որովհետև եթէ մէք գործ  
դնելու լինէինք զաւստական բառեր, զրա-  
նով կ'ծառայէինք միայն ժողովրդեան մի  
մասին, լեզուն դուրս կ'զար աղճատուած

և մեք հասած չ'էինք լինիլ մեր ցանկացած նպատակին. վասնորոյ մեք գրքի վերջում գրինք մի կարծ բառարան անհասկանալի բառերի քիչ ու շատ բացատրութիւններով, աւելացնելով ռուսերէն և թուրքերէն նշանակութիւնները:

Եթէ «հետեա»-ը լաւ ընդունելութիւն ունենայ մեր հայրենակիցների կողմից, ես խոստանում եմ այս երկուսից մէկը. կամ որչափ կարելի է ուղղացնել, լաւացնել և մեծացնել միւլենոյն այս գիրքը. կամ թէ լոյս ընծայել երկրորդ մաս Այն ժամանակ կ'աւելանան առ հասարակ երկայն յօդուածներ, զորօրինակ սապօնի եփելը, գինի-քացախ պատրաստելը, գրաստապահութիւն, շերամապահութիւն և այլն:

Առաջին տպագրութիւնը, մեք հաւատացած ենք, որ զանազան սխալներով և սակասութիւններով լիբը կլինի, վասնորոյ եթէ կ'ունենանք երկրորդ տպագրութիւն, կ'աշխատենք լքցնել բոլոր անկատարութիւնները, որոնք կամ մեք-ինքներս կ'նկատենք, կամ թէ մեզ խորհուրդ կ'տան:

Այս մի քանի խօսքերը ասելուց յետ դառնում եմ դէպի Քեզ, սիրելի բարեկամ, որից թէև հեռու եմ տարածութեամբ. բայց մօտ սրտով ու հոգով: Չ'գիտես ինձ-ինքեանս որչափ քաղցր է իմ այս ծանր աշխատութեանս երեսին տեսնել Քո անունը, որին և նուիրեցի: Ուրեմն ընդունի՛ր եղբայրական անկեղծ սրտի նուէրը, որ իմ կարծիքով աւելի պատշաճ է Քո ընտրած ապագային և համապատասխան Քո քմքին և պահանջին. Բայց գիտցի՛ր, Թովմա՛ս, որ սա մի փորձ է, ինչ ես անում եմ և ուրեմն կարող եմ կամ հասնել նպատակիս և կամ ո՛չ. իմացի՛ր, որ այս դեռ անկատար աշխատութեան վերայ, որչափ կարողացել եմ ձիգն եմ թափել և յիշեր զխաւորապէս, որ իմ ազատ ժամանակը չտիսողանց քիչ է: Գուհաւատացած ես ՚ի հարկէ, որ սա իմ անքնութեան և մեծ ջանքերի արդիւնքն է: Աւելորդ է ասել, Թովմա՛ս, որ ժամանակը խլել եմ-գիտե՛ս, ինչ է նշանակում խլելը-զողացել եմ ժամանակը. բայց ժամանակը արծաթ է: Առ միշտ Քո հաստատ ընկե՛ր. Ա. . . 16 մարտի 1874.



ՍՈՒՐՃԻ ԱՂԱՆՁԵԼԸ ԵՒ ԵՓԵԼԸ.

(РУССКАЯ ХОЗЯЙКА)

## 1. Սուրճի տեսակները

Մեր ժամանակում սրճի<sup>2</sup> արտերը մեծ տեղեր են բռնում Արաբիայում, Արևելեան և Արևմտեան Հնդկաստաններում, Աֆրիկեում, միջին և հարավային Ամերիկայում: Միայն Եւրոպան տասը տարի առաջ գործ էր ածում ամեն տարի տասը միլիոն փութ սուրճի:

Վաճառականութեան մէջ երեւելի են հետեւեալ տեսակները սուրճի:

- 1) Մ օ թ ա կ ամ Վ և ա ն տ ե ա ն. բերվում է Արաբիայից, հատիկները փոքր են զեղնագոյն և աւելի կոլոր, քան թէ երկայն:
- 2) Մ ա ս թ ի ն ի ք ե ա ն-բերվում է Մարթինիք կղզից և Արևմտեան Հնդկաստանի միւս կղզիներից, հատիկները կանաչա-մուսրագոյն են, բաւականին մեծ, աւելի երկայնաձև և մասամբ խորընկած:
- 3) Պ օ Ր թ օ Ր ի ք օ և Կ ու բ ա-Անթի-

լեան կղզիներից: Հատիկները նման են մառ-  
թենիքի, բայց աւելի թխագոյն:

4) Ճ ա վ ա կ ա մ Ե ա վ ա-Չօնդի կղզե-  
ներից, Արևելեան Հնդկաստանում: Հատիկ-  
ները մեծ են մօքքային նման, բայց դեղ-  
նագոյն, մոխրագոյն, կամ կանաչագոյն:

5) Ս ու Ր ի ն ա մ-Մասկիրինեան կղզիներից  
Գվինանայից-միջին Ամերիկայում: Հատիկ-  
ները ամենամեզ, կանաչագոյն:

6) Բ ու Ր Բ օ ն-Մասկարինեան կղզիներից-  
Աֆրիկէում: Մեղանում քիչ է լինում,  
մեծ մասամբ բերումեն քրանսիա: Հատիկ-  
ները սիռնած-դեղնագոյն են:

Դժուար է գերազանցութիւն տալ այս  
տեսակներից որ և իցէ մէկին, որովհետև  
վաճառականութեան մէջ նրանք առանձին  
չեն լինում. այլ ըստ մեծի մասին խառն:  
Սակայն բոլորեցունց կարծիքը շատ ժամա-  
նակից ՚ի վեր այդ գերազանցութիւնը նու-  
իրումէ մօքքային: Բայց ինչ վերաբերումէ  
ինձ, ես նախադասում եմ մօքքայի և  
մառթինիքի խառնուրդը հաւասար մասնե-  
րով. ես խորհուրդ կ'ապի ուրիշներին էլ  
հետևել իմ օրինակին:

## 2. Սուրճի լուանալը.

Մախ պարտաւորութիւն եմ համա-  
րում զգուշացնելու, որ այդ տեսակները  
պէտք է աղանձել առանձին-առանձին և  
խառնել աղանձելուց յետոյ որովհետև  
սրճի աղանձելու աստիճանը կախումն ունի  
զխաւորապէս հատիկների մեծութիւնից  
և պնդութիւնից: Զոր օրինակ եթէ մէկ  
տապակի (աման, որտեղ աղանձումեն) վե-  
րայ ածենք մօքքան-սուրինամի հետ, ա-  
ռաջինը բոլորովին արդէն ածուխ դարձած  
կ'լինի, մինչդեռ երկրորդը հազել թէ սկը-  
սած կ'լինի կարմրել:

Աղանձելուց առաջ, իւրաքաչիւր տեսակը  
անպատճառ պէտք է լուացուի մաքուր ջրի  
մէջ և յետոյ սրբուի սրբիչով մինչև չո-  
րանալը: Սա ամենահարկաւոր է առաջինը  
նրա համար, որ հատիկների քչեփը և  
կաշին դուրս գայ, որոնք աւելի վատ համ  
են տալիս և երկրորդ առաւել նրա համար,  
որ նոր ժամանակներում սովորութիւն է  
ընկել կապոյտ գոյն տալ սրճին: Բայց ո-  
րովհետև կապոյտ գոյնները առ հասարակ  
պատրաստումեն պղնձից և շատ թունա-

ւոր են, վասնորոյ սրձի լուանալը առողջութեան կողմանէ նախազգուշութիւն է: Ճշմարիտ է մի քանի մարդիկ ասուվեն թէ կրակը բոլորը մաքրումէ և եթէ վատ զօրութիւններ կային խոնաւ սրձի մէջ, ազանձածի մէջ չկան. այլ կորչումեն, բայց սա ճշմարիտ չէ, այն մետաղը, որից պատրաստումեն զոյներ, կրակի զօրութիւնից կարող է միայն փոփոխել իւր խառնուրդը և ուրիշ կերպ ընդունել. սակայն կ'մնայ մետաղ անմարսելի և ծանր ստամոքսի համար:

### 3. Ազանձելը.

Սուրձը ազանձելու ժամանակ պէտք է սեննալ մեծ զգուշութիւն. թող չանել, որ կամ այրուեն, կամ ածուխ դառնան: Այս հանգամանքում մի փոքր սխալմունքը զրկումէ սրձին անուշահոտ և իւղային մասերից: Սրա համար սրձի բոլոր տեսակներն էլ պէտք է ազանձել մինչև այնաստիճան, որ հատիկները ստանան հաւասարապէս պարզ-շագանակագոյն: Սուրձը կարելի է ազանձել հասարակ կոլոր տապակներում բայց որովհետև ազանձելու ժամանակ

միշտ հարկաւոր է դալիս թափ տալ, որ սուրձը չ'այրուի և բոլոր կողմերը հաւասար լինին, աւելի լաւ է զործածել երկաթեայ չորս անկիւնի արկղիկ, որ դլխից ծածկվումէ կափարիչով, որ այժմ ւսմեն տեղ զործածութեան մէջ է ընկնում և որին կանուանենք կ ա ս կ ա ր ա յ: Այս կասկարայում ազանձելու համար կտամ ես երկու օգտաւէտ խորհուրդ. առաջինը, դեռ սուրձը մէջը չ'ածած պէտք է տաքացնել կրակի վերայ նրա կափարիչը, այսինքն վերի կողմը, որ երկու կողմի տաքութիւնը միահաւասար լինին. որովհետև ազանձելու ժամանակ ներքի կողմը շատ անգամ կըպչումէ կրակին, աւելի տաստիկ է տաքանում և կամ բոլոր հատիկները չ'են ազանձուել և կամ բոլոր մասերը: Երկրորդ պէտք է ազանձելու ժամանակ շրջել կասկարան և անդադար թափ տալ. երբեմն պահել կափարիչի վերայ. երբեմն ներքի կողմի վերայ: Այն ժամանակ հատիկները երկու հաւասարապէս երկաթէ թերթերի մէջ ցատկ տելով շուտ և հաւատարապէս կ'ազանձուեն: Սակայն չ'պէտքէ ծուլանալ շուտ շուտ բաց անել կափարիչը և նայել սրբ-

ձին, և եթէ, կրկին ասուեմք, գոյնը դարձաւ պարզ — շագանակի և ունեցաւ իւղային փայլունութիւն, ամենահաստատ նշաններն են լաւ աղանձուերուն:

#### 4. Աղանձուածի պահպանելը.

Երբէք չ'պէտք է շտապել սրձի աղալու համար: Աղանձուած սուրձը պէտքէ թողնել բոլորովին հովանալ: Մի բանի մարդիք սփռումեն բարակ կերպով ամանների կամ թղթի վերայ: Եւ բոլորովին լաւ չեմ համարում պղպխի եղանակը. իւղային մանսիկները, որոնք բազկացնումեն սրձի հոտը և համը, շուտով շոգիանում են, աղատապէս շրջապատուած լինելով օդով: Աւելի լաւ է ժողովել աղանձուած սուրձը ամանի մէջ և դիզելով բաւականին բարձր թողնել փոքր առ փոքր հոփանալու: Այն ժամանակ միայն վերի հատիկները կ'կորցնեն հոտը, բայց և այնու ամենայնիւ ամենամեծ մասը կ'պահպանի իւղային փայլունութիւնը:


Չ'պէտք է շտապել սուրձը աղալու և այն պատճառաւ, որ նա աղացած աւելի հեշտ է ենթարկվում խոնաւութեան ներ-

գործութեան, որովհետև սաստիկ ձգում է օդիցը խոնաւութիւն: Աղանձուածը ամբողջ հատիկներով կարող է մնալ շատ ժամանակ, իսկ աղանձուածը և աղացուածը մինչև մի շաբաթ բոլորովին կ'կորցնի հոտ ու համը:

Աւելի համով սուրձ խմելու համար եւ խորհուրդ կ'տայի քիչ քիչ աղանձելու. բայց շուտ-շուտ: Ով որ ամէն օր գործ է անում սուրձ, շաբաթը պէտք է աղանձել տայ մէկ կամ երկու անգամ և աղալ ամէն օր փոքր ինչ էփելուց առաջ, միայն այնքան, որչափ հարկաւոր է զալու այն օրը: Աղանձուած սրձի հատիկները պէտք է պահել պինդ փակուած ամանների մէջ և չոր տեղում, ուր ոչ խոնաւութիւն կայ, ո'չ քամի, և նմանապէս ո'չ հոտաւէտ զանազան առարկաներ:

Ով սիրումէ խմել աւելի լաւ և անվնաս սուրձ պէտք է աղանձած հատիկները նոյնպէս էլ մաքրի քէփներից, ինչպէս ցորենը մաքրումեն. իսկ եթէ սա անկարելի է մի ամանի մէջ պինդ թափ տալ, որ բոլոր կեղևը և կաշին, որոնք թունաւոր զօրութիւն ունին, հանուին բոլորովին, եթէ

1003  
— 1152



չէ կամ անհամութիւն կամ փասս կարող են ստանալ:

## 5. Աղալը և ծեծելը.

Աղալու վերայ դեռ խօսք չ'սկսած ես կամենումեմ փոքր ինչ կռիւ անել: Մեղանում, ինչպէս և բոլոր Եւրոպայում սովորել են աղալ սրձի ջաղացնելու: Չզիտեմ, այդ ջաղացը առաջին անգամը ո՞վ է հնարել. բայց նա կամ բոլորովին խմած է եղել սուրձ կամ սիրում է եղել. իսկ աւելի ճշմարիտը նա միայն հարստութիւն ժողովելու ետեւից է եղել և ո՛չ մարդկութեան օգուտ տալու:

Այս գործումը թուրքերը և արաբները կարող են լինիլ մեզ վարժապետ, նրանք չեն աղում այլ փշուռներն մանրացնում են սուրձը: Փորձեցէք մէկ անգամ մանրացնելու քարի սանդի մէջ, քարի սանդխոտնով և մի այնչափ քանակութեամբ սուրձ վեր առէք ջաղացով աղացուածից, մի և նոյն քանակութեամբ ջուր ածեցէք երկուսի վերայ և խմեցէք առանձին նշանակեալ ժամերով: Ճշմարիտը ասումեմ ձեզ դուք բանից յետ բնաւ չէք խմիլ ջաղացի մէջ,

աղացուած սուրձը:

Սուրձը մանրանալով երեւի զանազան կերպով փոփոխվում է աղացուած և ծեծուած ժամանակ: Որչափ հին է սանդը, որտեղ ծեծում են, այնքան աւելի լաւ է մի քանի անգամ ծծելով իւզային մասնիկները, նա նրանցով կշտանում է և վերջապէս նոր ծեծած ժամանակ հատիկների գորութիւնը վեր չէ առնում և թողնում է մէջը համը ու հոտը, որ ամենահարկաորն է սրձի համար: Սրա համար հարկաւորութիւն չկայ ամեն անգամ լուանալ ծեծելուց յետ, բաւական է պահպանել մաքուր, զգուշանալով փոշիից և ուրիշ առարկայի համար գործ չ'ածելուց:

## 6. Սրձի չափար.

Սրձի երկու համար կան շատ անհամաձայնութիւններ: Չ'յիշելով դեռ ջրի որքանութիւնը լաւ սրձանփի ընտրութիւնը շատ երեւելի վէձերի առարկաներ են դարձած: Ես իմ կողմից հաստատապէս ասումեմ, որ երկու թէյի զրկալ լըն աղացած սրձով, կամ երեք զրկալ ծեծած սուրձ մի թէյի թասի ջրի համար ամե-

նալաւ որքանու թիւնը պէտք է համարել  
ամենալաւ խմելիք ստանալու համար: Մէկ  
անգամ ես մտածեցի փորձել մի պատմա-  
կան աւանդութիւն. թէ մի թագուհի  
սուրճը խմումէր մի թաս սուրճ վեր առ-  
նելով և երկու թաս ջուր: Ես եփեցի  
այս որքանութեամբ սուրճ, խմեցի և ճշ-  
մարիտը ստեմ, աւելի լաւ էր մե'ռնեմ,  
առաջին րոպէում: Երբ խմեցի այդպիսի  
սաստիկ թանձր, այնու ամենայնիւ համեզ  
և հոտաւէտ սուրճը, թէև մի փոքր թա-  
սով, ես զգացի անսովոր սաստիկ զարկեր  
երկու ձեռքերիս մէջ և քունքերումս, սրտի  
թռթռանք, զլխապտոյտ և սաստիկ տխ-  
րութիւն: Մի քանի բաժակ ցուրտ ջուր,  
որ խմեցի մէկը միւսի ետեւից և ոտնի տաք  
բաղանիք հապիւ ինձ կարողացան հանգար-  
տել: Արչափ վատ է, տեսնումք, չափից  
գուրս սուրճ գործածելը:

## 7 Արձի եփելը.

Մեծ հարցմունք կար այն բանի համար  
թէ գուրս ջրի մէջ պէտք է սփսել սուրճը  
եփել, թէ տաք: Ես ինքս էլ շատ անգամ  
աշխատել ևմ վճռել այս երեւելի հարցը

և վերջապէս եկել եմ միւսնոյն եզրակացու-  
թեան, որ ամէն տեղ ընդունած է թէ  
սուրճը պէտք է ամէն ուղիղ եռ եկած  
ջրի մէջ: Լաւ եփելու զլխաւոր նպատակն  
է հանել սրճից աւելի շատ համ ու հոտ:

Քաղցրավաճառները առաջին անգամ  
հասկացան այդ խելօքութիւնը և սփեցին  
(կարելի է աւելի խնայողութիւնից) ամէն  
որ սուրճը եփել անցեալ օրուայ մնացորդ  
ձանրութեան վերայ, որ մէնք կ'անուա-  
նելք փլուշ: Ես բողբոջիմ հաւանումեմ  
այս եղանակը և խորհուրդ եմ տալիս իմ  
ընթերցողներին, եթէ նրանք խկապէս լաւ  
սուրճ խմել սիրումեն, դուրս չ'թափեն  
սրճի փլուշը, այլ պահեն մի առանձին  
թէյանոցի մէջ, մինչև միւս օրը: Եւ երբ  
կ'զայ առաւօտեան կամ ճաշից յետոյ  
սուրճ եփելու ժամանակը. ամենից առաջ  
այս փլուշն վերայ պէտք է ամէն բաւա-  
կանին ջուր, երկու անգամ եփ տալ, բա-  
մէլ և յետոյ այս քամուած ջրի մէջ եփել  
խկապէս սուրճը, մտարերիով որ 2-3 թէ-  
յի-դրիալ սուրճ մի թաս գունաւորած  
ջրի համար միշտ վեր առնուլ պէտք է:

Եղերդակ (Цикорій, ջիկորիյ) խառ-

ներու համար ուրիշների կողմից խոսք չկայ։  
 Բայց աւելի համեղութեան համար ես այդ-  
 պէս չեմ կարծում։ Երկու առարկայ մի-  
 միանց հետ խառնելով մեք երկուսին էլ  
 փուչացնում ենք և բազկացնում ենք մէկ  
 մարմին, որ ներկայանում է նրանց միջին  
 զօրութեամբ մի առարկայ։ Եւ ճշմարիտն  
 ասեմ այդ միջինը, ո՛չ սուրձ է, ո՛չ եղեր-  
 դակ, և եթէ մեզ լաւ է երևում, այդ  
 էլ սովորութիւնից, ինչպէս շատ առար-  
 կաների սովորում ենք և վատ յատկու-  
 թիւններին լաւ ենք յատկացնում։ Առ-  
 հասարակ, ով լաւ սուրձ է սիրում, նա  
 ո՛չ մէկ անգամ չի վճռուիլ փուչացնել  
 նրան մի որ և իցէ առարկայով և մա-  
 նաւանդ եղերդակով։

## 8. Փլուշը նստեցնելը։

Դատերը սուրձը եփելով շուարման  
 մէջն են ընկնում փլուշը տակը նստեցնելու  
 համար։ Բոլոր տնտեսական զրբերում գրում  
 են որ ամենալաւ միջոցը օ ս է տ ր ա  
 ձ կ ն ի ս ո ս ն ձ ի կ տ ո ր Ը, կամ ձ կ-  
 ն ա թ ե փ ի կ տ ո ր ն է, որ գձում են  
 սրձանոցի մէջ։ Բայց զրանից սրձի համը

կորչում է, իսկ եթէ չէք ձգիլ, փլուշը  
 կ'թափուի թասի և բաժակի մէջ։ Բայց  
 ինչո՞ւ գործածենք սոսնձային նիւթեր,  
 որոնք կարող են մինչև անգամ մի քանի  
 ստամոքանների վնասել։ Եւ կայ հնար ա-  
 ռանց աւելորդ ծախսերի և հոգսերի-զրոս  
 առաջը առնելու, որ ես ձեզ առաջար-  
 կում եմ։ Սուրձը եփելով որևիցէ մի սր-  
 ձանոցում, զրէք նորան խոր տակերքի մէջ  
 և մի մատ բարձրութիւնից ցուրտ ջուր  
 ածեցէք. բոլոր փլուշը մ'ինչև 5 րոպէ  
 տակ կը նստի։

## 9. Սրձի կորուստը։

Սրձանփի վերայ ես խօսելու չեմ,  
 որովհետև նա մեծ նշանակութիւն չունի։  
 Եփեցէք սուրձը ինչ բանում ցանկանում էք,  
 միայն եփեցէք հասկացողութեամբ, լաւ  
 ազանձուածը և մանրացածը-այն ժամա-  
 նակ դուք կ'ստանաք համեղ խմելիք։

Այստեղ յարմար եմ համարում  
 ասելու մ'ի քանի խօսք, սրձի կորստի վե-  
 րայ ազանձելու ժամանակ։ Արդէն շատ  
 ժամանակներից ընդունում էին, որ սրձի  
 իւրաքանչիւր տեսակը, ազանձելու ժամա-

նակ, կորցնում է իւր ծանրութեան մի մասը: Այդ կորուստը կախումն ունի հատիկների մեծութիւնից և հասունութիւնից. որչափ հատիկները մանր են, այնչափ շատ է կորուստը. և որչափ նրանք հասուն են այնչափ քիչ է: Մեծ նշանակութիւն ունի և աղանձելու աստիճանը, զանազան տեսակ սրճերի աղանձածների զանազանութիւնը յառաջանում է նրանից, որ մէկը շատ է աղանձում, միւս քիչ,

Իմ արած զանազան փորձերովս, ես եկայ այս ճշմարիտ համոզման-սուրճը աղանձելուց յետոյ պէտք է կորցնի միջին թւով խոշոր տեսակը 13-14. իսկ մանր 17-18 միսալ ամեն մէկ գրվանքայ վեր առած սրճի: Ես խորհուրդ կ'տամ այս բանը ընդունել ձեռնարկութեան մէջ. այսինքն որա համեմատ միշտ աղանձել մինչև հարկաւոր աստիճանը: Աղանձելէ մի քառորդ գրվանքայ սուրճ և հրամայեցէք միանգամից աղանձել, ինչպէս առ հասարակ ձեզանում աղանձումեն յետոյ թողէք նրան հովանալ, դուրս հանեցէք քէփը և կռեցէք. եթէ համապատշաճ կորուստը իմ ցոյց տուածիցս

աւելի կ'լինի-հաւատացէք. որ ձեր սուրճը չափից դուրս է աղանձուած: Աղանձելէ նորից քառորդ գրվանքայ հում սուրճ, և հրամայեցէք աղանձել, որչափ կարելի է քիչ հովացրէք և կռեցէք. եթէ կռուը փոքր ինչ պակաս կ'լինի, հրամայեցէք մի րոպէ էլ աղանձել և կրկին կռեցէք և այդպէս շարունակեցէք մինչև վերջապէս սրճի կորուստը հաւասարի իմ ցոյց տուած իս. այս ժամանակ սուրճը բոլորովին համապատասխան կ'լինի ձեր համին և քմբին: Գրանից յետոյ հրամայեցէք միշտ աղանձել այն աստիճան մթութեան, որ ունին սրճի հատիկները, և այն աղախինը, որ միշտ աղանձումէ թող ուշադրութեամբ նայի նրանց գոյնին, մինչև անգամ կարող էք տալ նրան մի ափ օրինակի համար:

## 10. Թութուած գարեջուրը լաւացնելու հնարք.

Վերառէք փոքր ինչ փոշիացրած կաւիճ (մէլ) և ածեցէք զարեջրի տակա-



ուի մէջ և թողէք հանդարտ, մինչև բոլոր  
կաւիճքը նստի յատակը: Այս խառնուրդը  
ամենեւին վնասում չէ գարեջրին. այլ հա-  
նումէ նրա բոլոր թթվութիւնը:

(Дорфъ-Цейтунгъ)

## 11. Գարեջրի նախկին յատ- կութեան բերելը:

Վատացած գարեջրին կարելի է լա-  
ւացնել մի տակառ գարեջրին աւելացնե-  
լով 5 գրվանքայ հայաստանի հայկաւակ  
մանրացրած, որ թողնումեն տակառի մէջ  
մինչև գարեջրի թթվութիւնը անցկե-  
նայ: (Յետոյ գարեջուրը ածումեն միւս  
տակառը և յաւելացնումեն զինի, որ պատ-  
րաստուած լինի ածկանից և լամելեց.)

(Ենցիկլոպեդի մեթոդիք)

## 12. Գարեջրի մաքրելը.

Եթէ մի քառանանոց տակառ գա-  
րեջրի մէջ ածուի 2 լոտ սպաղլեզ (շեք), նա  
բոլորովին կ'մաքրուի, կ'պարզուի, առանց  
մի հոտ սթանալու: Սա ամենահեշտ մի-  
ջոցներից և համարեա ամենաաճշմարտանե-

րից մէկն է: Այդպիսով կարելի է մաքրել  
օղի, լիկէօր և այլն:

(Миръ практической жизни)

## 13. Վարմիր գինեոյ պարզացնելը:

11 վեդրանոց տակառ զինի պարզաց-  
նելու համար վեր են առնում հետևեալ  
խառնուրդը. 4 ձուի սպիտակուց խառնու-  
մեն  $\frac{1}{4}$  շոօֆ զինու հեա, (այդ զինին  
տակառայն է) նոյնպիսի որքանութեամբ  
ջրի և 80 մեխալ աղի հեա: Խառնումեն  
որչափ կարելի է լաւ, յետոյ վեր են առնում  
տակառից մի քանի կիսաշաօփ զինի, ածու-  
մեն նրա մէջ վերոյիշեալ խառնուրդը և  
խառնումեն փայտի օգնականութեամբ:  
Յետոյ տակառի կիսաաը լքցնումեն այդ  
խառնուրդով, մի քանի անգամ խփումեն  
տակառին, որ փրփուրը նստի և օդի սրղ-  
պջակները անհետանան և վերջապէս քա-  
կելով որչափ կարելի է լաւ զնումեն պա-  
տուանդանի վերայ: Մինչև 10 կամ 12 օր  
զինին բոլորովին կ'պարզի և կարելի կ'լինի  
ածել շշերի մէջ:

(Миръ практич. жизни)

## 14. Սպիտակ գինւոյ պարզաց- նելը.

11 վերահանոց տակառի համար վեր-  
կն առնում 6 մխալ ամենալաւ ձկնի  
սոսինձ (рыбий клей): Տաքացնում են եր-  
կու բաժակ գինի և նախ մի բաժակ ա-  
ծում են սոսնձի վերայ, իսկ վեց ժամ անց-  
նելուց յետ ածում են և միւս բաժակ գի-  
նին: 24 ժամից յետոյ բարակ քւթանով  
քամում են այդ խառնուրդը և աւելաց-  
նում են նրա վերայ կէս շափ տաք գինի:  
Այդ խառնուրդը ածում են տակառը, գործ  
դնելով միւսնոյն միջոցները ինչ որ կարմիր  
գինու մաքրելու ժամանակ:

(Миръ практич. жизни)

## 15. Գինու տակառի համ- ուռննալը:

Դրա պատճառը նա է, որ տակառի  
եզերքներում յառաջանում է բորբոսմունք  
որ հաղորդում է իւր համը և գինուն:  
Դրան առաջուայ համին բերելու համար,  
պէտք է գինին ածել մի ուրիշ տակառ և

աւելացնել կէս շափ փայտի եղ: Յետոյ  
գինին սաստիկ խառնում են, որ եղը տա-  
րածուի ամէն մասերը. նա ծծելով գի-  
նու բոլոր վատ մասերը իւր մէջ, բարձ-  
րանում է գինու երեսը: Նոյնպէս կարելի է  
գործ ածել այրուած ածուխի, գձելով նրան  
գինու մէջ:

(Миръ практической жизни)

## 16. Աղը կաթի գերուլթեան վնաս է.

Եվեյցարիոյ գիւղատնտեսական լրագ-  
րում կան հետեւեալ փորձերը: Այն կո-  
վերը, որոնք շաբաթական ստանում էին մէկ  
զրվանքայ աղ. նրանց կաթի հարիւրից  
87-ը ջուր էր, 13-ը միւս պինդ մասերը:  
Միւսնոյն կովերը շաբաթական երկու զր-  
վանքայ ստանալով տալիս էին կաթ, որի  
հարիւր մասից 92-ը ջուր էր, իսկ 8-ը  
պինդ մասերը: Այս փորձից հետեւում է որ  
շատ աղը կաթի գերուլթեան (չաղուլթեան)  
վնաս է: (Русская хозяйка.)

## 17. Կաթը առանց կտրվելու շատ օր պահելու հնարք.

Վայրի բողկը (хрѣнѣ, թուրփ) առքերէ ու կաթը հողէ ամանի մէջ լքցրած, քերած բողկից մէկ զրկալ լեքը զի՛ր կաթի մէջ: Այսպիսով կաթը շատ օր կ'զիմանայ առանց կտրվելու:

(Русская хозяйка և Բազմավէպ)

## 18. Կաթը կտրվելուց ազատ պահելու հնարք.

Կաթը խմելու համար, երբ որ քիչ քանակութեամբ եփել էք կամե՛նում, մէջը զրէ՛ք փոքր ինչ աղ: Այսպիսով կաթը կտրվելուց ազատ կ'մնայ, մանաւանդ ամառուան ամառին և փոթորկալից օր եղած ժամանակ:

(Բազմավէպ)

## 19. Կտրված կաթը լաւացնելու հնարք.

Կտրված կաթի մէջ փոքր ինչ պօտաշ կամ սօդա զի՛ր, կրկնումե՛մ շատ

քիչ, որովհետեւ կաթը կարող է փուճանալ: Յետոյ զձե՛րով կրակի վերայ պէտք է լաւ խառնել և կաթը կ'լաւանայ:

(Բազմավէպ)

## 20. Կարագ եղ պահելու հնարք.

Նոր հանած կարագ եղը պէտք է լաւ լուծնալ և խստակ շորում սխմելուց յետոյ պէտք է կտոր-կտոր ածել մօշնակի մէջ և պինդ պէտք է լքցնել, որ դատարկ տեղ չ'մնայ: Մօշնակը յետոյ զնելով մի պղնձի մէջ, ջուր պէտք է ածել պղնձի մինչև կէտը և յետոյ զնել կրակի վերայ (ի հարկէ մօշնակը միջին): Երբ որ ջուրը եփ զայ, պղինձը պէտք է վեր առնել, ջուրը հովացնել և մօշնակը զուրս բերել պղնձից: Այսպէս պատրաստած կարագը չի փուճանալ մինչև կէս տարի էլ:

(Русская хозяйка.)

## 21. Ռիկոտտա կամ նախաճաշիկի եղ (խալական)

Արա համար պէտք է վեր առնել միջակ շեշ սեր (ղայմաղ) և ածելով մի

ամանի մէջ դնել կրակի վերայ մինչև լաւ եփ գալը: Յետոյ երկու բոպէ դնել հովանայ և կրկին դնել կրակի վերայ մինչև միւս եփ գալը: Նի գալու ժամանակ ածել մէկ կամ մէկուկէս դրկուլ քացախ, որ սերը շաղուի և յետոյ քամել սրբիչն մէջ և 12 ժամուայ չափ ցուրտ տեղ տանել: Սրանից յետոյ ո ի կ օ տ ա ն արդէն պատրաստ է: Համը լաւացնելու համար կարելի է ցրուել փոքր ինչ շաքարի փշրանք: Առաւել համով է լինում սպիտակ հացի հետ: (Русская хозяйка.)

## 22. Լաւ սեր ունենալու միջոց.

Կթելուց յետ իսկոյն տաք կաթը պէտք է ածել փայտեայ մի ամանի մէջ: Այս ամանը պէտք է կողքից ունենայ մի ծակ փակուած պրօպկով: Կաթը միջին, դրան դնումեն տաք ջրի մէջ և երբ արդէն բաւականին սեր է ձևանում, ծակը բացումեն և կաթը արձակում մի ուրիշ ամանի մէջ, որ դրուած է ծակի դէմ ու դէմ: Այսպիսով մնացած սերը շատ թանձր է լինում և համեղ: (Русская-хозяйка.)

## 23. Մերի և կաթի պահպանելու մի միջոց.

Սա մի հեշտ միջոց է կաթը հով պահելու և ուրեմն նրան թթուելուց պահպանելու համար, գործ է ածվում առ հասարակ ծախելու համար: Կաթի ամանները կամ մօշնակները փաթաթուած բամբակով կամ (գիւղերում) աղիացրած կծուծով կամ թեղանով: (Русская хозяйка.)

## 24. Երկար ժամանակ եղը պահպանելու միջոց.

Կովի չ'կծուած, ամենամաքուր եղն էլ առանց աղի դառնանումէ, կամ երբեմն աղը քիչ է լինում: Իսկ եթէ աղը շատ է լինում, թէև եղը շատ ժամանակ է մնում բայց չափազանց աղի է լինում: Այդ անյարմարութիւնների առաջն առնվումէ հետևեալ միջոցով: Պէտք է վեր առնել 2 մաս հասարակ աղ, մի մաս սպիտակ մաքուր շաքար, և մի մաս բորակ (селитра) բոլորը ծեծել և խառնել միասին:

Ամեն-մի գրվանքայ լաւ լուացուած եղին պէտք է վեր առնել 6 մնխալ այս խառնուրդից, բոլորը միասին խառնել և տրորել, որչափ կարելի է հաւասարապէս: Այս միջոցով աղիացրած եղը թանձր է, ինչպէս ուղեղ, ունի գեղեցիկ գոյն, աղն համ չի տալիս և չի փշրվում: Նա առանց խանգարուելու մնումէ մի քանի տարիներ. բայց այդ աղերուց յետ եղը պէտք է 3 կամ չորս շաբաթ անպատճառ մնայ, յետոյ գործածուի:

(Экономическія Записки.)

25. ԵՂԻ ԼԱԻՌԻԹԻՒՆԸ ԵՒ ԱՂԵԼԸ.

### (РУССКАЯ ХОЗЯЙКА)

Այն սենեակը, ուրտեղ որ կաթից եղ է հանվում, պէտք է ունենայ մաքուր և արձակ օդ. որովհետև այդպէս եղ շատ դուրս կ'զայ: Այն կովերը, որոնք անդադար փակուած են, աւելի քիչ կաթ են տալիս և ստացած եղը լինումէ աւելի վատ յատկութեամբ: Կովերին առած չոր կերակուրը զորօրինակ դարմանը և չոր խտոր, ո՛չ թէ միայն քիչացնումէ նրանց կաթը, բայց այդ-

պէս կերակրվող կովերի կաթից հանած սերը, շատ դժուարութեամբ է դուրս գալիս, իսկ եղը այնքան համեղ չէ լինում: Միևնոյն վատ հետևանքը կ'յառաջանայ և այն ժամանակ. եթէ կովը մնայ անդադար մի և նոյն կանաչ խտոր վերայ, զորօրինակ միայն առւօտի (եօնջայ) վերայ և այլն և այլն: Ամենապաւը նա է, որ միշտ փոփոխուի կովերի կերակուրը, որչափ կարելի է. երբեմն պէտք է տալ ալ, և այն էլ շատ չէ:

— 26 —

Եվեցարիայում և գերմանիայում եղած ժամանակըս, որտեղի տան-անասաները շատ փորձառու են-ևս զգուշաբար շատ փորձեր անելուց յետ համոզուեցայ, որ խնոցուած եղի մէջ թարմ, հաճելի համ պահելու համար և չ'թողնելու դառնանալ կամ փուչանալ բառ մեծի մասին կախուած է այն ամանների մաքրութիւնից, որոնց մէջ խնոցումեն, կամ թէ պահումեն: Ամանները պէտք է լուանալ այնպէս, որ նրանց ծակերում անգամ չ'մնայ ոչինչ: Այդպիսի սաստիկ մաքրու-

Թեամբ միայն կարելի է թարմ եղին համեղութիւն պատճառել: Բայց շատ ժամանակ պահելու համար առանց դառնանալու և փուչանալու, մեծ ուշադրութիւն պէտք է դարձնել և եղի լուանալուն: Եղբ պէտք է լուանալ ցուրտ և փոքր ինչ անդիացրած ջրի մէջ միշտ փոփոխելով մինչև այնքան, որ նա բոլորովին մաքրուի և ամենևին սպիտակ պղտորութիւն չունենայ: Սա նշան է բոլոր կաթնային և սերային մասեր չլինելուն, որոնք աւելի են ենթարկուած թթուելու քան մաքուր եղբ: Միայն այս ժամանակ կարելի է հաւատացած լինել, որ բաւականին և հաւասարաչափ աղելուց յետ եղբ կ'մնայ առանց դառնանալու:

— 27 —

Սնանոնաւոր և խելացի աղելն էլ մեծ նշանակութիւն ունի եղի լաւութեան և մնայուն լինելուն: Աղբ պէտք է մոնի նրա բոլոր մասերը, վասն որոյ եղբ բոլորովին լաւ լուանալուց յետ և աղբ ցանելուց յետ պէտք է մի մեծ փայտեայ դրկալով ճմլել և տրորել, որ աղբ հաւասարապէս տա-

րածուի: Յետոյ տեղաւորելով պինդ կերպով տակառիկների կամ մօշնահների մէջ, վերելից պէտք է ցանել փոքր ինչ աղ և ծածկել մաքուր և խոնաւ քաթանով: Մթնոլորտի օդը որչափ քիչ հաղորդակցութիւն ունի եղի հետ, այնքան աւելի է նա մնում:

— 28 —

Շիկցարիայի, Գերմանիայի մանաւանդ Վիրտեմբերգի սնտեսները աղին աւելացնում են փոքր ինչ շաքար: Ֆորձերով անպացոյցուած է, որ այս խառնուրդը, ոչ թէ տալիս է միայն համեղութիւն եղին, այլ նախապահպանում է նրան երկայն ժամանակ փուչանալուց: Շաքար հարկաւոր է սրա համար քիչ-հասարակաբար ընդունուած աղի որքանութեան իւրաքանչիւր գրվանքի համար պէտք է աւելացնել 3-5 միկալ շաքար: Շաքարը պէտք է խառնել հաւասարապէս աղի հետ. ինչպէս աղբ այնպէս և շաքարը պէտք է մանր լինին:

Եւ համոզուածեմ, որ շաքարը խառնելը օգտաւէտ է ոչ միայն աղելու ժամանակ, այլ նա ներգործում է մինչև ան-

զամ և խանդարուած գառն եղի վերայ,  
եթէ միայն նրա նախ և յառաջ լաւ լու-  
ւանալ, յետոյ աղել շաքարի հետ խառն:



## 29. Պանիրի պահպանելը.

Եղալի և կիսանդ պանիրը պէտք է  
պահպանել զով և մութ տեղում, որ  
այդտեղ չ'կարողանան մտնել ճանձեր և  
ուրիշ միջատներ: Բնդ հակառակը անիւղ  
պանիրը պէտք է պահպանել լուսաւոր  
տեղում և ուր կարելի լինի մաքրել օդը  
միշտ:

Երբ որ նկատումեն, որ պանիրը սկը-  
տումէ խանդարուիլ, այն ժամանակ նրա  
մէջտեղում մի ծակ են շինում և ածու-  
մեն նրա մէջը փոշիացրած չոր կաւիճ:  
Կաւիճը ծծումէ իւր մէջ խոնաւութիւնը,  
որ զլիսաւոր պատճառն է պանրի լուծ-  
վելուն, այսպիսով ուրեմն մեք արդելու-  
մենք նրա լուծվելը: Այնու ամենայնիւ  
այդպիսի պանիրը իսկոյն չ'պէտք է պահել,  
այլ գործածել շուտով կամ ծախել:

Պանիրը ճանձերից և որդունքներից  
նախապահպանելու համար գործ են ա-  
ծում այրած կամ մանրացրած ոսկրները:  
Այս անմէսա փոշիով ցանումեն պանիրը.  
կամ աւելի լաւ բոլորովին նրա մէջ են  
թաղում պանիրը: Սրա համար գործ են  
ածում փայտեայ արկղներ, որոնց չ'պէտք է  
փակել, որովհետեւ ճանձերը այնտեղ չ'են  
կարող մտնել և նրա մէջ ձուանք ածել,  
որոնցից յետոյ յառաջանումեն որդունք-  
ներ: Փայտի ածուխը փոշիացրած, կարող  
է նոյնպէս շատ զեղեցիկ միջոց դառնայ  
պանրի պահպանելուն: Բայց որովհետեւ  
ածխի փոշին շատ սաստիկ է ծծում խո-  
նաւութիւնը, ուրեմն և սաստիկ չորաց-  
նումէ պանրին, վասն որոյ գործածելուց  
առաջ պէտք է պանիրը թացացնել սպի-  
տակ զինու մէջ կամ թէ չափազանց թոյլ  
քացախում: Այսպիսով պանիրը թացա-  
նումէ, փափկումէ և լաւ համ է ստանում:  
Շին պանիրն էլ նոյնպէս շատ պրն-  
դացած ժամանակը եթէ թացացնուի սպի-  
տակ զինու մէջ կ'ստանայ բաւականին  
զեղեցիկութիւն թէ համի և թէ փափ-  
կութեան մէջ: Եթէ պանրի վերայ երևայ

պանրաորդն (շատ փոքր միջատ է) այնտեղ քսումեն աղ կամ ցանումեն կազնի ծառի ածխի փոշի, որով այդ միջատը իսկոյն մեռնումէ:

(Миръ практическ. жизни)

### 30. Յինկի կաթնամանների փասար

Մի քանի ժամանակ սկսել էին գործածել ցինկ մետաղից շինած ամաններ կաթի համար և շատ գովում էին, որ նրա մէջը կաթը չէր փուճանում: Բայց այժմ ընդ հակառակը բոլորը ընդդէմ են դրա գործածութեան. իսկ Սակսոնիոյ տէրութիւնը բողոքովին արգելեց: Պատճառը այն է, որ ցինկը կաթի հետ խառնուելով բազմապէս կանազան քիմիական խառնուրդներ, որոնք փասս են առաւել մատաղ կազմուածքին: Դօքթօռ Ֆիքսը ապացուցեց, որ այդպիսի կաթի մէջ կայ միշտ կաթնա - թթու ցինկի օքսիտ: Սրա համար պէտք է շատ զգուշանալ ցինկի կաթնամաններից:

(Русская хозяйка)

### 31. Կաթնի ամանների լուանալու հեշտ միջոց.

Թէ որչափ մեծ նշանակութիւն ունի այն ամանի մաքրութիւնը, որի մէջ, որ կաթը պահուումէ, դա յայտնի է ամենին: Բայց բոլորին յայտնի չէ ամենահեշտ և ամենալաւ միջոցը ամանները մաքրելու: Սրա համար, պէտք է այն տաք ջրի մէջ, որով լուանումեն ամանները, աւելացնել փոքր ինչ սօդա: Այդպիսով լուացուած ամանը ամենամաքուր է:

(Журналъ общепользныхъ свѣдѣній.)



### 32. Գրաստներին միջատներէից ազատելը.

Ամառուան շոքերում ձիերը, կովերը, ոչխարները, մինչև անգամ և շները շատ նեղանում են ճանձերից, մոծակներից, միեղներից, որոնք ժողովուրդ են նրանց բուրդի մէջ, կճոտում են անհանդիստ են աւում, և երբեմն սաստիկ նեղացնում են



նրանց և վնասում: Հիւոխային Ամերիկայում գրաստներին և ձիերին նախապահպանումեն միջատներից նրանով, որ քսումեն նրանց ոտները ձկնախւղով, որի անախորժ հոտը հեռացնումէ և փախցնում մոծակներին, պիծակներին և ճանձերին:

(Ստիննա պուռ թու)

### 33. Եղջիւրաւոր գրաստի կըճղակների հիւանդութեան դէմ միջոց.

Եղջիւրաւոր գրաստի կճղակների հիւանդութիւնը փոփոխական է: Սրա համար աւելի լաւ է և ճշմարիտ հետեւեալ միջոցը:

Այրուած պողպէղը պէտք է մանրացնել, փոշիացնել և կամաց, կամաց դրա վերայ ածել այս խառնուրդը, որ բաղկացած է 5 մաս ջրից և մէկ մաս ծծմբաթթուից, այնպէս, որ խմորի նման մի բան դուրս գայ, յետոյ հանելով եղջիւրային մասը բաժանելով ուռոյցից, այս խմորը դնել մերկ վէրքի վերայ:

Այս միջոցով հիւանդութիւնը շատ

շատ կորչումէ այնպէս, որ կենդանին մինչև երկու օր կարող է առանց կանգ առնելու մանգալ:

(Курлянд. губ. Вѣд.)

### 34. շում խողի-մսի վնասը:

Շատ ազգեր մեծ ատորժով գործ են ածում հում խողի միս, ինչպէս որ այժմ մեր մէջն էլ մի բանի տեղերում: Այդ կերակուրը սիրողների համար ամենաթանկագին մի բան է, բայց թէ որչափ վնասներ կ'յառաջանան դրանից, այդ չ'զիտեն: Լաւ քննելով նրա մսի բոլոր մասները ուսումնականները գտան զանազան փոքրիկ որդունքներ, որոնք խողի մորթելուց յետ բաւականին ժամանակ (մի քանի ամիս) ապրումեն դեռ նրա մսի մէջ: Երբ մարդ ուտումէ այդպիսի միսը որդունքները սկըսում են մեծանալ բազմանալ և ծծել մարդու հարկաւոր սննդարար մասները կերակրից: Այդ որդունքները մարդու մէջ անվանվումեն ճիճուէն եր: Առաւել այդ հիւանդութեան ենթարկվումեն Գերմանացիք, որովհետեւ նրանք շատ են գործա-

ճուժ խողի միտք: Բայց եթէ միտք ելինն  
և յետոյ ուտնն այն ժամանակ ամենեւին  
ֆնաս չեն տեսնիլ, որովհետև որդունքները  
տաքից սատկոտումեն. թէև բաւականին  
զիմացիուն են:

### 35. Անդամինների մտի բաղա- դրովթիւնը:

Անդղիայում մտի վերայ արած փոր-  
ձերը սպացուցին, որ որչափ պարարտաց-  
րած (չաղացրած) է կենդանին նրա մտի  
մէջ այնչափ փոքր է պարունակվում ջուր:  
Պարարտացրած եզնի մի զրվանքայ մտի մէջ  
պարունակվում են այնքան սննդարար նիւ-  
թեր, որչափ անպարարտացրած եզան եր-  
կու զրվանքայ մտի մէջ: Նրանից յետոյ  
արած քննութիւնները Բոհեմիայում հաս-  
տատեցին այս փորձերը բողբոլին: Սա ցոյց  
է տալիս ակներև թէ որչափ անհարմար  
են Պօլիցիայի նշանակած այն գնեցուցակ-  
ները (ТАКСЫ), որտեղ ուշք է դարձրած  
միայն մտի որքանութեան և ո՛չ նրա լա-  
ւութեան ու սննդարարութեան վերայ:  
Ակներև է, որ գնողները աւելի վատ մտին

երկաւատիլ զինն են տալիս. իրկ գրաստապահ  
և պարարտացնող տնտեսները զուր կորց-  
նումեն իւրեանց բոլոր աշխատանքը, ծա-  
խելով միտք միևնոյն գնով, ինչպէս ծա-  
խումեն միւսները վատ միտք, այդ այն-  
պէս, որ շատ անգամ նա կարողանում  
է իւր ծախքը զուրս բերել: Խորհուրդ  
կ'տանք մեր գնողներին աւելի ուշք դարձ-  
նել այս փաստին:

(Одесск. Вѣст.)

### 36. Կովի և եզնի միտք.

Եւրոպայում առաջ գործ չէր ան-  
վում կովի միտք. այլ եզնի, սրա համար  
միշտ նրանք պարարտացնում էին եզնե-  
րին, և շատ ժամանակ նրանք կարծում  
էին թէ կովի միտք եզնի մտից վատ է:  
Բայց երբ Յրանսիայում սկսեցին կովերին  
պահել նոյնպէս, ինչպէս և եզնին, համա-  
զուեցին, որ երկուսի մտին էլ միակերպ  
գնահատութիւն պէտք է տալ: Միայն շա-  
բունակ կիթելը կարող է կովի միտք եզան  
մտից լոյար շինել, բայց ՚ի սա պառաւ կովի  
միտք աւելի վատ է, քան ծեր եզնինը:  
Եւ այսպէս բայց ՚ի այս երկու պատահ-

մունքներից բոլորովին սխալ է կարծել կովի միսը վատ, քան եգնի. իսկ կովկասում մինչև անգամ կովի միսը համարվում է աւելի լաւ եգնի մնից:

Կերակրի մէջ առհասարակ գործ ածել զարգացած կենդանիներին, այսինքն որոնք բոլորովին հասել են զարգացման, որովհետեւ այդպիսի միսը աւելի աննշարար է, և մարսական ստամոքսի համար: Ֆրանսիայի շատ քաղաքներում շատ մատաղ կենդանիների միսը մինչև անգամ երբեմն բոլորովին արգելում են գործ ածել: Իտալիայի Տուրին քաղաքում առ հասարակ ընդունուած է կենդանիներն չի մորթել դեռ վեց ամսական չեղած ժամանակը:

(Другъ Здравія.)

### 37. Կատաղած եգների նուաճիլը.

Ամենին յայտնի է թէ որչափ դժուար է կատաղած եգներին նուաճել և հանդարտեցնել. բայց մի հեշտ միջոց կայ, որ նրա կատաղութեան ժամանակ նրան սանձահարում է: Պէտք է միայն ազին բարձ-

րացնել դէպի մէջքը և չուանով կապել եղջիւրներից. այդպիսով եգնը զրկում է եղջիւրների կամ գլխի շարժողութիւնից: Ամեն անգամ հենց զլուխը կ'ցածացնէ թէ չէ, իսկոյն կ'զգայ ցաւ, վասն որոյ ստիպմամբ միշտ զլուխը բարձր կ'պահէ: Ռէֆորմ. ազրիքօլ օրագիրը, որը հաշտրդում է այդ միջոցը, հաւատացնում է որ ամենակատաղե եգնը այսպիսով շատ ընտաննում է, և նրան կարող է մի մանուկ անգամ:

(Одесскій Вѣстникъ.)

### 38. Չիերի պահպանելը ախտներում.

Փորձով իմացուած է, որ ախտունբում աւելի քիչ խոնաւութիւն և քիչ վատ հոտ է ժողովվում, եթէ յարդի տակունքը չեն փոխում մինչև մի ամբողջ շաբաթ: Այն ժամանակ նրա վերի կողմում բաղկանում է մի կեղև, որ թոյլ չէ տալիս զազի շտանալուն և դուրս գալուն, մինչև անգամ ամառնային ամենատաք ժամանակը: Ընդ հակառակը եթէ փոխուի

տակունքը ամեն օր ախոռներում կ'լինի  
աւելի շատ վնասակար գազ (ամիակ):  
Փորձուած է, որ երբ յարզի տակունքը  
մինչև ութ օր մնումէ անշարժ ձիերը ու-  
րախութեամբ պառկումեն յառակի վերայ  
նրանց ոտները աւելի քիչ են խանդարվում  
և պայտերը (նալ) աւելի լաւ են մնում:  
Յարզի տակունքը անշարժ թողնելով, այ-  
նու ամենայնիւ աղբը պէտք է ամեն օր  
գուրս տանել. եթէ կամենումեն, որ ձին  
աւելի առողջ լինի:

(Одесскій Вѣстникъ.)

### 39. Չգուշութիւն ձիաների համար.

Հակակ (акація) ծառի տերևները  
շատ վնասակար են ձիաներին, վասն որոյ  
Ալստրիայում արգելած է այս ծառից ձիուն  
կապելը: Ահա՛ մի անդգուշութեան հե-  
տեանք: Մի վեց տարեկան առողջ և լաւ  
կրթած շառաթ ձի արածումէր Սեպտեմ-  
բեր ամսուայ մի առաւօտ-արհետական  
կերպով շինած մարգագետինում. ուրտեղ  
նա արգէն մի քանի շաբաթ շարունակ

արածած էր: Այս միջոցում այդտեղ շին-  
վումէր այգի, վասն որոյ ձիուն կապելին  
հակակի ծառից: Երեք ժամից յետոյ նկա-  
տեցին, որ ձին հիւանդացաւ և նա սաս-  
տիկ տենդ ստացաւ, անկանոն զարկ, ծանր  
շնչարգելութիւն, ոյժը թուլացաւ, աչ-  
քերը մթնեցին, ականջները կախ ընկան,  
ստամոքսը խանդարուեց, սաստիկ տաք երե-  
կցաւ և կենդանին դարձաւ համարեա  
անզգայ: Ուղեցան նրան մանացնել, բայց  
նա շատ թոյլ էր և չէր կարողանում ոտի  
վերայ կանգնել: Նրան խիոյն դրին ակտ-  
ուի մէջ և սկսեցին պատել տաք տապալակ-  
ներով, որ փոքր ինչ տաքանայ: Մինչև մի  
ժամ անկըր դադարեց, ձին սկտաւ հովա-  
նալ, շնչարգելութիւնը քիչացաւ. խի ա-  
րեան զարկը թուլացաւ: Ժամը տասին նա  
պառկեց և այդպիսի դուրթեան մէջ մնու-  
մէր մինչև ժամը 12-ը: Ոյժը փոքր առ-  
փոքր պակասումէր, կղկղանքը դադարեց,  
սրանից յետ նա կանգնած էր մինչև երեքի  
կէսը, յետոյ ընկաւ ձախ կողքի վերայ:  
Կամենում էր վեր կենալ, բայց ոյժ չու-  
նէր, նրան օգնում էին. բայց ամենայն մի  
մերձաւորութիւնը մարմնի որեւիցէ մի մա-

սին պատճառով ցաւ, որից նա թաւաչում էր: Ժամը Յին յանկարծ նա իւր սեպհական ոյժով ոտքի կանգնեցաւ, զետինը կոխատեց, թառանցեց և ընկաւ իսկոյն սատկած ձգուած վզով և երկարացրած ոտքերով: Հիւանդութեան ժամանակը ձիուն տալիս էին միայն ջուր: Յետոյ իմացան, որ անյայտ հիւանդութեան պատճառը եղել է հակակի տերեւների շատ քանակութեամբ ուտելը:

Գեղձի ծառը նոյնպէս վատ է ձիւրի և թէ միւս զրասանների համար, նա առաջացնում է կենդանու ստամոքսում հիւանդութիւն, որից նա սատկում է վերջապէս:

(Производ. и промысл.)

#### 40. Գառների գերացելը.

Այս միջոցը գործ է դնում Միացեալ-Նահանգներումն զատակերտներում և ըստ երևութին կարող է համարուել շատ գործնական միջոց: Հէնց որ գառնը սկսաւ հազիւ կանգնել ոտքերի վերայ, փայում են մի փոքրիկ, նեղ և մութ ախոռում: Այդ ախոռը ունի 8 քառանկիւնի

ոսնաչափ տարածութիւն. և նրա մջ կարողնէ տեղաւորուել մինչև 25<sup>0</sup> հատ գառն: Նայելով անտեսութեան կարելի է ախոռը աւելի լաւ նեղ շինել, որովհետև այստեղ զլխաւոր պայմանը նեղ բնակարանն է, որով գառները զրկոււմ են շատ շարժուելու և խաղալու կարողութիւնից: Յատակի վերայ դնում են մի փոքրիկ տաշտ, որ լքցնում են ալիւր խառնած փշտանքի հետ. իսկ ախոռի զանազան տեղերում վերելի կողմից կախ են տալիս նոր և թարմ խտախտորներ այնպիսի բարձրութեան մջ, որ գառները առանց նեղութեան կարողանան հասցնել իրանց գունչը: Գառները զրկուած լինելով, խաղալուց, ցատկաւելուց և վազելուց, որով նրանց ոյժը կ'ընթացանար, նրանք ախոռի սկսում են ուտել անզաղար. բայց աւքի տակ առէք, որ ոչինչ չ'են խնում վասն որոյ շատ շատ գերանում են: Ժամանակից ժամանակ գառներին քշում են այն ախոռը, ուրտեղ ոչխարներն են, որ նրանք կարողանան բաւախանուցով կաթ ծծել. բայց սա շատ մեծ նշանակութիւն ունի մի քնքուշութեան համար: Գառները բաժանված լինելով մայրերից ընդհա-

նուր ակտոսի մէջ նրանց չեն ճանաչում և առանց ընտրութեան ընկնում են ուրիշ ոչխարների ծծերի և սխոււմ են սխարժակով ծծել:

(Գործ-Ցեյթունդ.)

### 41. Արվի մի քանի ծծերի կաթը դադարելուն բժշկելը.

Շատ անգամ պատահումէ որ ամենայն կողմից լաւ կովը դադարումէ կաթը տալուց կուրծքի ծծերի մէկից կամ թէ մի քանիսից, այնպէս որ կաթը յանկարծ պակասումէ առաջուայ որքանութեան հետ համեմատելով:

Սա յառաջանումէ լաւ չնայելուց, ուշք չզարձնելուց լաւ չպահանջելուց և մանաւանդ լաւ չկթելուց, այնպէս որ նրանց մէջ մեռումէ մի քանի օր շարունակ շատ ժողոված կաթ: Երկու, երեք օր միտք չզարձնելուց արդէն կովը կ'ստփորի առաջուանից առելի քիչ կաթ դուրս հանելու: Այդպէս կովերին, որոնց կաթը դադարումէ, զնահատումեն հինգ կամ վեց անգամ առելի քիչ և նրանց համարումեն անուղղելի:

Սակայն փորձը ցոյց է տալիս, որ ո՛չ մի բան այնքան հեշտ չէ և հասարակ, ինչպէս վերականգնելը կաթի դուրս դալուն վնասուած ծծերից, որոնցից էլ կաթ չէ հոսւում: Արա համար հարկաւոր է յղեւթեան վերջին օրերում ծնունդից երեք շաբաթ առաջ այս վնասուած ծծերից օրը երկու կամ երեք անգամ կթելը Յորթը բերելուց յետ կաթը ՚ժողովուի գոգուած ծծերին և կ'սխոււի հոսել նախկին որքանութեամբ:

(Русская Хозяйка.)

### ԿԱԹՆԱՏՈՒ ԿՈՎԵՐԻ ՆՇԱՆՆԵՐԸ.

(Труды Вол. Экон. և Пабствъ)

Կաթնատու կովեր ճանաչելը ամենահարկաւոր պայմաններից մէկն է խրոքանջւեր անանտութեան մէջ: Այս հարցը շատ ժամենակից ՚ի վեր քննուած է եղել և այժմ էլ դեռ քննվումէ, բայց մեք այստեղ կ'բերենք բաւականին հաւանական շարադրութիւնից մի աղիւսակ մարմնի քանազան մասների յատկութեանց:

Կաթնատու կովը պէտք է ունենայ մարմնի բոլոր մասերում թեթեւութիւն բարակութիւն, քիչըն թիւն մէջէ անգամ մի փոքր թուլութիւն: Մարմնի բոլոր յատկութիւնները կարելի է բաժանել 3 մաս գլուխ և նրա մասերը, իրան և նրա մասերը՝ և կուրծիք և միւս փափուկ մասերը: 1

### 43. Գլուխ և նրա մասերը.

Գլուխը այնքան մեծ ծաւալ չունի, թեթեւ է, աւելի երկայնացած, քան կարծ կամ քառանկիւնի, բացի դա չոր, անմիս և հեշտ շարժելու կենդանի: Ճակատը ներս բնկած, լայն է, աչքերի մէջ և եղջիւրների մօտ նեղ. խակ եղջիւրներից զէպի աչքերը եկած ժամանակը ունի փոքր ինչ ուռեցկոտութիւն, Գ ու ն չը կողոր, հաստ, թարմ, զով և պատուած կպչուն, զեղնագոյն նիւ թով:

1 Այս յօդուածը քաղուած է Նօրէի վաշտի թիւն շարադրութիւնից, որ գովասանութեան արժանի է եղել Պալըկայէի զիւղատնտեսական ընկերութիւնից:

Ք թի ծ ա կ ե թ ը աւելի փոքրիկ, սակայն բաւականին բաց:

Ն թ ու ն ք ն ե թ ը (պոօշները) սրչափ կարելի է հաստ:

Բ ե թ ա ն ը բաւականաչափ կտրուած և բաց:

Ե ղ ջ ի ւ ը ն ե թ ը փոքրիկ կամ միջակ, անհարթ, երկու կողմից տափակած, բարակ, աւելի տափակ քան կողոր: Եղջիւրները պէտք է բարակ մանրաթիւններից լինին բաղկացած, սպիտակաւուն, փայլուն և չունին այն յատկութիւնը, որ ունին եզնի եղջիւրները:

Ա չ ք ե թ ը՝ աւելի բարձր, հայեացքը քաղցր և կենդանի, բայց անմեղ և շատ համեստ:

Ա թ ա և ա ն ու ն ք ը քնքոյշ, բաւականաչափ բաց, և շուրջը փոքր ինչ զեղնագոյն:

Ա կ ա ն ջ ն ե թ ը բարակ, աւելի երկայն բանուր գրաստի ականջներից, փափուկ, փոքր ինչ զէպի յետ ծռուած, մէջը պատուած փոքր ինչ զեղնագոյն նիւ թով և փոքր ինչ բրդոտ:

Վ ի զ ը երկան և շարժւող, ինչպէս այծի վիզը և նրա ներքի կողմը կաշին քիչ է:

#### 44. Իրան և նրա մասերը.

Իրանը երկայն, ըստ ձևոյն նման ձուրի և հաստատուած է կարճ ոտքերի վերայ: Ոտն երբ բարակ, առաջի ոտները փոքր ինչ կարճ ետեխներէց:

Ոտն երի ծայրերը բարակ, բոլոր ոտնի ոսկրի և եղջիւրների նման:

Ուսերը փոքր են, չոր, նրանց ներքեւի ծայրը դուրս է ցցուած և նրա մօտ կայ մի փոքրիկ խորութիւն այնպիսի լայնութեամբ, որ նրա մէջ կարող են պարունակուել 3 մատ: Ուսերի մէջ ընկած վրէ մօտ բարձրութիւնը բարակ է և ցածր:

Վզնոց կամ վրն տակի կախ ընկած միտը փոքր է, մէջտեղում կոշո, երբեմն ծալծալ և լանջերի յետի ծայրում փոքր ինչ յետ կախ ընկած:

Կրծոսկրը բարակ, նեղ և ցածրի կողմում անկողոր:

Լանջքը (ղեօշը) փոքր այսինքն կարճ, շալ սխմուած առաւել ուսերի մէջ:

Կողքերը կարճ, բարակ, աւելի տափակ, քան ծռուած, սկսուած մէջքի ողնաշարից:

Ողնաշարը հորիզոնաձև, աւելի չոր, քան հաստ, կամ մնայլի, մէջքի կամ նրանից փոքր ինչ յետ գունդումն խորութիւններ:

Գօտատեղը (մէջքից ցածր) երկայն, լայն և լղար:

Նրանքը (աւելի յետի կողմը) լայն անմիա տափակ և անկողոր

Փորը արձակ, սակայն ո՛չ չափազանց, որովհետև այն ժամանակ մեծ զանազանութիւն կ'յառաջանար լանջքի հետ. փորը բաւականին կողոր է և կախ ընկած առաջին կողմում:

Կոնքը կամ նստատեղը լայն է, խոր և բաւականին զարգացած երկայնութեամբ:

Կողքերը լայն են երկայն վերեւից ներքեւ:

Ազիւն կամ Պօլ լղար, կողորուն, շարժվող, երկան և վերջումը փունջով, որ ծնկնից քաշ լինի կախված:

Բուրդը կարճ, անխիտ, բարակ և սառնակ փայլուն:

#### 45. Կուրծքը և միւս մասերը.

Կուրծքը մեծ է, փափուկ, թոյլ-



կթելուց յետ, և առաձգական-երբ նա լիքն է կաթով: Նա պարունակվում է ազդրների մէջ, մանաւանդ երբ նա ձգուած է բարձրից քաշ և նման շիշի: Եթէ նա ունի քառանկիւնու կամ մի ուրիշ ձև, այն ժամանակ նա նման է մեծ բարձերի, ու ձգուած են դէպի յառաջ: Կաշին կուրծքի վերայ բարակ է, փափուկ, զեր, լայն և պատուած կարծ. բարակ և մետաքսեայ մազերով: Կուրծքի մակերևոյթի վերայ երևում են շատ ջգեր, որ տարածվում են ծուռ ուղղութիւններով կամ օձաձև սփռվում են ամեն կողմ:

Ծ ե բ ը բաւականին մեծ են, երկարացած, ընդարձակ ծակերով, հարթ, փայլուն, ուռչող և սնդացող: Կթելուց յետ փափուկ են, զեր, զոյնը այնպէս, ինչպէս կուրծքի վերայ կաշին է. զետեղուած են կանոնաւորապէս:

Ձ ղ ե բ ը ծնկերի և ազդրների մօտ և յետոյքի կողմերում շատ շատ են, հաստ, ծռված և երևում են փոքր ինչ բարձրացած բարակ կաշիի տակից:

Կ ա շ ե ն բարակ է, քնքոյշ, խղալի, փափուկ, դիւրոշարժ, մարմնից հեշտութեամբ

քաշվում է և ազիի տակ շատ ծալքեր է ձևացնում, նոյնպէս սևուական անդամի և յետոյքի կողմերում:

Ա զ զ բ ն ե բ ը (շափակաները) մեծ են, միմիանցից հեռու, մեծ մակերևոյթ ունին, սակայն շատ մաշի չեն և աւելի տափակ են, քան կողր:

Կ ա թ ն ա յ ի ն և փորի տակի ջգերը երկայն են, հաստ, այլքանման, ծռւմված, երկու ծայր են բաժանվում և անհետանում են փորի տակ մի խորութիւնում, ուրտեղ հեշտութեամբ կարող է մանկ մատի կէսը:

#### 46. Կենդանիների փորի ուռչելը.

Այս հիւանդութիւնը պատահում է շատ անգամ որոճացող կենդանիների մէջ, կանաչ և հիւթալի կերակրից յետոյ:

Ն շ ա ն ն ե բ ը սրանք են. փորը սաստիկ ուռչում է և խիստ ժամանակը (դահիւրայի) թմբկի ձայն է հանում: Ձեռոյ կապվում է ախորժակը և փխտում որոճածը, երևում է սաստիկ անհանգստութիւն, ախորժիւն, արող շնչառութիւն և այլն:

Շատ շուտ է հիւանդութիւնը սաստ

կանուժ: Եթէ շուտով օգնութիւն չ'հասցնուի, մինչև կէս կամ մի ժամ կրմեռնի կենդանին հարուածի, խեղդուելու կամ աղբի տրաքելու նման:

Պատճառները սրանք են. կանաչ խոնավ խոտ ուտելուց, գեղի խոտ ուտելուց, եթէ քաղցած փորով յանկարծ շատ ուտի, կամ ուտելուց յետ շատ ջուր խմի: Նոյնպէս նոր և իւզալի առուցյա ուտելուց կամ ուրիշ իւզալի խոտերից, քանի որ ծաղկած չեն կամ թէ կաղամբի և գազարի նոր սերմերը ուտելուց, նոյնպէս գեանախնձորից՝ ծաղկած ժամանակ:

Բժշկութիւնը բաղկացած է նրա մէջ, որ վերջացնեն այն գաղերը, որոնք ժողոված են ստամոքսի մէջ: Սրա համար գործ են անում ն շ ա դ ի ը ի ս պ ի ը տ կամ եղիլի կալի: Եղնեթին տալիս են առաջինից վեր առնելով մի բաժակ ջրին նրանից երկու կամ մէկ զրկալ, իսկ ե դ կ ի կ ա լ ի ն պէտք է վեր առնել մի զրկալ մի բաժակ ջրին և այդ կրկնվում է իւրաքանչիւր տասը կամ տասնուհինգ րոպէում: Եթէ այդ զեղերը չ'կան, կարելի է գործ անել հասարակ մոխրաջուր, սաստիկ սապոնաջուր

և պօտաշ՝ խոտնած ջրի մէջ (1-2 լոտ): Նոյնպէս կարելի է տալ փոխացնող դեղեր թէրեմէնթինի եղ, երիցուկ, (մի բոյս է սպիրտակ թերթերով) սամիթ և այլն՝ խաշած. կարելի է նոյնպէս լողացնել կամ ցուրտ ջուր անել վերան, կամ թէ լեզուն քաշ տալ շուտ շուտ, փորի ձախ կողմը սկսել խաշածե երկու ձեռքով: Մինչև մէկ կամ կէս րոպէ կ'փսխի, յետոյ մի քանի անգամ էլ. մինչև եօթը րոպէ ստամոքսը առ հասարակ կ'դատարկուի այդ գազերից:

(Міръ Практ. жизни)

#### 47. Հաւերի ձու անելը

Անզղիացի հաւապահները վերջին ժամանակներումս ապացուցին, որ հաւերը շատ չ'պէտք է պահել. պէտք է միշտ փոխել երբ հաւը կ'հասնի հինգ ասրեկան հասակին: Նրանք գտած են, որ հաւի ձուարանում, կան ո՛չ աւելի 600-ից ձուանք. ուրիմն հաւը իւր բոլոր կեանքում պէտք է անի 600 ձու և ինն տարում հետեւեալ որքանու թեամբ (այդ թիւը կազմումէ նրանց կեանքի ժամանակամիջոցը):

## Առաջի տարուայ ընթացքում

—	15-ից մինչև	20 ձու	
Երկրորդ	— 100-ից	— 120	—
Երրորդ	— 125	— 135	—
Չորրորդ	— 100	— 125	—
Հինգերորդ	— 60	— 80	—
Վեցերորդ	— 50	— 60	—
Եօթներորդ	— 35	— 40	—
Ութերորդ	— 15	— 20	—
Իններորդ	— 1	— 10	—

Ընդ ամենը ինն տարում 496-ից  
մինչև 600 ձու:

Այս աղևսակից երևում է, որ հարկաւորութիւն չկայ պառաւ հաւերին երկայն պահել, որոնք չեն կարող մինչև անգամ իրանց մնաւածն էլ վարձատրել:

Այս տեղեկութիւնս տարւած էր Մենաժիւ Ֆրանսե-ում: Ես մի և նոյնը փորձեցի և ստացայ բոլորովին այդպիսի հետևանք, որ գտել էր Անգլիացւոյ համբերող բնութիւնը:

(Русская хозяйка.)

## 48. Սոխը հաւերի համար.

Անգլիական մեզ ծանօթ մի լրագրում հաղորդում են, որ հաւերին սոխով կերակրելը չափազանց լաւ է: Նա նախապահ պահանջ է հաւերին զանազան ցաւերից, որիորի բորբոքուելուց և վերքերից, զլիսի և աչքի ցաւից և այլն: Վասն որոյ խորհուրդ են տալիս մանրացրած սոխը հացի վիշտանքի հետ խառն կամ առանձին տալ հաւերին շաքաթը երկու կամ երեք անգամ այնքան, որչափ որ նրանք կարողանան ուտել:

(Журн. общ. свѣд.)

## 49. Թռչուններին վնասող բոյսերը.

Դ ա ո ն ն ու շ ը ամենասաստիկ թոյսերից մէկն է Թռչունների համար, ուստի և նրան ուտելով թռչունները ստանում են զլիսի պտոյտ, ընկնում են և մեռնում: Սաղերի համար կ ա ր ս ո ն ը այնքան վնաս է և բաղերի համար շաքարը, որ մի լոտ կարող է թունաւորել ծեր թռչնին էլ: Հնդկահաւերին շատ վնաս է մ ա տ ա ն ե

բ ո յ ս ը (դ ի ժ ի թ ու լ լ ի ս) սաստիկ չար-  
չարումէ թռչուններին և եթէ նրանք չեն  
մեռնում շուտ, ապա լղարում են և յե-  
տոյ մեռնում: Յ ի կ ու ա ա ն էլ մի և  
նոյն վասն է տալիս, բայց երբեմն փայտի  
իւրով կարելի է լինում առողջացնել:  
Այս բոյսի սերմերը բազերին զխացառու-  
թիւն են պատճառում,

Սագերը շատ անգամ ուտումեն խ ա շ  
խ ա շ ի տերեւները և համարեայ ո՛չ մէկ  
անգամ չեն աղատվում:

(Ժուրնալ դէ քօննեսանա իւթիլ.)

## 50. Սագերի և աղանիխների մէջ արունները ճանաչելու միջոց.

Ոչ մէկ թռչունների մէջ արու և  
էգ ճանաչելը այնքան դժուար չէ, որչափ  
փոքր սագերի և աղանիխների մէջ, վասն  
որոյ շատ տնտեսներ բաւականին սխալվու-  
մեն մորթելու կամ բազմացնելու ժամա-  
նակ: Ահա միջոց, որը ինձ նորերումն  
սովորեցրեց մի փորձառու ծեր մարդ: Նրա  
ասելով—արու և էգը ճանաչելու համար  
պէտք է թռչնի կտուցից բրունել, եթէ նա

էգ է, նա կ'ձգի դէպի ինքը իւր կտուցը  
ուղիղ, հանդիստ և հանդարտ, իսկ եթէ  
արու է, նա դուրս կ'ձգի ձեռներից գլուխը  
թափտալով և իբր բարկացած:

ԿԱՆՈՆԱՒՈՐ ՇՈՐ ԼՈՒԱՆԱԼԸ.

(Русская Хозяйка)

## 51. Սապոն.

Լուանալու համար միշտ հարկաւոր  
է այնպէս ջուր, որի մէջ կայ պ օ տ ա շ  
կամ ս օ դ ա: Ամենայն ծառի մոխրի մէջ  
կայ պօտաշ, սա է պատճառը, որ հասա-  
բակ ժողովուրդը շատ անգամ լուանալու  
համար գործ է ածում մոխրաջուր, ինչ-  
պէս որ անումեն մի քանի տղէտ տիկիներ  
էլ: Մոխրաջուրը շատ կծու է, եթէ մոխրա-  
ջուրը շատ լինի, ճերմակեղէնը սաստիկ  
կ'փուչանայ, բայց ՚ի սա լուանալն էլ օդ-  
նումէ նրա փուչացնող զօրութեանը բայց  
որովհետև բոլորովին առանց մոխրաջրի չ'է  
կարելի, ապա հարկաւոր է նրա հետ մի  
այնպէս բան խառնել, որ նրա կ'ծու-  
թիւնը պակսեցնի: Ահա այս պատճառաւ.

երևեցաւ և սապոնը, որ բաղկացած է պօտաշից և զանազան իւղային մասերից:

Սապոնը փրփրելով ջրի մէջ միանումէ բոլոր իւղային մասուկներին հետ, որ զբռնվումեն ճերմակեղէնի վերայ և որ յետոյ ձեռք քսելով ճոթից բաժանվումեն և խառնվում ջրի հետ: Ուրեմն լուանալուց սապոնը չ'ի փուչանում, այլ ընդհակառակը շատանումէ. միայն փոխումէ իւր առաջուայ դրութիւնը, այսինքն պինդ մարմնից դառնումէ հեղուկ: Պէտք է նկատել, որ պնդութիւնը սապոնի ամենահարկաւոր յատկութիւնը չէ. եթէ շատ քանակութեամբ եղ կամ սապոն խառնուի պօտաշի հետ կ'ստացուի հեղուկ. իսկ գործարաններում զանազան նպատակների համար զանազան ձևեր են տալիս: Պինդ և կոշտ սապոնը իւր մէջ պարունակումէ աւելի շատ պօտաշ, ուրեմն աւելի կծութիւն ունի, քան թէ հեղուկը, կամ թէ աւելի փափուկը: Այս հիման վերայ պէտք է շատ զգոյշ վարուել զանազան շորերի համար պատան ջոկելու ժամանակ: Ինչքան կոշտ ու կոպիտ է ձոթը, այնքան աւելի կոշտ սապոնով կարելի է լուանալ. իսկ ինչքան

քնքոյշ և բարակ է, այնքան պէտք է կոշտերից զգոյշ մնալ:

## 52. Լուացքի ջուրը.

Լուացքի համար ջրի վերայ էլ պէտք է բաւականին ուշք դարձնել. և կարելի է ասել, որ լուացքի լաւութիւնը կախուած է բոլորը ջրի յատկութիւնից: Բայց խոտովանենք ճշմարտը, որ մեզանում շատ քիչ ուշք են դարձում սրա վերայ և երբեմն պատահումէ, որ անգութ լուացարարները լուանումեն ամենավատ ջրում: Լուանալու համար ամենալաւ ջուրը ամենամաքուրն է. ահա այս է զլիաւոր միջոցը-որի վերան պէտք է դարձուցանել լուացարարների ուշադրութիւնը: Եթէ ջուրը մաքուր չէ, այսինքն պարունակումէ իւր մէջ զանազան աղեր, զօրօրինակ կիր և ծծումբ, որ շատ անգամ պատահումէ. այն ժամանակ լաւ կ'լինի, որ այսպիսի ջրի մէջ ճերմակեղէնը բնաւ չ'մտնի:

Կիրի և ծծմբի օքսիդները փուչոցնումեն սապոնի զօրութիւնը և լուացք չի լինիլ, չ'նայելով լուացարարի բոլոր ջանքերին ու ներութիւններին, և ճերմա-

կեղէնը կ'փուռանայ և շուտ կ'փուռ զայ: Սրա համար եթէ նկատուեց կիր ջրի մէջ, լուանալուց առաջ պէտք է մի քանի անգամ եռտալ և յետոյ գործածել: Իսկ եթէ ջրի մէջ կայ ծ ծ մբ ա թ թ ու ի զօրութիւն, այն ժամանակը եռտալը քիչէ պէտք է ածել փոքր ինչ պօտաշ կամ սօդա: Եթէ գրանք չկան կարելի է գործածել և հասարակ մոխիրը, որովհետեւ նրա մէջ կան պօտաշի մասներ: Առաւել պօտաշ պէտք է ածել հորի և աղբիւրի ջրի մէջ, եթէ նըրանցով պէտք է լուացք անուի, որովհետեւ սրանց մէջ աւելի են լինում կրի և ծըծումբի զօրութիւններ, քան թէ գետի և լճի ջրի մէջ:

Բայց եթէ լուացքի ջրի մէջ կայ ամենափոքր մասն անգամ ա ր ծ ա թ ի -Աստուած մի արասցէ, որ մի կաթիլ էլ ածէք ճերմակեղէնի վերայ. հեռու, զգոյշ կացէք: Եթէ դժբաղդաբար ճերմակեղէնը այդպիսի ջրում լուացուեց, նա անձուռնի գեղնութիւն կ'ստանայ, որին վերջացնելու հնար չ'կայ:

Այս անտեսներին, որոնք բնակվում են ծովի ափում, կասե՛նք, որ ծովային ջուրը

ամենեին պէտք է ի գայ լուացքի համար. որովհետեւ նրա մէջ կայ շատ մետաղի և աղի զօրութիւններ, որոնք հակառակ են սալմանին: Բայց եթէ ուրիշ ջուր չ'կայ. ծովայինն էլ կարելի է լուացնել. միայն պէտք է ածել նրա մէջ ս օ դ ա: Առաջ ջուրը կ'պղտորի, յետոյ պղտորութիւնը կ'անցնի և կ'նստի տակը և ջուրը կ'մաքրուի, որ թէև խմել չ'ի լինիլ. բայց լուացքի համար այնքան էլ լաւ կ'լինի. ինչքան և գետի ջուրը:

Այս նախազգուշութիւններից յետ դառնանք լուացք անելուն և նրա միւս զործողութիւնների վերայ խօսենք:

### 53. Ճերմակեղէն և լուացար.

Հարկաւոր ենք համարում նախ ասել մի քանի խօսք և ճերմակեղէնի պահպանելու վերայ, դեռ չ'մտած լուացքի մէջ: Ամենամեծ պնտնը նա է, որ աղտոտ և և անմաքուր շորը անլուաց չ'պէտք է թողնել շատ ժամանակ: Սրա պատճառը հասկանալի է, որչափ ներկար ժամանակ է

մնում ճերմակեղէնը այդպիսի զրութեան մէջ, այնքան աւելի է մնում նրա մէջ կեղտը և այնքան դժուար է նրա մաքրելը: Միքանի տներում ճերմակեղէնը լուանում են ամառը մի անգամ, բայց լաւ կ'լինէր եթէ այդ միջոցը երկու անգամ կարճացնուէր: Այս ժամանակամիջոցում ժողովված ճերմակեղէնը պէտք է դասաւորել մէկ մէկ, որ յետոյ երկար ժամանակ նրանց ետ ևից ընկնելու ստիպմունք չ'լինի: Սա կ'հեշտացնէ թէ տալը և թէ ստանալը լուացարարներին, մանաւանդ եթէ փոքրիկ տետրակի վերայ զրուի համարներով բոլոր ճերմակեղէնը: Ճերմակեղէնը միշտ պէտք է համարներով լինի: Այստեղ յարմար համարելով, փոքր ինչ խօսենք և լուացարար ջոկելու համար: Աւելորդ է յիշել, որ հիւանդները և անզօրները ամենևին պէտք չեն դայ այս գործում, բայց աւելի երևելին նա է, որ լուացարարները այն կանանցից չ'լինին, որ մի գրօշի տեղ էլ չեն դնում իւրեանց տիկիկների հրամանները և խորհուրդները և լիզուանի են: Լուացարարը պէտք է լի լուացքի համար արած բոլոր խորհուրդները, մինչև անգամ այն ժամանակ

նակ էլ եթէ նրան անհաւատալի և զուր երևում լինի:

Սեղանի ճերմակեղէնի վերայ պէտք է աւելի ուշադրութիւն դարձնել և զգուշանալ իւզալի բծերից, իսկ եթէ պատահեց, պէտք է իսկոյն լուանալ տալ այդ բիծը. եթէ չէ պէտք է սփռոցը կամ անձեռոցի կը շուտով դէն ձգել:

## 54. Լուացքի թրջելը.

Այժմ դառնանք իսկ լուացքին և յառաջ բերենք մի գործունեայ փորձառու և անտես կնկայ նկատողութիւնները այս մասին:

Այս անտեսի կարծիքով լուացքի օրը միշտ պէտք է երեքշաբաթի ձգել. իսկ երկուշաբաթ օրը պէտք է տեսնել պատրաստութիւնները, դնել պղինձները, նրանց մէջը ջուր ածել և ծածկել, փայտերը պատրաստել վառելու համար, և այլն: Բայ ՚ի սա պէտք է սկսել թրջել այսինքն ճերմակեղէնը դնել շատ թոյլ և փոքր ինչ տաք մոխրաջրի մէջ: Բայց այն տեղերում, ուր ձերմակեղէնը աւելի շատ է կեղտոտ

ված. պէտք է լաւ սապոն քսել: Այս գործողութիւնը պէտք է զգուշու թեամբ և եռանդով կատարել ինչքան զգուշաբար է սապոնուած ձերմակեղէնը, այնքան հեշտ կ'լինի նրա լուանալը և այնքան քիչ կ'փուչանայ, եթէ ձերմակեղէնը շատ քնքոյշ չէ, կարելի է գործ ածել կոշտ սապոն: Կատարեալ մաքրելու համար կարելի է ջրի մէջ դնել սապոնի մի քանի կտորներ և ձերմակեղէնը սապոնելուց յետ մի քանի անգամ շրջել այս ջրի մէջ, որ սապոնը մտնի ձերմակեղէնի բոլոր մասերը:

## 55. 1. Ուսացքը և լուացարանը.

Պէտք է նկատել, որ առաջին լուացքը շատ տաք ջրի մէջ չ'պէտք է անել, որովհետև կեղաը այնպէս կ'մտնի ձերմակեղէնի մէջը, որ յետոյ դժուար կ'լինի նրա լուանալը:

Ամենին արդէն յայտնի է, ձեռնով հարելու եղանակը, և ինչպէս երևումէ, սրա վերայ խօսել հարկաւոր չէ. բայց մեք ուրիշ կերպ ենք մտածում. նոր, անփորձ լուացարարները առ հասարակ շորը քսու-

մէն իրանց ձեռների կաշիին: Իսկ փորձառու լուացարարները շորի մէկ մասը քրտում են միւս մասին, որով և գործը աւելի յաջող է յառաջ գնում: Այս տեսութիւններից հասկանալի է, որ հարելը սապոնի օգնականութեամբ ձերմակեղէնին տալիս է նախկին սպիտակութիւնը:

Երբ որ ձերմակեղէնը լաւ հարուել է մէկ անգամ ջրի մէջ, երկրորդ անգամը պէտք է նրան, հարել այնպիսի տաք ջրի մէջ, ինչքան որ միայն ձեռքը կարող է համբերել: Աւելի մաքրութեան համար պէտք է նայել երկրորդ հարելու թամանակ կեղտ արդեօք չ'կայ և եթէ երևի մի քանի տեղերում կեղտոտութիւն, չ'նայելով միւս կողմերի մաքրութեան, պէտք է հարել երրորդ անգամ:

Վերջնական հարելուց յետ պէտք է խոյն ձերմակեղէնը քաշ տալ: Սա նրա համար է անվում, որ սապոնի և ուրիշ մասնիկները անհետանան և հոտ չունենան շորերը. Զուրը այս բանի համար պէտք է մաքուր լինի բոլորովին միայն փոքր ինչ աղի խառնուրդով (վեղրին մէկ չայի զըրկալ): Աւելի զգուշութեան համար լուա-



ցած շորերը ժողովումեն քաթանի տոպ-  
 բակի մէջ և ցածացնում պղնձի մէջ, որ  
 եւ եկած ջուրը շորը չ'փուչացնի: Պըլն-  
 ձումը տասն բոպէն բաւական է մնալ: Յե-  
 տոյ մէկ էլ տաք ջրի մէջ ողողել և յետոյ  
 ցուբտ և լեղակ տուած ջրի մէջ: Կաւ  
 մղումեն և քամում, այնու ամենայնիւ  
 զգուշանալով, որ յանկարծ չի պատռեն  
 ձովթը. զրանից յետոյ մնումէ միայն կախ  
 տալ չորացնել: Մի քանի տեղերում ձեր-  
 մակեղէնը տանում են ջրի փիւր և փայ-  
 աի խփելով են մաքրում: Թէ և ճշմարիտ  
 է այդպիսով շորերը մաքրվում են. բայց  
 շատ շուտ են մաշվում: Կուսացքը կանգնած  
 պէտք է անել և ո՛չ նստած, ինչպէս մի  
 քանի տեղերում անում են: Առաւել միտք  
 դարձնելու է նրան, որ լուացարանները  
 փակուած տեղերում լուանան շորը ձմեռ  
 ժամանակ, այլ ո՛չ բայց օդում, որովհե-  
 տև զրանից շատ վատ հետևանքներ կ'ու-  
 նենան լուացարանները, իւրեանց առողջու-  
 թեան կողմանէ: Գրա համար կարելի է  
 ընդհանուր տաք և ծածկված լուացա-  
 րաներ շինել տալ ինչպէս մի քանի տեղե-  
 րում շինել են:

## 56. Լ՝մենաանվաաս լուացումն.

Մի թէի թաա բրինձ վերառէք մէկ  
 քանի անգամ լաւ լուանալով ցուրտ ջրի մէջ  
 ածեցէք նրա վերայ հինգ բաժաի ջուր և  
 եփեցէք, մինչև հատիկները բոլորովին կակ-  
 ղին և քամելով մաքուր սրբիչի մէջ  
 թողէք հովանայ Այս միջոցում պատրաս-  
 տեցէք տասնուհինգ դառն նուշից նուշի  
 կաթ աշխատելով որչափ կարելի է թանձր  
 հանել և շատ ջուր չ'ածել: Երբ եփած  
 բրինձը կ'հովանայ բաւականին, ածեցէք  
 նրա վերայ այդ կաթը և աւելադրէք երկու  
 սեղանի զրկալ. վարդաջուր և մէկ զրկալ  
 օղրկօլօն: Այս խառնուրդով պէտք է լու-  
 անալ ամեն առաւօտ. բաւականին որքա-  
 նու թիւն վերառնելով օփի մէջ:


(Ժուրնալ դէ դեմուաղէլ)

## 57. Չեռքեր սպիտակացնե- լու միջոց.

Եփեցէք ամենասպիտակ և շատ-ախև-  
 բաւոր դեանախնձորը, քչկիւցէք, լաւ  
 մանրացնելով տրորեցէք և մի փոքր կաթ

բառնեցէք: Այս հասարակ միջոցք ամենա-  
թանգ կոսմետիկական միջոցների չափ էլ  
լաւ ազդեցութիւն ունի:

(Миръ практ. жизни)



ՓՈՐՐ ԵՐԵՄԱՅՈՅ ՎԵՐԱԿՈՐԸ.

(РУССКАЯ ХОЗЯЙКА)

— 58 —

Ծննդենից յետոյ առաջին ամսնե-  
րում երեխայքը համարեա անկուշտ են:  
Նթէ կատարուէր նրանց կամքը, նրանք ամ-  
բողջ օրը մօր կամ զահեակի ծծիցը չ'էին  
կարուիլ: Յերեկը բաւական է նրանց կե-  
րակրել ժամը մէկ անգամ կամ երկու  
ժամը մէկ անգամ: Գիշերը պէտք է նրանց  
կերակրել աւելի քիչ, որ կերակրողը ժա-  
մանակ ունենայ հանգստանալու: Երեխայոց  
պէտք է սովորացնել կերակուր խնդրել  
զիշերը երկու անգամ կամ շատ երեք  
անգամ: Երբ որ նրանք երկու կամ երեք  
ամսական կ'դառնան, նրանց ամենեւին  
պէտք է չ'կերակրել զիշերը կամ մէկ ան-  
գամ միայն:

Երեխային ծիծ տալու ժամանակ,  
թող'ք հանդարտ ծծի, մինչև ինքը նրան  
թողնի: Երեխայքը աւելի հանգիստ քնու-  
մեն զրկումը, այդ ժամանակ պէտք է  
նրանց դնել օրօրոցի մէջ, որտեղ նրանք  
աւելի սպահովուած են, քան թէ մօր կամ  
զահեակի ձեռներում:

— 59 —

Շատ անգամ երեխայքը ցերեկը շատ  
են քնում. նրանց չ'պէտք է զարթեցնել:  
Իսկ եթէ քունը շատ է շարունակվում,  
սպա պէտք է եղբախակել, որ զահեակը  
հիւանդ է և պէտք է շուտով ուշք  
զարձնել: Պատահումէ անսնել առողջ  
երեխաներ, որ ունին առողջ և լիքը զա-  
հեակներ, իսկ ծծկուց փոքր ինչ յետոյ  
երեխայքը քնում են ինչպէս արջ հա-  
մարեա անպաղար և ցոյց չ'տալով ո՛չ  
ախորժակ, ո՛չ ուրիշ պահանջներ.  
Բայց այդ առ հասարակ լինումն թոյլ և  
վատ կերակրվող երեխաների մէջ: Նւ այս-  
պէս եթէ ծծմօր կաթը չունի բաւականին  
ունդարար մասնիկներ, այն ժամանակ երե-  
խայոց քունը լինումէ երկայն: Բնութիւնը

լատ երևութիս քնով է վարձատրում կե-  
րակրի պակասութիւնը: Ուրեմն շատ եր-  
կայն քունը դառնումէ ասպացոյց կերակրի  
պակասութեան և այդ ժամանակը ծծմօր  
պէտք է զգուշութեամբ քննել: Շատ ան-  
գամ տեսնումենք, որ կաթը բողբոջվն  
լաւ չէ կամ շատ ջրայն է կամ խոսճոյա-  
կան (творожистый). որոյ պատճառաւ  
երեխայի հասակը կանգ է առնում: Երե-  
խայի հասակը աստիճանաբար մեծանալը  
առ հասարակ ամենալաւ միջոցն է իմա-  
նալու թէ կաթը լաւ է թէ ո՛չ: Այս մի-  
ջոցը աւելի ճշմարիտ է ծննդկնից փոքր  
ինչ յետոյ, երբ որ երեխան դեռ ո՛չ մի  
հիւանդութիւն չունի ուրիշ մի որ և իցէ  
պատճառներից:

— 60 —

Երեխայի կեանքի առաջին ամիսնե-  
րում կաթը բազկացնումէ նրա միակ կերա-  
կուրը: Չորրորդ կամ հինգերորդ ամսում  
նրան կարելի է տալ հացի փշանք թրը-  
չած գինու և շաքարի խառնուրդի մէջ,  
յետոյ տաքացրած կովի-կաթ և թեթեւ  
բայց անդարար սրգանակներ. առաւել

մաքուր արգանակը հացի փշանքի մէջը  
ածած:

Եթէ դահեակի կաթը բաւական է  
և ամնդարար, լաւ կլինի եթէ ամենեւին  
չտային այդպիսի արհեստական կերակուր-  
ներ մինչև իններորդ կամ տասներորդ ամիս-  
ները: Միայն այն ժամանակը կարելի է  
կամաց կամաց սովորացնել երեխային ուրիշ  
կերակուր ընդունել, որ ունենար այնքան  
էլ անդարարութիւն, որչափ և կնկայ կա-  
թը, որ ծծմօր կաթը կտրուած ժամա-  
նակ կարելի լինի երեխային իսկոյն սկսել  
արհեստական կերակուր, աչքի առաջ  
ունենալով, որ ամենալաւ կերակուրը կա-  
թոյ է համարուել կաթի արգանակը, փոքր  
ինչ շաքարած. բայց ամինեւին ո՛չ ուրիշ  
բանով, զօրօրինակ կինամոնով և այլն:  
Նոյնպէս լաւ է մնի արգանակը եղի մէջ  
քարասերմի կ բոյսի հատիկներով  
(манная крупа.) իսկ միսը երեխայոց  
ամենեւին պէտք է չտալ մինչև երեք տա-  
րեկան հասակը:

## Նորածնի կերակրելը.

(PΥCΘEPAI EDBEYHRA)

— 61 —

Եթէ մօր կազմուածքը և առողջու-  
թիւնը չեն արգելում նրան, շատ լաւ կ'լի-  
նէր, որ եթէ մայրը ինքը կերակրէր նո-  
րածնին: Մօր քիչոյշ կազմուածքը այստեղ  
նշանակու թիւն չունի, որովհետեւ նրանք  
կարող են շատ առողջ լինել, այնու ամե-  
նայնիւ քնքոյշ:

Բացի սա, մօր կաթը ամենաառողջ  
և պատշաճ կերակուրն է երեխայի համար,  
իրբև բնութեան իսկ արգասիք: Շատ ան-  
գամ մեք տեսնումենք շատ առողջ երե-  
խայք, որոնց մայրերը միջակ որքանութե-  
ամբ կաթ են տալիս: Եւ եթէ խաբուելով  
այդ առողջութեամբ, տանք մի և նոյն  
կնիան ուրիշ երեխայ կերակրելու համար,  
հաւատադէ՛ք, որ հազիւ թէ կարողանայ  
իւր ատորժակը լրացնել:

Վասն որոյ իւրաքանչիւր մայր իւր  
առողջութեան համեմատ պէտք է կերակ-  
րի ինքը իւր երեխային, որ սերունդը ա-  
ւելի լաւ լինի. բայց ՚ի հարկէ պէտք է դրա

համար զոհի իւր միւս աւելորդ զուար-  
ձութիւնը:

— 62 —

Մայրը հէնց որ առողջացաւ երկուն-  
քի ցաւից (այդ ժամանակը զանազան է,  
նայելով հեշտ և դժուար ծնելուն), պէտք  
է տալ նրան ե կիսայն: Ուրախական ծի-  
ծաղը, որով կրեխան ծծումէ, նրա շուտ  
շուտ ձայն հանելը, եթէ շատ ժամանակ է  
կերակրից զուրի, ցոյց են տալիս բաւակա-  
նին պարզ, թէ որչափ նա սիրումէ ծիծը:  
Եւ արդարև մի թէ կարելի է պատրաստել  
երեխայի համար կերակուր աւելի համա-  
պատասխան բնութեան շնորհից:

Սկզբումը երեխան ստանումէ միայն  
շալ (քօլոսթրում), որ ղեղին հեղուկ է  
և զլխաւոր պարտաւորութիւնը նա է որ  
աղէքների ներսի կողմը աւելի սահուն շինի  
և զուրս թափի բնական միս և հիւթ,  
կ Ղ կ Ղ ա ն ք, որ անուանվումէ մեկոնիում:

Փոքր առ փոքր այս հեղուկը ստա-  
նումէ կաթի ձև և բողկացութիւն և այս  
փոփոխութեան համեմատ նա զուրս է

գայլիս աւելի մեծ քանակութեամբ: Աթէ կամենում են շատ ժամանակ երեխային համբերել տալ. սխալվում են, որովհետև առաջինը նա զրկում է բնութեան նշանակած դալից և երկրորդ ծծերի ուռչելը, որ յառաջանում է կաթն ի-տե ն գից, նա չի կարող ծծել և երեխան պէտք է սպասի, մինչև այս ուռուցի անհետանալը:

Այդպիսի ժուժկալութիւն դժուար են տանում առողջ երեխաները, ուր մնաց հիւանդոտները և անզօրները, որոնք շատ անգամ դառնում են զոհ մարդկանց նախապաշարմունքների: Սրանք բաւականին նշանաւոր պատճառներ են երեխայոց շուտ կերակուր տալու ծննդներից հետ մինչև զոնեա երկու ժամ, չորս, բայց ո՛չ աւելի քան ութը ժամ: Պատճառ է՛կայ սպասելու մինչև կաթնատեսելի անցկենալը:

— 63 —

Առաջին օրերում երեխային կարելի է կերակրել շատ անգամ շուտ որովհետև դժուար է նրանց քաղցածութիւնը լրացնել. բայց մէկ քանի շաբաթ անցնելից յետ կերակրելի միջոցները պէտք է աստիճանաբար

մեծանան: Մօր կողմից անսխալ եռանդը իւր պարտաւորութիւնները կատարելու համար շատ վնաս է երեխայի համար, կամ թէ երբ լսեցնելու համար տալիս են նրան ծիծ: Նրա օգտի համար էլ պէտք է մայրը պահպանի իւր զօրութիւնը և չ՛թուլանայ շատ կերակրելով:

Յերկը երեխային կարելի է կերակրել մինչև երկու ժամ, իսկ ինչ որ վերաբերում է զիշերու այ կերակրելուն, երեխայոց պէտք է սովորացնել շատ չ՛գարթնել: Նրանք հեշտութեամբ սովորում են ուշ կերակրելուն, որ ամենեւին նրանց չի վնասիլ. իսկ մօր համար ամենալաւ միջոցն է հանգրստանալու ցերեկուայ գործերից:

Աթէ նա կերակրի երեխային զիշերու այ տասնումէկ կամ տասն երկուսին կարող է հանդիստ քնել մէկ քանի ժամանակ, այնպէս որ նրան երկրորդ անգամ կերակրի ժամը 6-ին կամ 7-ին առաւօտեան:

Աթէ երեխան զարթնի զիշերը և սխալ կանչել և բղաւել կարելի է նրան տալ փոքր ինչ կովի տաքացրած կաթ, որ եկամ լնի գարու հետ, սա երեխայի պահանջ

մունքից հեռացնելու պատճառ է: Աւելի  
լաւ կ'լինի եթէ երեխային նորից քօրօրելով  
կերակրից բոլորովին հեռացնել տան զիշերը:

Ճշմարիտ է առաջին զիշերները սա  
բաւականին դժուար է. բայց երեխան շու-  
տով սովորումէ, նա զարթնումէ և նորից  
քնումէ առանց ձայնի, որովհետև մի նա-  
խազգացմունք ասումէ նրան, որ նրա  
ձայնը դուր և անօգուտ պիտի լինի:

Սրա համար մայրերը բաւականին  
հաստատամիտ պէտք է լինին, որ երեխայի  
ձայնին համբերեն և եթէ նրանք սկսեն  
երես տալ, այն ժամանակ դուր մայրերը  
իրանց նեղացնումեն և վերջապէս ոչինչ  
չ'անելով երեխայի հետ քնանումեն:

— 64 —

Ծծերը, որ իւրեանց տեղերով բաղ-  
կացնումեն կին մարդու մէկ զեղեցիու-  
թիւնը, ծառայում են նոր արարածի կե-  
րպիրելուն և մեծացնելուն, զանվումեն  
բնական շարժողութեանց և ազդեցութեան  
տակ իւրեանց խելօք շնուածքով: Ահա  
ինչու պէտք է աշխատել, որ մայրերը,  
որոնք իրանք են կերակրում իրանց երե-

խաներին պահէին իրանց միշտ հանդիստ  
և սառնասիրտ: Բայց կան մայրեր, որ երե-  
խայի մի փոքր ձայնիցը վեր են թռչում  
կամ երեխայի լաց եղած ժամանակը շատ  
սիրում են. այստեղ հարկաւոր է համ-  
բերութիւն և ո՛չ բարկացողութիւն և  
յուսահատութիւն: Այստեղ բժիշկը պար-  
տաւոր է համոզել մայրերին, որ աւելորդ  
քնքշութիւն և սէրը վնաս է ո՛չ միայն  
իրանց, այլ և երեխային:

Սօր այդպէս շփոթուիլը խիոյն փո-  
խումէ կաթը. և շուտ գրգռվող մայրը  
ո՛չ մի ժամանակ լաւ ծծմայր չէ կարող  
լինել: Եւ ի՞նչ սարսափելի մէկ բան է,  
առողջ և բաւականին կերակուր ստացած  
երեխայի ազարակը: Եթէ նա կանչվաւու-  
մէ այդ երեւի բնութեան պահանջմունքն է  
և այդ միջոցում նրան խառնիլ չէ կարելի  
բացի սա երեխան կ'սովորի ձայն հասնել  
միայն այն ժամանակ, երբ խկապէս մէկ  
պատճառ կ'ունենայ, իսկ եթէ նրան կա-  
թը տաք ամենայն լայ եղած ժամանակ,  
այն ժամանակ նա անզաղար այդպէս ձեղ  
կ'անղայնի:

## 65 Դասեակ և նորածին.

Մանկաբարձն է շատ անգամ սկսում պատմել և հասկացնել երեխայի վերայ հոգացողութեան և նորա պահպանելու կերպը այն դասեակին, որին յանձնուած է երեխայի պահպանողութիւնը: Բայց շատ անգամ այդ խորհուրդները և խրատները լինումեն սուտ և անհամապատասխան երեխայի քնքոյշ կազմուածքի բնական գործողութիւններին և պահանջողութիւններին: Սրա համար մանուկի առաջին հասակը և կերակրելը պէտք է անցնի մօր ձեռքով: Մայրը պէտք է խորհուրդ հարցնի փորձառու բժիշկից, նայի դասեակի պահելու կերպերը և հարկաւոր խրատները տայ: Դասեակը պէտք է լինի փորձառու համեստ, խոնարհ, ունկնդիր և անպաաճառ մանկասէր:

Դասեակը ամենից առաջ պէտք է խմանայ նորածնի կաշու դրութիւնը, որովհետեւ կաշու զիւրազգացութիւնը կարող է մի հիւանդ գրգռման մէջ ընկնիլ և դառնալ պաաճառ զանազան հիւանդութիւնների և մինչև անգամ մահի:

## — 66 —

Առողջ իւր ժամանակին ծնուած երեխան ունի քնքոյշ պարզ կարմիր գոյնով կաշի և ծածկուած շատ քիչ մի խժային նիւթով, որով ծածկուած է լինում երեխայի մարմինը գեռ մօր արզանդում և որը բնութիւնը նախասահմանել է, որ ծննդենից յետ երեխին պահպանի մթնոլորտի օդի անսովոր ներգործութիւնից: Երբ որ երեխան ծնւումէ, առհասարակ նրան լուանումեն տաք ջրով և սապոնով և լուանումեն այս խեժը: Բայց երեխայի կաշին աւելի զիւրազգաց է դառնում և զիւրազրդիւ ո՛չ թէ միայն օդից այլ և ուրիշ առարկաներից, որոնք նրան փայթաթումեն կամ ծածկումեն: Գիւրազրգունութիւնը աւելի շատանում է շատ լուանալուց և առաւել եթէ գործ է ածվում սապոն և որչափ երեխային տաք են պահում: Այս բոլորից կաշին շատ զիւրազգաց է դառնում և մէկ փոքրիկ ծակոցով կամ ցաւով կարող է շուտ անհանդիստ լինել, մանաւանդ եթէ ստամոքսը խանգարուի, որն որ շատ հեշտ

կարող է պատահել մօր կամ դահեակի կաթի վատ յատկութիւնից: Այսպիսի պատահմունքներում երեխան անհանգրստանում է և առ հասարակ աշխատում է զանտղան շարժողութիւններ անել առաւել ձեռքերով և ոտքերով և եթէ նա խանձարրուած է աշխատում է ազատուիլ և հանում է անդամները խանձարուրից: Այսպիսի անհանգիստ դրութիւնը երեխային չափազանց վնաս է այն պատճառաւ, որ բնութեան զրդելով նորածին մանուկը պէտք է շատ մասը անցկացնի հանգիստ և հանգարտ քնով և զարթնի միայն բնական կարիք ունեցած ժամանակը ապականելու կամ քաղցածութեան ժամանակ:

Երբեմն կաշու զիւրազգացութիւնը շատանում է ներքին պատճառներից, զորօրինակ բնական վարդագոյն մարմնի կարմրութիւնը աւելի է գնում բնականից մինչ զեռ ծննդեան 5 կամ 6 երորդ օրում պէտք է զեղնագոյն դառնայ և կամաց կամաց ընդունի իւր իօական գոյնը: Որչափ պայծառ կարմիր է կաշին, այնչափ մուգ և զեղին է նա լինելու, բայց երբեմն

զեղնութիւնը չափազանց շատ է լինում. դա ցոյց է տալիս մասնաւորապէս կաշու հիւանդ դրութիւնը:

Կաշու սաստիկ զիւրազգացութիւնը շարունակուում է մինչև կաշուի փոխվելը Նս գուրս է գալիս կտոր-կտոր, ծննդենից տասնուչորս օր անցկենալուց յետ: Աթէ կաշու այդ զիւրազգացութիւնը աշխատեն տաք ջրով կամ եղ քսելով քիչացնել, այն ժամանակ զիւրազգացութիւնը փոխվում է հիւանդութեան: Նոյնպէս լաւ է անդադար օրօրելը կամ թէ ձեռի վերայ շարժելը երեխայի մի փոքր ձայն հանած ժամանակը, և մանաւանդ նրա կեանքի առաջին օրերում: Սրա համար, այսինքն որ երեխան հանգիստ քնի սաստիկ պինդ նրան պատատումեն: Բայց որովհետև երեխան շատ անգամ թացացնում է կամ ապակա նում է, վասն որոյ շատ շուտ էլ պէտք է գալիս նրան խանձարուրը բանալ, որով երեխայի կաշին քիչ թէ շատ զրգուվում է:

Ահա այսպէս տեսնեք, թէ որչափ վնասակար ազդեցութիւն ունեցող հանգամանքներ ներգործում են նորածնի կամ ծիծ ուտող երեխաների կաշու վերայ և



Նրանց հիւանդացնու մեն ու զրդուում: Սրանից նրանց կաշին կարծես ծաղկումէ, փայրիկ բշտիկներ են երևում, որ անուանւ լումեն ս տ և, մանաւանդ եթէ երեխան բնականից վատահիւթ է և վնասակար կերպով է ապրում:

## 67

Երեխային սաստիկ ծածկելը նոյնպէս վնաս է, եթէ մանաւանդ երեխայի ննջարանում օդը առանց այն անմաքուր է և վնասակար: Բայց տարաբաղդաբար այս շատ անգամ է պատահում և որչափ երեխայն անհանգստանումէ, այնքան աւելի են ծածկում ծանր վերմակներով, ծածկելով մինչև անգամ երեսը տաքացնումեն կրակ վառելով սենեակը և շատ անգամ բաղանիք են պատրաստում երեխայի համար: Այս բոլորը երեխային շատ շատ դիւրազրբ գիւ է շինում ցրտից երեխան ստանումէ ծակոց և չկարողանալով համբերել այդ ծանր ցաւին թոյլ արարածը մեռնումէ: Նոյնպէս երեխային հանգստութիւն և սաքութիւն տալու նպատակաւ սկսումեն նրան պինդ խանձարուրել, կարծելով, որ

երեխային անպատճառ հարկաւոր է խանձարուրել նրա կեանքի առաջին օրերից արդէն. նրանք կարծու մեն, որ այդպիսով երեխան աւելի հանգիստ է, որ նա այդպիսով ցրտից միշտ պաշտպանուած, պինդ է և հանգիստ է քնում, աւելի լաւ և կանոնաւորապէս է զարգանում և աճում և այլն: Մինչդեռ խանձարուրը բանալու ժամանակ երեխան դուրս է դալիս Ֆլանդի շորերից բոլորովին քրտնած, թաց շապիկով: Ի հարկ է իսկչին փոխումեն ձերմակեղէնը, դնումեն երեխային բարձի վերայ և թողնումեն շարժուելու ինչպէս կամենումեն. կամ ինչպէս անուանումեն զբօսնելու: Բայց այս զբօսանքը վերջանումէ նրանով, որ երեխան սկսումէ զկրտալ: Սա մի թէ չի նշանակում, որ մրսել է երեխան: Իսկ յիմարազլուխ դահակը ասումէ թէ այս լաւ է «երեխան չի մրսիլ. այդպէս աւելի հանգիստ կ'ընանայ»:


Խանձարրելու վերաբերութեամբ մեք պարտենք համարում ասելու, որ երեխայի բնութիւնը պահանջումէ, որ ամենայն հասակում պահէին որչափ կարելի է հա-

սարակ, որչափ կարելի է անարուեստական,  
և համապատասխան երեխայի բնութեան  
գործողութիւններին և պահանջմունքներին:

— 68 —

Մայեցէք ուշադրութեամբ երեխայի  
զարգանալուն և անկուն, նկատեցէք նրա  
կեանքը. ծննդեան առաջին օրից և դուք  
կ'համոզուէք, որ երեխայի օրգանական  
(մարմնակազմական) բնութեան գործողու-  
թիւնները, թէ առողջ, թէ հիւանդ ժա-  
մանակը կանոնաւոր են և կատարվում են  
կենսական զանազան պահանջմունքների  
համեմատ: Իսկ արհեստական գործողու-  
թիւնները բոլորը կախուած են մեր կամ-  
քից: Սրա համար երեխայի կրթութեան  
ժամանակ, նրա բժշկելու և պահպանելու  
համար, մէք պէտք է գործենք բնութեան  
պահանջմունքների համեմատ, այլ ո՛չ մեր  
մտածմունքներով, կարծիքներով և կամ  
աւելի վատ նախապաշարմունքներով կամ  
սնտոխապաշտութիւններով: Այդպիսի պա-  
տահանքներում մէք աւելի կարող ենք  
մնաս պատճառել երեխային, և այն ո՛չ  
թէ նրա առողջութեան, այլ և բոլոր նրա

կեանքին: Աթէ զիտութիւնն էլ չէ կա-  
րողանում զեռ հիմնաբար ապացուցանել  
երեխայի բնութեան օրնական գործողու-  
թիւնները, որ ամենայն ժամանակ կարելի  
լինէր կանոնաւորապէս վարուել երեխայի  
հետ. այնու ամենայնիւ մեր նախապա-  
շարմունքները և կարծիքները բոլորովին  
անտեղի են և ամենևին պէտք չէ գործ  
զնել:



ԾՄՄԱՅՐ ԵՒ ԵՐԵՒԱՅ.  
(РУССКАЯ ХОЗЯЙКА)

— 69 —

Հարկաւոր չէ ոչինչ փոփոխել այն  
կնկայ կեանքի և սովորութիւնների մէջ,  
որին վեր են առնում ծծմայր. սա զլիա-  
ւոր կանոնն է, ծծմայր ջոկելու ժամանակ:  
Կիւղականից անկարելի է տիկին շինել,  
սրա համար և հարկաւոր չէ ստիպել:  
Իսկ եթէ ծծմօր առաջուայ կեանքի եղա-  
նակը համաձայնում չէ մանկապահու-  
թեան կանոններին. այդ արդէն բժշկի

զործն է և նա պէտք է նախագծի և նշանակի կեանքի համար եղանակ, որ համաձայն լինի մանկապահութեան օրէնքներին:

Ետ լաւ կ'լինի ջոկել այնպիսի ծրմայր, որի կեանքի եղանակը չէ զանազան վրամ այն ընտանիքի կեանքից, ուրտեղ նա փոխուել է: Սրանից յետոյ պէտք է նայել որ կերակուրները, որ ընդունու մէ ծծմայրը, չ'վնասեն ո՛չ իրան, ո՛չ երեխային: աներկիւղ կարելի է նրան տալ միս, կանաչե, սալաթ, ընտեղէն, թթուաջուր, լաւ եփած և առանց նանուխի, զինի կամ խաղողի քամածք, եթէ սովոր է, և այսպիսի շատ բաներ, որոնք նրան չեն վնասիլ:

Բոլորովին անօգուտ է ծծմօրը նշանակել կերակուրներ կամ խմելքներ: Դաւ բժիշկները սպաջուցել են, որ մարդու կաթը չէ կարելի շատայնել, ինչպէս ուրիշ կենդանիներինը:

— 70 —

Ծծմայրը պէտք է ամեն օր զբօսանք անի չ'նայելով մինչև անգամ եղանակի վերայ: Զբօսանքը նրան հարկաւոր է նոյնպէս, ինչպէս երեխային: Բայց պէտք է նայել,

միայն չ'դուրս գայ զբօսանքի, առաւել եթէ կարծիք կայ նրա բնաւորութեան, և վարքի մէջ:

Պարզապէս ասում եմ այստեղ և ամենահարկաւոր մի ժուժկալութիւն, որ ծծմայրը, եթէ մարդու զնադած է սակայն չ'պէտք է յարարերութիւն ունենայ: Կարող է պատահել, որ ծծմայրը կ'յղանայ այն ժամանակ-կաթը կ'սկսի քիչ քանակութեամբ դուրս գալ, աւելի կ'վատացնի իւր յատկութիւնը. նրա մէջ կ'երեւայ դալ (բօյսթում), որ շատ վնաս է երեխային:

Կերակրելու ժամանակ պէտք է առանձին ուշադրութիւն դարձնել ծծմօր առողջութեան վերայ: Երբեմն նա ունենում է փորի կալուած, բայց վախենալով, որ նշանակութիւնը կորցնէ երեխայի ծնողների առաջ, չէ համարձակվում ասելու: Այդպիսի պատահանքներում պէտք է նրան նախատել և խրատել, որ միւս անգամ այդպէս չ'ծածկի: Միշտ պէտք է ազատախօս լինի ծրմայրը և ամենը ասի ծնողներին: Այդ կալուածը սակայն վատ ազդեցութիւն չ'ունի երեխայի վերայ և հա-

ստրակ բժշկական միջոցներով շուտով կ'ան-  
ցնի առանց վատ հետեւանքների:

— 71 —

Պատահումէ, որ ծծմօր մէջ երեւու-  
մեն երեկայ կերակրելու միջոցներում ամ-  
սական դաշտաններ: Առաջին ժամանակնե-  
րում սա համարվումէր այնքան վնաս, որ  
շատ ընտանիքներում փոխում էին ծրծ-  
մայրը: Այն ժամանակ նախապաշարմունք  
կար, թէ դաշտանների ժամանակ կաթը  
ընդունումէ վատ յատկութիւններ, չափա-  
զանց վնաս երեխային: Բայց սա ճշմարիտ  
չէ և այս պատճառաւ ծծմայրը պէտք չէ  
արձակել: Ես շատ փորձել եմ մի քանի  
մայրերի վերայ, որոնց հետ երեխան կերա-  
կրելու միջոցներում պատահել էին դաշ-  
տաններ, և խնայել եմ, որ երեխաները  
ըստ մեծի մասին ոչինչ փոփո-  
խութիւն չեն ունայել: Ես ասացի ըստ  
մեծի մասին, որովհետեւ երբեմն երեւումէ  
անհանգստութիւն, մի թեթեւ ծակոց և  
լուծումն, երբեմն էլ նրանք աւելի սաս-  
տիկ են լինում:

Ուրեմն ծծմօր մէջ դաշտաններ սկս-

ած ժամանակը, պէտք է առ ժամանակ  
սպասել, թէ ինչ փոփոխութիւններ է ստա-  
նում երեխան: Խնայն պէտք չէ արգելել  
նրա կերակրելը. բացի այն միջոցից, եթէ  
երեխան իրան կ'զգայ հիւանդ:

— 72 —

Պէտք է ուշադրութեամբ նայել ծրծ-  
մօր սովորութիւնները. պէտք է արգելել  
շատ շուտ կերակրելը, որ շատ անգամ  
լուցնելու միակ միջոցն է դառնում: Պէտք  
է նրան հասկայնել, որ որչափ ժուժ-  
կալութիւն դրուի այնչափ երեխայի համար  
առողջարար է և լաւ: Բայց տարաբաղբա-  
բար այս նախապաշարմունքը կայ ոչ մի-  
այն գոեհիկների մէջ. այլ և բաւականին  
կրթեալ ընտանիքներում:

Կերակրելու ժամերը պէտք է նշանա-  
կուած լինին և ուղիղ լինին կատարվում.  
Իսկ եթէ այդ միջոցներից մէկի մէջ երե-  
խան կ'սկսի բղաւել, պէտք է զանազան  
հնարքներով լուցնել, այլ ո'չ թէ ծիծը  
բերանը տալով: Այդպիսով կարող են երե-  
խայի ստամոքսը խանդարել և փսխել կ'տան:

Այս յոտուածներում զրաճներից մի

քանի բաներ, աւելի լաւ հասկանալի լինելու համար կրկնուած են. այժմ մեզ շատ յարմար է նկատել, որ ծնամայրները նոյնպէս, ինչպէս մայրը պէտք է զիշերը իրանց չ'նեղայնեն: Սրա համար պէտք է սովորեցնել երեխային զիշերը կաթ պահանջելու շատ քիչ, ինչպէս և անցեալ յօդուածների մէկի մէջ յիշուած է:

Շատ ծծմայրեր վատ սովորութիւն ունին երեխային իրանց հետ անկողին դնելու: Սրանից աւելի երկիւզալի ոչինչ չ'կայ: շատ հեշտ կարող է պատահել, որ կամ երեխան կ'ընկնի, կամ ծծմայրը կ'սեղմի իւր տակը քնած ժամանակ: Այս սովորութիւնը խիտն պէտք է արգելել գործ դնելու, և երեխայի համար պատրաստելու վտրք ինչ առանձին տեղ: Եթէ ծնողները միևնոյն սենեակում են ծծմօր զգուշութիւնը լաւ և շուտ կ'կատարուի. իսկ եթէ առանձին սենեակում են լաւ կ'լինէր, որ չ'ծուլանային զիշերը մի քանի անգամ զալ այդ սենեակը և նայելու, թէ կատարվում են նրանց հրամանները արդեօք:



## Յղի կանանց համար առողջապահական կանոններ.

(Моск. Медицинск. газета)

— 73 —

Մանուկի կեանքը որովայնի մէջ շատ մեծ կախումն ունի մօր խիսական կեանքից: Սկզբից մինչև վերջ նրա աստիճանաբար մեծանալը, մինչև բոլորովին մեծանալը, մինչև այն բուսական, երբ անկախ է դառնում մօրից, կախուած է մանուկը մօր կանոնաւոր կեանքիցը բոլոր յղութեան ժամանակ: Սրա համար մայրը, երբ յղի է մեծ պարտաւորութիւններ ունի կատարելու իւր կեանքի մէջ և մեծ ժուժկալութիւն ու համբերութիւն պէտք է ունենայ, որ մանուկը հասնի թէ մարմնաւոր և թէ հոգեկան լաւ ընդունակութիւնների: Մօր յղութեան ժամանակ անկանոն կեանքից են յառաջանում մանուկների հիւանդ լինելը, շուտ մահը, նրանց թաւամած, թոյլ զիւրազրզիւ և սրանց նման պակասութիւններ ունեցած կեանքը:

Շատ մայրեր չ'ընտանալով այս ժամանակահամիջոցի մեծ նշանակութիւնը, ամենեկին միաք չ'են դարձնում իրանց առողջութեան վերայ, կամ կատարումեն բոլոր իրանց անասելի բաղձանքները, չ'մտածելով որ այդպիսով շատ սաստիկ փաստումեն մանուկին, որը յանձնած է նրանց իւր կենդանութիւնը: Այժմ քննենք մօր պարտաւորութիւնները:

— 74 —

Յղի մօր դէպի իւր մանուկը առաջին պարտաւորութիւնը պէտք է լինի այն որ որչափ կարելի է նրան արձակ տեղ տայ արգանդում, որ նա կարողանայ լաւ զարգանալ. սրա համար մօր հագուստը պէտք է նեղ չ'լինի և չ'սխալի թէ կուրծքը և թէ փորը: Զանազան կապիճ'ներ և կորսէաներ պէտք է բոլորովին հեռացնել, որովհետեւ նախ պատճառ կ'լինին մանուկի վատ զարգանալուն. և երկրորդ սխալելով մօր մարմինը, պատճառումեն հիւանդութիւն մօր մարմնի մէջ, որ վատ կարող է ներգործել մանուկի վերայ նրա բոլոր կեանքի մէջ:

Երեկոյի մեծանալու և կազմվելու աւտնաւորութիւնը կախուած է նոյնպէս յարմար կերակուր գործածելուց: Մօր արիւնը, որ կազմում է մանուկի կերակուրը, ինչպէս յայտնի է դուրս է գալիս կերակրից, ուրեմն որչափ կերակուրները լաւ լինին, այնչափ արիւնը լաւ կ'լինի և ուրեմն մանուկի համար յարմար: Մօր համար առողջարար կերակուրը նա է, որ ոչ միայն անդարար է, այլ և զիւրամարս: Մանաւանդ պէտք է զգուշանալ մօրը փորը չ'խանդարել զանազան անտեղի կերակուրներով: Բարեխառնութիւնը և կանոնաւորութիւնը մանկապահութեան և մօր առողջապահութեան ամենահարկաւոր պայմաններն են: Բացի սա պէտք է միտք դարձնել և ուստիլու յղանակին: Խրաքանչիւր պինդ կերակուրը, զօրօրինակ միսը, պէտք է լաւ փշուկ, կտրտել, լաւ ծամել և չ'կուլ տալ մեծ-մեծ կտորներով: Կերակրի ընտրողութեան համար կարելի է ասել, որ մայրը կարող է գործածել այն կերակուրը, որին սովորած է, բայց բոլոր այն կերակուրները, որ կարող են զրկուել, տաքացնել, կամ

գժուարամարս են և իւզայլն պէտք է հե-  
ռացնել կերակրների միջնց: Շատ օգուտ է  
կաթի գործածելը, թերխաշ ձու, մսի  
արգանակ թարմ կանաչիներով և ընդե-  
ղէններով: Ամենայն միս կարելի է գոր-  
ծածել բացի հորթի մսից, որովհետեւ նա  
աւելի գժուարամարս է: Կաղամբ, զինձ և  
կանաչիք կարելի է քիչ-քիչ գործածել.  
շատ իւզայլն կերակուրները, վարունկը,  
խակ և փուչացած պտուղները, պէտք է  
հեռացնել և չգործածել: Խմելու համար  
կարելի է գործածել ջուր և թեթեւ ու  
անզրգիւ գարեջուր. իսկ երբեք գործ-  
չածել օղի և ուրիշ զրգուղ ու կծու  
խմիչքներ:

— 75 —

Բոլոր առողջապահութիւնը առ  
հասարակ կախուած է մօր մարմնակալ-  
մու թիւնից, զրու թիւնից և պարապմունքից:  
Քնքշակազմ, նստած կեանք վարող և  
զիւրազրգիւ կանայքը պէտք է աւելի զգոյշ  
պահեն իրանց ստամբքը խանգարուելուց:  
Եթէ որ և իցէ մի կերակուր չ'են սիրում

չ'պէտք է գործ ածել ակամայ, բայց և այն-  
պէս պէտք է ժուժկալ (փայրիղ) պահել  
ամենայն անսովոր և հազուադիւտ կերա-  
կրներէից: Պէտք է նոյնպէս զգուշանալ մր-  
սելուց և մանաւանդ փորը մրսելուց, վասն  
որոյ շատ օգտուէտ է գործ ածել որո-  
վայն ապատ (ամառը երկտակ քաթանից  
իսկ ձմեռը Ֆլանդից) կամ թէ թեթեւ  
կապել ուրիշ շորերով: Յէ և մանուկը մօր  
արգանդումն է, և կախումն ունի մօր  
միջին կազմու թիւնից, և փոքր ինչ ապա-  
հովուած է արտաքին ազդեցութիւնից,  
սակայն արտաքին փասանքը կարող են  
շատ պատահմունքներում ներգործել և  
ներքին կազմութեան, որով կ'խանգա-  
րուի մատաղ-արարածի կազմութիւնը,  
վասն որոյ պէտք է նոյնպէս մեծ ուշա-  
դրութիւն դարձնել և այս պատահմունք-  
ներում: Պէտք է զգուշանալ ընկնելուց,  
կտրուելուց և միւս զօրաւոր գործողու-  
թիւններից, զօրօրինակ, ցատկաւելուց, հե-  
ծելուց, սանդուղքների վերայ շուտ-շուտ  
բարձրանալուց, ծանրութիւններ կրելուց  
և այլն: Այս պատճառները աւելի փնաս են  
քնքշակազմներին և որոնք երեխայ են փու-

չացնում : Պարախաղութիւնը և կաքաւելը շատ վնասակար են, մանաւանդ եթէ նրանք շարունակ են լինում : Այս բոլոր նախազգուշութիւնները պէտք է առաւել լաւ պահպանել յղութեան առաջին չորս ամիսներում :

## 76

Սօր թէ մարմնական և հոգեկան լաւ և հանգիստ դրութիւնը շատ բարերար ազդեցութիւն ունի արգանդի մանուկին, և ընդհակառակը զանազան հոգեկան և բնական նեղութիւններ վատ են ներգործում մանուկների վերայ : Հոգեկան լաւ դրութիւն ասելով պէտք է հասկանալ : Թոր այն դրութիւնը, երբ զգայական մանրաթեխների և արտաքին զգայարանքների գործողութիւնը առհասարակ հանգիստ են և անզրգիւ, այսինքն առանց սաստիկ շարժմունքների : Յանկութիւններից գրգռմունքները շատ սաստիկ թուլացնում են և խանգարում մանուկի առողջութիւնը : Բոլոր հոգեկան շփոթմունքները և շարժմունքները վնասակար են թէ մօր և թէ նրա որովայնի պտղի առողջութեան : Այս շարժմունքները

սրանք են, բարկութիւն, ախրութիւն, ողբ, սաստիկ ծիծաղ և այլն. սրանց նման արիւն շարժող և սիրտը խփել տուող պատճառները : Յղութեան ժամանակ զգայական մանրաթեխները և նրանց գործողութիւնը աւելի սաստիկ են, տպաւորութիւնը աւելի շատացած է, վասն որոյ պէտք է իրան հանգիստ պահել : Սրա համար պէտք է զգուշանալ, այն ամեն բաներից, որոնք կարող են պատճառել ժխորումն, վախ և ուրիշ սաստիկ տպաւորութիւններ արտաքին զգայարանաց վերայ. բացի նրանից սաստիկ մտածելուց և ուշը իւր վրայ չ'պահելուց : Վասն որոյ պէտք է սիրտը հանդարտ պահել, չափաւոր ուրախ և բաւական. հանդարտ կեանքը նախապահպանում է մանուկին շատ վտանգներից :

## — 77 —

Ամեն օր շարժողութիւնները շատ օգտաւէտ են, լաւ եղանակին պարզ և բաց օդի մէջ. խի վատ եղանակին սենեակի մէջ : Նստած կեանքը, պարապութիւնը և տըխրութիւնը ու միայնակութիւնը մի քանի



մարդիկ համարում են յղև կանանց հա-  
մար շատ լաւ. մինչդեռ նրանք աւելի  
խանգարում են զգայական մանրաթելները,  
ախորժակը կորցնում են և ուրիշ վնասներ  
են պատճառում: Աւելի օգտաւէտ է պա-  
րապել ընտանեկանական թելք և գործերով,  
շատ անգամ դուրս գալ զբօսանքի, կարճ  
ժամանակ քնել, անձանձրալի արթնութիւն  
ունենալ: Առողջապահութեան կողմից շատ  
լաւ է երկու շաբաթը մի անգամ կամ  
աւելի շուտ ասք բաղանիքներ գործածել,  
որոց տաքութիւնը սակայն պէտք է շատ  
չլինի Ռէօմիւրի 24 կամ 28 աստիճանից:  
Ով որ սովորած է ցուրտ ջրի մէջ լողա-  
լու կարող է լուացուիլ. ՚ի հարկէ դար-  
ձեալ զգուշաբար, որ շատ երկայն չլինի  
և չմոսի: Բայց այն կանայքը, որոնք սո-  
վոր չեն ցուրտ ջրի մէջ լողալու և միայն  
յղութեան ժամանակ են սկսում գործա-  
ծել ցուրտ բաղանիք շատ վնասների և  
փորձանքների կարող են ենթարկուիլ:  
Պէտք է զգուշանալ աստիկ տաքանալուց,  
կամ ամառուայ շոքերից:

Յղութեան վերջին 8 շաբաթներում  
յղև կինը պէտք է ամեն օր 2 կամ 3

անգամ լուանայ իւր ծծերի պտուկները  
ջրով, որ խառնած է սպիրտի հետ, որ  
այդտեղի կաշին հաստանայ: Լուանալուց  
առաջ և յետ լաւ կ'լինի թելք և կերպով  
առաջ և յետ քաշել փոքր ինչ չորս  
մատնով պտուկը: Մասներով պէտք է  
այնպէս բռնել ծծերի ծայրերից, որ նա  
չորս կողմով պատուած լինի և ըստ կա-  
րելիութեան նման լինի երեխայի ծծելուն:  
Սա նախապահպանում է ծծերը վերքեր  
ստանալուց և ցաւերուց երեխայի ծծած  
ժամանակը:

## 78 Գիւղացուց համար մի քանի բժշկական հարկաւոր գիտելիքներ:

### (Բօջարեանց)

Արտաքին հիւանդութիւնից ազատ  
մնալու համար պէտք է պահպանել հե-  
տեւեալ կանոնները. 1). Ամառը դետի, կամ  
աղբիւրների ջրումը լեղանալ, և ձմեռը  
բաղնիստումը: 2). Շորերը փոխել դոնի՛ա  
շաբաթը մէկ անգամ: 3). Արեան փորա-  
ցաւութիւնից պատրաստ մնալու համար

չուտել խակ մրգեղէն (պտուղ) մանաւանդ շք ժամանակը. 4). Որպէս զի չպատահի փղձկալ կամ դժուարաշնչութիւն, պէտք է օրը չորս անգամ բաց անեն լուսամուտը, կամ դռները. մանաւանդ աշունքը և ձմեռը. 5). Բակը պէտք է պահեն խտակ. տուտօտները անասունքը և հաւերը կերակրելուց յետոյ պէտք է աւելնն: 6). Գործը հոտը դպչելուց ազատ մնալու համար չպէտք է ծածկեն ծխնելոյցը (բուխար), մինչև ՚ի կրակը լաւ նստի և զգուշութեմ մտի տան, որ ածխակոթ չլինի մնացած: 7). Յրտի տանելից զգուշանալու համար, երբ ցուրտ ժամանակ հարկաւորի դուրս տեղ գնալ, պէտք է ճրագու, կամ ձէթ բսն քթին, երեստահարքին, ականջներին, ձեռի և ոտի մատներին և էլ տաք հաքնուին: 8). Կուրծքի խթըից և փողացաւից պատրաստ մնալու համար, եթէ անձրևիցը թաց ըլին, պէտք է շատ փոխեն շորերը և քսեն բոլոր մարմնայ վերայ հացի կամ հասարակ արաղը. տաք-տաք չայ խմացնեն և թաղայ սոխ, կամ բողի ուտացնեն շատ, որ արտաշնչուցութիւնը բաց ըլն: 9) Թորի բորբոքումից,

կամ բորբոքային տենդից ազատ մնալու համար շք օրերը, երբ մարմինը եռ ըլն գալիս, մանաւանդ յանդուժը (աշխատելուց և ձմեռը շատ բան շինելուց քրտնք ըլն եկած, չպիտի իսկոյն սաստիկ սառը ջուր խմեն, այլ քիչ քիչ միջոց տալով: 10). Գլխացաւից, աչքի բորբոքումից, ականջի վժրժոցից ազատ մնալու համար արևումը զլիարաց չպիտի աշխատեն: 11). Սուրաւանդից (քօրբուծ) ազատ մնալու համար չպիտի խմեն և ո՛չ կերակրումը բանացնեն երկար ժամանակ մէկ տեղ կանգնած զբի ջուր, ուր գետ կամ աղբիւր չլինի, խորը հորի ջուրը լաւ է: Օդը խտակելու համար պէտք է զլիւզերումը շուկաների (քոչայ) երկու կողմն էլ անկել կեչի կամ ուռի ծառեր, չորս կամ վից քայլաչափ մէկը միւսից հեռու. 13). խոնաուժիւնից (նամ,) դողացնելուց և ջրը գողութիւնից ազատ մնալու համար պէտք է փորեն առու տան և ծառերի բոլորքը, մանաւանդ այն տեղերումը, ուր բնակարանները փոս ընկած տեղ են շինած: 14). Փթած և տարափոխիկ տենդից ազատ մնալու համար, կնտեղ, ինչտեղ մեռել զրած

լինի, չպէտք է կրակ վառեն. դուռը և լուսամուտը բաց պահեն, քանի որ մեռելը այնտեղ է 15). Փղձկալուց աղատ մնալու համար, եթէ երկար ժամանակով ծածկած գետնափոր տեղեր և հոր մտնել հարկաւորի, պէտք է առաջ մէջը յարդի ծղոտով (գարման) կրակ տալ, որ թանձրացած օդը իստակուի և յետոյ մտնել: 16). Երկու հոգիս կնիկը փոր աւերելուց աղատ մնալու համար, չպիտի վեր կաշնէ ծանր բան և չպիտի դուս թռչի որեւիցէ լէն տեղի և առուի վրով. ազատուելուց յետոյ, որպէս չի չստանայ զաւակատան խէթք, և թուլութիւն, շուտով չպիտի աշխատանքի ձեռք տայ, մանաւանդ ծանր գործի, մինչև որ զօրութիւնը տեղը գայ, Աղջկերբը առաջին անգամ կնիկ արմատի կարգը տեսնելիս կանացի ցաւերից աղատ մնալու համար, պէտք է զգուշանան սառը ջրով լուացուելուց և մրսելուց:

79. Զկուտալուց ազատուելու միջոց.

Այս հիւանդութիւնը շատ պատ-

ճառներից է յառաջանում. իսկ զրա ամենամեծ աղբւրը կոկորդի զրգուելին է: Երբեմն դա ստամոքսի խանգարուելուց է լինում, երբ կերակուրը լաւ մարսած չէ երբեմն դա յառաջանումէ զգ ա յ ա կ ա ն մ ա ն ր ա թ ե լ ն ե ր ի (НЕРВЪ) խանգարուելուց և առաւել մնաս է յղե կանանց: Թեթև զկուտոցի ժամանակ շատ լաւ է խմել մի քանի ումիգ (կամ) ջուր կամ զկուտացողի երեսին յանկարծ ջուր սրսկել:

Գաղղիացի դօքթէօս Սէյզանսը խորհուրդ է տալիս սխմել ա ն ր ա կ ի ներսի կողմը զկուտալու ժամանակը և նրա խօսքերին նայելով այս միջոցը ամենասատիկ զրգումունքն էլ բժշկումէ:

(Սսիենս պուռ թու)

80. Այրուածի բժշկելու միջոց.

Հարուէ ծառի մի մնալի տերեւը կէս արա և հիւթալի տեղով զեր այրուած տեղը. և տերեւը մի վեր առնել մինչև նա մանուշակագոյն չգառնայ: (Հա-

զար անգամ փորձուած է յաջողութեամբ):  
(Русская Хозяйка)

### 81. Ածուխից բռնուածին դեղ

Երբ որ ածուխով ընկնողը զգայ զբլ-  
խումը ծանրութիւն և սրտի թրթռանք  
խոյնի պէտք է մի քանի կաթիլ անանուխի  
եղ (МЯТНОЕ МАСЛО) \*) վեր առնել  
մատնի վերայ և քսել քունքերը, ճակատը  
և ականջների ետեք: Կարելի է նոյնպէս  
փոքր թիւնչ հոտ առնել և քթի ծայրին  
քսել: Մի քանի րոպէից ճակատը և միւս  
կողմերը, կ'սկսեն ցրտել և հիւանդը թե-  
թեութիւն կ'զգայ:

Այդ հիւանդութեան դէմ լաւ գործ  
է դնում և վարդագոյն հերանի (Ճաղիկ  
է) տերեւը, որը ձմեռում են և դնում են  
երկու ականջների մէջ: Տերեւը թառամե-  
լուց և չորանալուց կարելի է ուրիշը դնել,  
մինչև բոլորովին առողջանալը:

(Русская Хозяйка)

\*) Ամենայն դեղատանում կարելի է  
ստանալ առանց դեղատոմսակի (рецептЪ)

### 82. Գիւղական միջոց հազի դէմ

Վեր առէք երկու կամ երեք զուլս  
սխտոր, մաքրեցէք քչկփնրից, մանրացրէք  
աւելացրէք վերան խոզի եղ այնքան, որ  
բոլորովին մանի սխտորը նրա մէջ: Յետոյ  
այդ եղը հարեցէք որ փափկի և խառ-  
նեցէք երկու ձու, և ունցեցէք, որ խմորի  
նման մի բան դուրս գայ: Երեկոյեան քնելու  
ժամանակ տաքացրէք զարշապարներդ  
(դաբաններդ) և քսեցէք ոտներիդ այս  
խառնուրդը մինչև ծունկի բայց աւելի զար-  
շապարը, ինչքան որ կարող էք համբերել:

Յետոյ հագէք տաք գուլպաներ և  
պառկեցէք անկողին և անկողնում շփեցէք  
ծունկերդ: Գեռ քսելուց առաջ պէտք է  
ոտներդ լաւ լուանալ տաք ջրով: Երեք օր  
կրկնելով այդ դեղը և դուրս չ'գալով  
կարող էք բժշկուել ամենասաստիկ հա-  
զեց, որի ճշմարտութեան մէջ ես բոլորովին  
հաւատացած եմ շատ անգամ փորձելով  
(Миръ практ. Жизни)

### 83. Արին կտրելու լաւ միջոց

Այս դեղը առաւել օգտակար է

ընտանիքի մէջ, որովհետեւ շատ անգամ  
պատահում են երկայոց մէջ ձղուացք կամ  
կտրուածք: Պէտք է պատրաստ ունենալ  
քլօրի երկաթ (Хлористое желѣ-  
зо.) որ կարելի է ձարել ամենայն դեղա-  
րանում: Այս հեղուկից բաւական է ածել  
մի քանի կաթիլ վերայ ամենասաս-  
տիկ արիւնահոսութիւնից պահելու հա-  
մար: (Նոյնպէս ներգործումէ, բայց աւելի  
թոյլ, ածուխի փոշին:)

(Русск. хозяйка.)

## 84. Մօզոլներին (Мозоль) ջնջելու միջոց

Ում որ շատ են նեղացնում մօզոյլ-  
ները, խորհուրդ ենք տալիս նրանց վերայ  
դնել շոր, որի վերայ քսած է, եղ-կաւիձի  
հետ խառնած: Այս խառնուրդը հանում է  
մօզոյլները դուրս, բացի սա երեսի կողմը  
չորանում է փոքրանում է, փոքրանում է և  
վերջապէս մօզոյլը բոլորովին դուրս է գա-  
լիս հետքն անգամ չ' թողնելով: (Շատ  
անգամ փորձուած է յաջողութեամբ:)

(РУССКАЯ ХОЗЯЙКА)

## 85. Լտամնացաւի դեղ

Դեղարանից առէք երկու կոպէկի  
մանրացրած կալգան (Калганъ) կամ  
եթէ ձեզ ունէք, ինքներդ մանրացրէ՛ք,  
յետոյ ածեցէք մի փոքրիկ բաժակի մէջ  
և ածեցէք վերան արաղ կամ աւելի լաւ,  
ուօմ և դրէք հանդարտութի մի տաք  
տեղում, մինչև կէս ժամ: Յետոյ խառնել  
տեղը և թանձր ածել բամբակի կտորի  
վերայ և դնել ցաւող ատամի վերայ: Նա  
մէկ կ'ցաւացնի և խսկոյն կ'կտրի: Յաւը  
կրկնած ժամանակը կարելի է կրկնել մի  
և նոյնը:

(Русская Хозяйка.)

## 86. Մանանեխի բժշկական գործածութիւնը

Մանրացրած մանանեխը պէտք է  
թացացնել ջրով և ո՛չ բացախով, այն-  
պէս որ հեղուկ խմորի նման մի բան դուրս  
գայ, խսկոյն քսել մի շորի վերայ և դնել  
ուր որ հարկաւոր է, քանի մանանեխը  
դեռ տաք է: Մանանեխը պէտք է թողնել  
մինչև որ կաշին այրող մի ցաւ զգայ, բայց

ո՛չ երկայն. որովհետև կարող են յետոյ աղտոտ վերբեր բացուել, որոնք շատ ուշ են լաւանում: փոխանակ մանանխըր կարելի է զործածել և վայրի բողի:

(Миръ практ. жизни)

### 87. Բարակացաւից առ ողջանալու հետ միջոց

Պ. Խաճկին հրատարակել էր «Оле-нецкія губернскаія вѣдомости» մէջ ամենահասարակ միջոց, որ իրան բոլորովն առողջացրել է Թորախուժիւնից, թէ և բժիշկները միակ միջոցը ազատութեան համարումէին զնալ արտասահման առողջանալու: Բոլոր դեղը բաղկացած էր որչափ կարելի է Թարս խողի-եղից, կամ ճրբուզուից, որ ծեծում են կամ մանրացնում են հում-հում. և այս իւրով ամեն օր քսում կուրծքը և մէջքը, ծածկելով երկու կողմն էլ վլանելով և բուսաղէով: Պ. Խաճկին յաւելայնումէ, որ կէս տարուց յետ նրա կուրծքը այնքան պնդացաւ, որ նա սկսեց ծխել ամենաաստիկ սիգառներ, թէ և մինչև այդ ժամանակը ամենաթեթև

ծխախոտի հոտը միշտ նրան խեղտումէր (միւս փորձերն էլ յաջող էին):

(Журн. Общепол. Свѣд.)

### 88. Կարիճների և Թարան-Թօլաների կծեւուց ազատուելու ժողովրդական միջոցներ:

Յայտնի է մեր ամենին, Անդրկովկասում շատ անգամ երևում են կարիճներ և Թարանթօլաներ, որոց խածուածից կենդանիները շատ նեղութիւններ են կրում: Քաղաքներում և զիւղաքաղաքներում առհասարակ, մինչև մի ուրիշ միջոց հասցնելը, բաւականանում են նրանով, որ խածատեղը քսում են փայտի եղ (Деревянное масло,) խառնած մխրի կամ աղի հետ: Միև նոյն ժամանակը տալիս են ներսից քրտնադեղ. իսկ սաստիկ նեղութիւններ պատճառած ժամանակը դործ են ածում բաղանիքներ. և բոլոր մարմինը քսում են քափուրի-եղ (Камфорное масло:) Հասկանալի է որ այս միջոցներս թէև շատ հասարակ են և մատչելի ժողովրդեան, բայց ճանապարհորդութեան

ժամանակ, անապատներում, դրանց գործ  
ածել կարելի չէ: Վասն որոյ Անդրկովկաս-  
սում, և Հարաւային Յւրոպայի շատ երկրը-  
ներում գործ են ածում մի ուրիշ աւելի  
հասարակ միջոց. կարիճի կամ թարան-  
թօլայի կծած տեղը քսումեն այնպիսի  
իւղով, որի մէջ շատ ժամանակ մնացած  
են եղել կարիճներ կամ թարանթօլաներ:  
Անդրկովկասում շատ անգամ փորձվումէ  
այս միջոցը. բայց ահա ժողովրդական  
միջոցը, որ առհասարակ այդ խածու-  
ածների դէմ գործ են ածում, որը կա-  
րելի է յայտնի է և մեր հայերին:

Կծելուց յետ իսկոյն վեր են առնում  
մի ափ հող (սեւահող) և նրան թացաց-  
նելով առողջ մարդու (այսինքն չխածած)  
մէկով, խմորի նման դնումեն վնասուած  
տեղին և նրա չորս կողմը: Շուտ շուտ փո-  
փոխելով այդ սպեղանին մինչև որ ցաւը և  
տաքութիւնը վերջանան, կարելի է երբեմն  
մինչև 24 ժամ առողջանալ և ուռոցը  
կ'կորչի: Նկատենք այս տեղ, որ այս միջոցը  
օգտակարութեամբ կարելի է գործ ածել  
Եւրոպական կարիճների կծածի դէմ, նոյն-  
պէս և միջին և հիւսիսային Ռուսաստանի:

Այստեղ շատ յարմար ենք համարում  
դարձնել ընթերցողներին ուշքը և մի  
ուրիշ նախապահականողական միջոցի վե-  
րայ: Յայտնի է, որ ոչխարները մեծ ախոր-  
ժակով ուտումեն, ինչպէս կարիճներին,  
նոյնպէս և թարանթօլաներին առանց մի  
որ և իցէ վնասի, մինչև անգամ եթէ  
խածուած էլ լինին: Սրա համար կարիճ-  
ները և թարանթօլաները վախենումեն  
բնական մի ազդեցութեամբ ոչխար արա-  
ծողից: Սրանց մորթու հոտը օդի մէջ տա-  
րածուելով նրանց վախցնումէ, սրա հա-  
մար նրանք երբէք չեն մօտենում ոչխարի  
բուրդից շինած շորերին, մուշտակներին  
զլխարկներին, և այն: Սա յայտնի է Անդր-  
կովկասի բնակիչներին և նրանք այդպիսի  
շորերի մէջ պատատուած հանդիստ ու  
հանդարտ պառկումեն հողի վերայ, առանց  
որ և իցէ մի երկիւղ կրելու դրանցից:

Թարանթօլայի կծածի դէմ ահա  
մի աւելի հաւանական միջոց, որ գործ են  
ածում զալմիսները: Կծած տեղը նրանք  
ածիլով կամ սուր դանակով կտրատումեն  
մի քանի կողմից և յետոյ բա՛ն կ ա յ ո վ  
արիւնը դուրս են հանում և տալիս են

Հիւանդին խմելու տաք եղ կամ խոյի (ղօջի) ճրագու մինչև մի օր հիւանդը արդէն վտանգից ազատ է: Սրա համար դալմաների մէջ թարանթօլաների և դրանց նման սարդերի կծելուց շատ քիչ է պատահում մահ, թէ և նրանց բնական երկրներում թարանթօլաներ շատ կան և շատ անգամ նրանց կծոտումեն:

(Журн. мин. гос. им.)

## 89 Գիւղական միջոց սատիկ լուծելուց.

Եթէ լուծումը արևնախառն է, պէտք է առնել մի բաժակ թարմ կովի կաթ, մի սեղանի դրկալ մեղր: Յետոյ պէտք է խառնել միասին և թեթև կրակի վերայ եփել, մինչև որ մնայ բոլոր խառնուրդի երրորդ մասը: Այս բոլորը պէտք է միանգամից խմացնել հիւանդին: Մէկ անգամ ընդունածը արդէն բոլորովին առողջացնում է և հազիւ թէ հարկաւոր լինի մի և նոյնը կրկնել:

(Одесскій Вѣстникъ)

## 90. Մաքրուած բորակ.

Սա միզաբեր միջոցներից ամենաշատ գործածականներից մէկն է: Նրան գործ են դնում այն պատահմունքներում, երբ մէղր կապվում է: Պէտք է ընդունել, վերառնելով 5-16 զրան կէսշաօի բրնձէ կփած ջրի մէջ:—

(Міръ Практ. Жизни.)

## 91. Մազերը և նրանց դարմանելը.

Մազերը լինում են զանազան, նայելով մարդու անձնականութեան և ցեղին, որին նա պատկանում է: Կնկայ մազերը աւելի երկայն են, քան տղամարդկանցը և նկատուած է, որ կանանց մազերը աւելի քիչ են թափվում, քան տղամարդկանցը: Առողջ-երեխայոց մազեր կտրակը շատացնում է կենսական գործողութիւնը և մի թոյլ կերպով գրգռում է նրանց գլխի կաշին:

Վտանգաւոր հիւանդութիւնից առողջացած մարդու մազեր վեր անելը կարող է պատճառել շատ վտանգաւոր հիւանդութիւններ: Եթէ հիւանդութեան ժամանակ



նակ զլսի մազերը իրանք-իրենց թափվում են: առողջանալուց յետոյ նրանք ըստ մեծի մասին կրկին բուսնում են:

Մազերը միշտ մաքուր պէտք է պահել և առաւել զգուշանալ որդուն քնքրելից: Մազերը ամեն օր պէտք է սանդրել ոսկրէ սանդրով և ժամանակից-ժամանակ լուանալ, որ մաքրուեն մազերը ժողովուած կեղտաու թիւններից և կաշու շողխայման միջոց տան: Բացի ջրից, սանդրից, զլսին կարելի է քսել սապոն և լուանալ նորանով:

Ո՛չ մէկ հետեանք չ'պէտք է սպասել այն դեղերից, որոնք առաջարկում են քանիսը կնտակու թեան և մազերի ուրիշ հիւանդութիւնների դէմ: Այդ միջոցները, զօրօրինակ արջի եղ, եղջերուի եղ, ճագարի եղ, օձի եղ և միւսները բոլորովին աւելորդ են և միայն հարստացնում են այն մարդկերանց, որոնք նրանց պատրաստում են:

Մոյնպէս վատ են և այն դեղերը, որոնք գործ են զրվում մազերը զուեամբերով համար: Այդ գոյների մէջ բոստ մեծի մասին զանվում են շատ կծու բաներ և մետաղային աղեր, որոնք ո՛չ միայն այրում են վերեւի կաշին, մազերը, այլ կա-

րող են պատճառել սաստիկ զլխացաւ և երեսի ու աչքերի ուռոյց:—

Իսկ ինչ վերաբերում է այն առարկաներին որոնք զուեաւորում են մազերը առանց այրելու, նրանց ազդեցու թիւնը մազերի գոյնի վերայ շատ կարճ ժամանակ է շարունակվում, վստորոյ կարելի է ասել, որ նրանք չ'բերելով ո՛չ մի օգուտ, միայն կեղտոտացնում են զլուխը:

(Миръ Практ. Жизни.)

## 92. Լուսակրի լուցկիներից յառաջացած վտանգները.

Քաղու'մենք Գերմանական կենդրոնական բժշկական լրագրից հեռուեալը: Մէկ մայնեցի բժիշկ կամենալով վառել զլանակը ծխելու լուցկիով (սպիչկա) այրեց լուսակրով իւր մատը և զգալով շատ սաստիկ ցաւ, կարեց ցաւող տեղը, որ այնտեղից արիւն արձակի, բայց սա չ'բաւականացրաւ և նա ստիպուեցաւ կտրել մատը: Այս գործողութիւնը սակայն լաւ հետեանք չունեցաւ, թոյնը տարածուեց և կանչուած բժիշները հարկաւոր համարեցին բոլոր ձեռք կտրել: Բայց

խեղճը սաստիկ չարչարուելով մի քանի ժամ ից յետոյ արդէն մեռաւ:

Այս պատահմունքը ցոյց է տալիս, որ լուսակրի լուցիկներէ հետ շատ զոյշ պէտք է վարուել: Երեխայոց ձեռքն են շատ անգամ տալիս և չեն մտածում, որ եթէ պատահաբար նրանցից մէկը ուտի երեխայն արդէն կ'մեռնի, կամ չգիտենալով յանկարծ կ'վառի և մեծ վնասներ կարող է պատճառել թէ բոլոր իւր կեանքի և թէ անտեսութեան: Շատ անգամ լուցիկները վառումեն մեծ մարդիք կերակուրների մօտ ճաշի ժամանակ. եթէ յանկարծ չգիտենալով ընկնի կերակրի մէջ և յետոյ ստամոքսի՝ անպատճառ կ'ունենայ շատ վատ հետևանքներ:

(С. Петербург. Вѣдом.)

### 93. Կօնֆէկտի գոյների վնասը:

Կօնֆէկտների մէջ լինում են զանազան գունաւոր առարկաներ, որոնք վնասակար ազդեցութիւն են ունենում մարդու կազմուածքի վերայ: Զորօրինակ բոլոր մետաղայիւնքները, որոնք ունեն իւրեանց բաղիւ-

ցութեան մէջ զառիկ, պղինձ, քրօմ, արձիճ և այլն շատ վնասակար են. վասն որոյ նրանց գործածութիւնը մինչև անգամ արգելուած է:

Բայց կան և անվնաս գոյներ, որոնցով գունաւորումեն կօնֆէկտները և նրանց պահող թղթերն: Առհասարակ միշտ թրղթերը գունաւորուած են լինում, վասն որոյ պէտք է բացի կօնֆէկտների գոյներից միտք դարձնել և նրանց վերայ փաթաթած թղթերին:

Սպիտակ և ծաղ կաւոր թղթերը մանաւանդ աւելի են պարունակում թունաւոր մետաղային մասնիկներ:

Եթէ կօնֆէկտները խոնաւ են և փաթաթուած այդպիսի վնասակար թղթերի մէջ, ծծումեն նրանց մէջ եղած թունաւոր մետաղները և գործածած ժամանակը վնասումեն թունաւորելով մարթու կազմուածքը: Երեխայքը վատ սովորութիւն ունին կօնֆէկտների թղթերը բերանը կոխելու. եթէ այդ թղթերի մէջ կան վերոյիշեալ թոյները, ապա նրանք հիւանդանումեն. եթէ գոյները բուսական խժերից լինեն, այնքան վնասակար չեն:

բայց առ հասարակ լաւ կ'ընենք, որ երեկայքը այդպիսի թղթերը ոչ մի ժամանակ չ'ընկնին:

(Журналъ Общеп. Свѣд.)

## 94. Գլխի պահպանելը ամառ ժամանակ:

Ամառվայ շրջերին, եթէ գլուխը ծածկուած է լինում դլխարկով կամ, գտակով շատ սաստիկ քրտնումէ, առաւել եթէ շատ քրտնող մարդէ: Ահա՛ մի հեշտ և ճշմարիտ միջոց, որ շատ ժամանակից արդէն յայտնի է Սւրուպայի մի քանի տեղերում: Գլխարկի կամ գտակի մէջ պէտքէ դնել կաղամբի (քալամի) թարմ տերև: Այսպիսով գլուխը միշտ հով կ'ըննի և ապահովուած կ'ընի արեգակնային հարուածից:

## 95 Գլխի մազերի թիւը

Մի Գերմանացի ուսումնական չորս ազգի մարդուց գլուխների մազերը համարելով, վերջապէս միջին հաշուով ստացաւ հետևեալը: Շէկ մարդոց մազերը հասնու-

մեն մինչև 140,400 հատի, դէղին մազերը մինչև 109,440. Թուխ մազերը մինչև 102. 960. աշխէտ-88740: Նոյնպէս էլ պէտքէ կարծել և նրանց ծանրութիւնը

## 96 Սամիթի թէյ (չայ)

Թէյ մի դրկալ սամիթի սերմը ածու մեն մի թէյ դրկալ եփեկած ջրի վերայ: Մանաւանդ սա օգուտէ ծիծ տւող կանանց համար և որոնք քիչ կաթ են տալիս: Շատ լաւ է այս թէյը նոյնպէս երեխաների համար քամիների դէմ, մանաւանդ երբ աղբը շատ հոտ և բնական զոյնը ու ձևը չ'ունի:

(Миръ практ. жизни)

## 89 Կոծիծի դէմ դեղեր

Կոծիծ կոչվում են ձեռների վերայ բըշտիկները, որոնք երբեմն ամենագեղեցիկ ձեռներն էլ տղեղացնում են: Գրա հակառակ միջոցներ շատ են առաջարկուած: Ահա՛ մի քանիսը, որոնք մեր կարծիքով աւելի

դերազանցու թիւն ունին միւսների առաջ:

1) Ամենասաստիկ քացախը, որի մէջ հալացրածէ շատ խոժոռ (և ոչ մանր) հասարակ աղ, կարողէ կոծիկներին դէմ լաւ միջոց համարուել: Այս խառնորդով շատ շատ անգամ պէտքէ քսել կոծիկներին, աշխատելով սակայն որ դա չընկնի ձեռնի միւս մասերի վերայ

2) Կոծիկները քսել մի կտոր նաշադրով որը մի քանի անգամ, միշտ թացացնելով թքով:

3) Քացախի մէջ պէտքէ թրջել հասած լիմոն: այդպիսի լիմոնով խորհուրդեն տալիս կոծիծներին որը հինգ անգամ քսել: Բայց թէ շատ է առողջացնում այս միջոցը՝ ճշմարիտ ասել կարող չենք, որովհետև մէք ինքներս նրան փորցել էինք, այլ միայն լսել:

(Міръ Практъ Жизни.)

## 98 Յուրտը տանելուց բժեր.

Երեսի կամ ձեռների վերայ ցուրտ տանելուց մտումեն բժեր, որոնք շատ հեշտ կարող են անհետանալ հետևեալ երկու միջոցներից մէկով:

1) Շագանակը (շահվալու թը) սաստիկ եփումեն և նրա ջրով քսում բժերին:

2) Վերեն առնում մի կտոր նաշադր և թքով թացացնելով քսումեն բժերին:

(Міръ практ. жизни)

## 99. Մըջիմներից ազատուելու հնարք.

Շատ աներում: չնայելով զանազան պարկաստանի դեղերի ածելուն կամ աղախնի մաքրութեան ու խտակութեան, հնար չի լինում ուսել և զէնը աղախել մըջիմներից կամ մանր ուսիձներից: Նրանք այնքան շատանումեն ստորագիներում և պահարաններում, որ ուտումեն կազամբի (քալամի) գլուխները, գեանախնձորը, հացը և մանաւանդ նրանք սիրումեն միսը: Մտի վերայ այդ պատճառաւ լինումեն կեղտոտութիւններ և շատ հիւթը ծծուած է լինում: Ահա մի հեշտ միջոց, որով կարելի է զրանցից ազատուել: Սեղանը և միւս փայտեղէնները լաւ պէտք է լուանալ ջրով ու սապոնով, յետոյ քսել սարգինու իւղ (Лавровое масло:) Այս եղը շատ ար-

ժան է, (\*) 20 կօպէկի կարելի է գնել մի շէշ, որ կարելի է բանաջնել շատ անգամ: Եղբ պէտք է այնքան քսել փայտերին, որ զօրանայ: Կրա հողը շատ թունաւոր է մըրջիմների և միւս միջատների համար, բայց անջնաս մարդու համար. այնպէս առանց վախենալու կարելի է ամենայն կերպ ուտելիղէն գնել նրանց վերայ: Այս փորձը շատ յաջող հետեանք ունեցաւ: (\*\*)

(Русская хозяйка.)

### 100. Մկներ կոտորելու միջոց.

Այս միջոցը շատ հասարակ է և փորձած է. Պետերբուրգում մի ալիւր. ծախող, որի պահարանում էլ մկներ չ'են երևում այն ժամանակից, երբ նա տան յատակի վերայ ջրուեց վայրի անթեմ, առաւել ալիւրի և բրինձի տոպրակների տակ

\*) Ամենայն զեղավաճառանոցում (սպիտակ) մէջ կարելի է գտնել: (\*\*)

Այս փորձը յաջող հետեանք ունեցաւ և մլուկների վերայ.

վայրի անթեմը (дикая ромашка.) սպետակ թերթերով մի ծաղիկ է, որ բուսնումէ անապատներում և քարոտ տեղերում: Կրանով կարելի է փուչացնել և առնէաներ (մեծ մկներ):

(Русская хозяйка.)

### 101. Մկներ կոտորելու մի ուրիշ միջոց.

Մանրացրած դառը նուշը ալիւրի հետ խառնուած թունաւորումէ սաստիկ ո՛չ թէ միայն մկներին, այլ և առնետներին: Բայց թունաւորելու ժամանակ, որովհետեւ հարկաւոր է նայել, որ մկներն չ'ստակեն տախտակամածի (ПОЯТ) տակ աւելի լաւ է լուսակիր (ФОСФОРТ) կամ փոսփորի հետ խառն մանր ալիւրի զնդակներ: Մկները և առնետները, ուտելով այս զնդակները, սաստիկ ծարավումեն, և թէպէտ իրանք շատ առումեն ջուրը, այնու ամենայնիւ ժողովումեն լճրի աւազանների կամ գետերի մէջ և հազարներով սատկոտում

(Русская хозяйка.)

## 102 Մլուկների (թախտա- բիթի) կոտորելը.

Մլուկները ջարդելու համար առ մի-  
քիչ գուտ օղի (արաղ,) նոյնչափ էլ է կեկիկի  
եղ (Терпентинное масло, թերիմեն-  
թին եաղը.) դրանց յետ խառնիր կէս ունկի  
ծեծած քափուր և վրձինով կամ սպունգով  
մուկ եղած տեղերը քսիր: (Բաղմամլէպ.)

## 103. Երկրորդ միջոց.

Տան մէջ շորեղէնները հանելուց  
յետ, պատուհանները ու գոները լաւ  
փակիր ու կրակի վերայ մի պղինձի աման  
դիր մէջին 2 դրվանքայ ծխախոտ և 3  
դրվանքայ ծեծած ծծումբ, և ծածկիր  
վերեւից, որ բոցը չբարձրանայ, ու խոյն  
դուրս եկի 24 կամ 48 ժամից յետ դո-  
ները բաց ու սկսիր բնակիլ: (Բաղմամլէպ.)

## 104. Երրորդ միջոց.

Սենեակը լաւ փակելուց յետ հողի ամա-  
նի մէջ եռացած ջուր դիր մէջ տեղը,

վերէն 5 կամ 6 կաթիլ ծծմբաթթու  
(кунаросное масло)  
ածա, և խոյն դուրս եկ ու դուռը փա-  
կիր: Այս փորձով մինչև մի ժամ մուկ-  
ները կ'ջարդուին, միայն փտանգաւոր է եթէ  
մարդ չկարողանայ սենեկից շատ շուտ  
դուրս գալ, որովհետև ծծմբաթթուն  
կ'ցրուի մարդու վերայ: (Բաղմամլէպ.)

## 105. Չորրորդ միջոց.

Սենեակից դուրս դանելով բոլոր առար-  
կաները, բացի մահճակալներից (кровать)  
ծխումեն քլօր և դոները փակում:  
Քլօրը զգնելու համար կարելի է վերառ-  
նել մի բաժակի մէջ փոքր ինչ բիրտօլետի  
աղ ու ածել վերան աղի-թթու (СОЛЯН-  
НАЯ КИСЛОТА,) որ կարելի է առնել  
ապտեկայից, դրանից կ'յառաջանայ քլօր,  
դեղին գաղ, որ կ'սպանի մուկներին: Այս  
փորձը զդուշութեամբ պէտք է անել.  
Քլօրը մարդուն վնաս է:

## 106. Պանձերի կոտորելու հետ միջոց.

Սրա համար պէտք է վերառնել 2 զբր-  
վանքայ ալբոհօլ (սպիրտ) 85 պրօցէնտի  
(ըստ թրայ լիսի անոտրաչափին) և 1 զբր-  
վանքայ սպետակ շաքար: Յետոյ ալբոհօլը  
վառումեն և պրուսմեն մինչև կէսը, և  
վերառնելով այս մնացորդից մի քանի լոտ  
տաք խարնուրդ ածուսմեն մի երես ամանի  
մեջ: Հոտը զրաւելով շատ ճանձեր  
արբեցնումէ, թուլացնում և մեռնաց-  
նում վերջապէս:

(Книга Тех-Хим. Рецентовъ.)

### 107. Սառած գետնախնձորի լաւացնելը

Գետնախնձորը շատ շուտ է յրտի կաշում  
և այնուհետև բոլորովին էլ կարելի չի լինում  
նրանց, բանեցնել: Առաւել դա մնաս է լինում  
նրանց, ովոր բնակիւումէ քաղաքում և  
գետնախնձորը թանդ է առնում: Բայց  
ասհա հետեւեալ կերպով կարելի է կրկին  
լաւացնել: Պէտք է սառած գետնախնձորը  
ածել մի մեծ ամանի մեջ և ածել  
վերան շատ սառ ջուր: Բայց դաք սենեակ  
չտանել: Տասը կամ 15 բոպէլից յետ սա-

ռած գետնախնձորները կ'ծածկուին մէկ  
բարակ սառուցով: մի քիչ ժամանակ  
այդ պէս թողնելով պէտք է նրանց մաք-  
րել և գետնախնձորը արդէն կարելի է  
բանեցնել կերակրի տեղ: Ճշմարիտ է, այս  
գետնախնձորը մի քիչ վատ կ'լինի նորից  
այնու ամենայնիւ կարելի է նրանից բաւա-  
կանին լաւ կերակուր պատրաստել:  
(Русская хозяйка,)

### 108 Գետնախնձորը հի- ւանդութիւնից ազատ պահելու միջոց.

Ճշմարիտ միջոցը գետնախնձորներին  
հիւանդութիւնից ազատ պահելու սա է:  
Տրնկելուց մի ամիս առաջ զրկումեն ածու-  
ների մէջ կիր: նոյն պէս զրուսմեն 6 ամիս  
անցնելուց յետ միշտ առաւօտեան պահուն  
դեռ ջոզը չ'ցամաքած: Գետնախնձորը միշտ  
պէտքէ անկոտել հեռու բնակարաններից,  
անտառներից, թուփերից և այլն այսինքն  
բացտեղում: որովհետև հակառակ դիպումած  
քում որդեր կ'յառաջանան: Թիթեաներ

աւելի ապահով տեսնելով քամիներից և վատ եղանակներից այսպիսի տեղերը մեծ քանակութեամբ ածուժեն ձուեր:

(Русская Хозяйка.)

## 109, Սառած գետնախնձորից կերակուր,

Գերմանիայի մի լրագիր առաջարկում է հետեւեալ եղանակը սառած գետնախնձորից կերակուր պատրաստելու: Գետնախնձորը բլեւումեն և ածում հողի ամանի մէջ և դուրսը սաստիկ ծածկումեն ձեփելով բոլոր ծակերը և դնումեն կրակի վերայ: Գետնախնձորը եփուելով իւր շողի մեջ այնքան էլ լաւ կերակուրէ դառնում, որչափ որ և նորը՝ չսառածը

(Русская Хозяйка.)

## 110 Գետնախնձորի հիւանդութեան բժշկելը:

Առողջ գետնախնձորը դիւրամարսէ, սննդարար և օգտակար ամենայն հասակի մարդկանց համար, մինչև անգամ նրանից

հաց են պատրաստում մի քանի տեղ, բայց դա փոքր ինչ վատէ լինում մեր մշտական գործածած ցորենահացից: Գետնախնձորը կարող է վնասել կաղմուածքին, միայն այն պատահմունքում եթէ նա հիւանդէ, այսինքն կարող է շուտով փտել կամ փտումէ: Մանաւանդ այդ վնասը սաստիկ կ'լինի, եթէ մի քանի ժամանակ շարունակ գործածուի: Սրա համար երկրագործի մի մեծ հոգսն էլ այդ է լինում, թէ ինչպէս գետնախնձորներին հիւանդութիւնից ազատի: Բայց ահա՛ մի պատահմունք, որ շատ յաճողուեցաւ: Փրանսիայի նորմանդիա նահանգում ֆէրիեր գելդի մի բնակիչ (20 տարե սորանից առաջ) մի մեծ դաշտ գետնախնձորէր վարել և երբ գետնախնձորը սկսեց արդէն մեծանալ, երկրագործը նկատեց նրա տերեւների վերայ բծեր և պուտեր, որոնք ակներև ապացոյց են գետնախնձորի հիւանդութեան: Այն ժամանակ երկրագործը աշխատեց արմատները բաժանել խանդարուած բներից և տերեւներից և թաղեց նրանց շատ խորը հողի տակ: Գետնախնձորը ժողովելու ժամանակ երկրագործը գեսաւ, որ նրանք շատ առողջ են, մինչդեռ նրա հարեան դաշտե-



րի դեանախնձորները բոլորովին հիւանդու  
էին, որովհետեւ նրանց հետ միեւնոյն նա  
խազգուշութիւն չէր եղած: Ուրեմն բու  
նի և տերեւների կարելը նրանց խանգարու  
ած ժամանակը, ամենևին չարգելելով  
նրան մեծանայու ընդհակառակը լուաց  
նուսմեն և առողջացնում գեանախնձորին:  
Չնայելով այտ գիւտի հնութեան, մինչև  
այժմ էլ մեծ յաջողութեամբ գործ է  
դնելում ներքին նորմանդեայում:

(Другъ Здравія.)

### 111. Թարմ և թթու կաղամբ պահպանելու միջոց.

Կաղամբի այս պահպանելը նա  
է, որ նրան գորայնուսմեն, բայց սրանով  
կաղամբի ո՛չ թարմութիւնն է փուչանում,  
ո՛չ համն է կորչում և ո՛չ հոտը փո  
խում: Թարմ սպիտակ կաղամբը մանր  
կտրտելով խաշ են տալիս եռ եկած ջրի  
մէջ և ածելով մաղի վերայ այնքան  
պահուսմեն, մինչև բոլորովին քամվումէ:  
Յետոյ երկաթի թերթերի վերայ դնելով  
մաքուր թղթեր կաղամբը սփռումեն  
թղթի վերայ և դնումեն բավականին

տաք վառարանի մէջ: Բոլորովին գորայնելու  
համար հարկաւոր է զոնէ 12 ամբողջ  
ժամեր Յետոյ նրան հանուսմեն և լքցնում  
թղթի արկղների մէջ: Ինչպէս որ անուսմեն  
ճիւստտի հետ: Երկու փութի կէս թարմ  
կաղամբից ստացվում է երկու զրվանքայ  
չորը: Բայց այն էլ կայ, որ մէկ զրվանքայ  
չոր կաղամբից կարելի է կերակուր եփել  
մինչև 25 մարդի համար: Թթու կաղամբն  
էլ կարելի է պահպանել այդ կերպով: այն  
զանազանութեամբ, որ նրան խաշում չեն  
այլ լաւ ցամաքեցնումեն մաղի վերայ և  
չորացնումեն ինչպէս վերևը ասացինք թար  
կաղամբի համար:

(Русская Хозяйка)

### 112. Կաղամբի և ճակնդեղի պարարտացնելու միջոց.

Հարիւր զրվանքայ հասարակ աղը  
խառնումեն 300 զրվանքայ կրի հետ և  
այդ խառնուրդը մի ամիս թողնումեն հան  
դարտ կաղամբ կամ ճակնտեղ ցանած  
ժամանակ այդ խառնուրդը նոյնպէս ածու

մեն հողի մէջ: Այս միջոցը պատկա-  
նուով: Շթօկթարթին:-

(Книга Тех.—Хим. Рецептовъ.)

### 113 Ծառից քաղած պը- տուղների պահպանելը:

Բոլոր փափուկ և քնքոյշ պտուղ-  
ները, զորօրինակ դեղձերը, ծիրանները և  
այլն, պէտք է քաշել մինչև արևազալը  
կամ աւելի վաղ: Բայր սկսուածն մի հով  
տեղում, ուրտեղ քամի է փչում և թող-  
նուածն մինչև բոլորովին հովանոյ: Դեղձը  
և ծիրանը պէտք է քաղել դեռ չհասած,  
երբ նրանք կ'սկսեն հոտ արձակել և կոթի  
մտ այնպէս փափուկ, որ նրանից կարող  
են հեշտ բաժանուել: Նրանց էլ սփռուածն  
մի հով տեղում: ուրտեղ կամաց-կամաց  
հասնուածն:

Տանձերի և խնձորի հետ վարուածն նոյն-  
պէս, բայց նկատել պէտք է, որ այս  
պտուղները ունենալով զանազան համ  
և հոտ, առանց ջոկելու կարելի չէ դնել  
ո՛չ թէ միայն մի գամբուղի մէջ, այլ  
մէկ տեսակը միւս տեսակի մտ: մինչև

երեք օր չ'անցնի: Ամենից լաւը այն է, որ  
սփռեն նրանց հով տեղում, սպասելով,  
որ նրանք բոլորովին կորցնեն իւրեանց  
բնական տաքութիւնը: Այն ժամանակ  
ջոկելով մանրները մեծերից կարող  
դնուածն արկղի մէջ, նրանց մէջը դնելով  
զգուշութեամբ չոր և մաքուր յարդ ամե-  
նայն կողմից:

(Русская Хозяйка.)

### 114 Պտուղներին ձև տալը.

Մէկ երկրագործն յաջողուեց պտուղ-  
ներին զանազան ձևեր տալ: անկի տառերի  
և մինչև անգամ խօսքերի նման: Սրա  
համար նա պտղի լուսի ժամանակը  
(մինչև հասնելը) կայնուածք նրանց թղթեր  
զանազան ձևերով կտրատուած: Իսկ հաս-  
նելուց յետ, երբ թուխթը վեր'ն աւնում  
այն ժամանակ այն կայքրած տեղը բոլորո-  
վին սպիտակադոյն է լինում: Այս այգեգործը  
փորձեր արել էր խնձորների, տանձերի,  
դեղձերի և սալորների վերայ:

## 115. Խոհարարական կահնակների չորացնելը և պահպանելը.

Չորացրած կանանչու գլխաւոր լաւութիւնը նրանումն է, որ նա չկորցնի իւր պայծառ գոյնը և բնական հոտը: Ամեն կանաչի պէտքէ ամբողջ ժողովել և չ'լուանալ, որ ավելի խոնաւութիւն չունենայ և հիւթը ջրալի չ'լինի: Պէտք է նրանց ժողովել յողնոց յետոյ, բայց ո՛չ կէսօրին, որովհետև նա կ'կորցնի իւր հիւթերի մի մասը: Այդ ժողոված կանաչին զգուշութեամբ պէտք է ջովել, թափտալ հողի մասներից և սփռել թղթի կամ սաւանի վերայ, շուաք տեղում ու բտեղ փչում լինի հանդարտ քամի և արեգակը տաքացնում չի լինի: Միակերպ և կամայակամայ չորացնելու համար, կարելի է ծածկել կրեսի կողմից թղթով կամ սաւանով և շատ-շատ շքել աւելի լաւ զորացնելու համար: Կաւ չորացրած կանաչին ձեռքով բաժանումեն կոթերից և աւելորդ մասերից. իսկ տերևները ածուժեն քաթմանի ստորակների մէջ կամ ապակեայ

ամաններում լաւ փակելով նրանց: Եթէ կանաչին խոնաւ եղանակում է ժողովուած, նրանց փունջ կապած արմատները (տակուկը) քաշ թողած հով սննեակում կախումեն քամու հանդէպ, յետոյ չոր տեղ դնելով չորացնումեն բոլորովին, ինչպէս որ վերը ասած ենք: —

(Русская Хозяйка)

## 116. Շուշանները երկու անգամ ծաղկեցնելու հնարք.

Այս փորձը յաջող վումէ այն շուշանների վերայ, որոնք անկած են տակառներում:

Եթէ շուշանը ծաղկել է մայիսին, պէտք է մօտ յուլիսի 10-ին քաղել նրանից բոլոր կանաչ և ղեղին տերևները: Օգոստոսին կերևան նոր կոկոն և փոքր ինչ ժամանակից յետ նոր տերևներ և ծաղկներ: (Русская Хозяйка.)

## 117. Ծաղկի սփի (արմատ) լաւացնելը.

Շատ անգամ պատահումէ, որ ծաղ-

կի սոխերը (մանաւանդ նունու ջարի) որ պահումեն սննեակներում, արձակում են կոկոններ տերեւների հետ միասին: Սա լինումէ այն ժամանակ, երբ սոխերը ուշ են տնկուել և սկսումեն մեծանալ դեռ բոլորովին չ'հաստատուած արմատներով: Հետեւեալ հասարակ միջոցը մեծացնումէ շուտով սոխին և տալին է ծաղկին աւելի գեղեցկութիւն և պայծառութիւն: վերառէ՛ք մի շիշ լիքը զետե ջուր և հալացրէ՛ք նրա մէջը մի քառորդ գրվանքայ բ որ ա կ, վեց մնխալ աղ և 3 մնխալ պ օ տ ա շ:

Իւրաքանչիւր սոխերը ջրելու ժամանակ պէտք է հասարակ ջրի մէջ ածել 12 կաթիլ այս խառնուղից, լաւ խստնել և յետոյ գործ ածել ջրելու համար: Երբ որ կոկոնները կ'սկսեն գունաւորուել պէտք է այսպէս ջրելը թողել: Իսկ եթէ չ'է սոխերը շատ վաղ կ'բացուին և կ'ծաղկին.—  
(Русская Хозяйка.)

### 118. Հասարակ սոխի լաւացնելը՝

Աշունքին պէտք է ջոկել ամենալաւ

սոխերը և նրանց ածելով տուրակի մէջ կախ տալ այնպիսի վաւարանից որ ձմեռը ամեն օր վաւովումէ: Գարնան նրանք արդէն չորացած կ'լինին. այդ ժամանակ նրանց տնկումեն պարարտ հողի մէջ, ուրտեղ նրանք արձակումեն միայն տերեւներ, բայց բուն լին տալիս: Այս միջոցով սոխերը հաստանում են և հասնումեն մինչև 1 ֆունտուկէս ծանրութեան իւրաքանչիւրը:  
(Садовникъ и Огородникъ )

### 119. Բոյսերի կենդանացնելը՝

Այս միջոցը առաւել ուղիղ է այգու բոյսերի վերայ, որոնք մըլթնորտի զանազան պատճառներով կամ հողի պարարտութիւնից շուտով բարձրանումեն և յետոյ կանգ առնում, թառամում ու չորանում: Նրանց կենդանացնելու համար պէտք է 1000 մաս ջրին վեր առնել 5 մաս երկաթի տրջասպ և այդպէս ջրել, որ շատ աժան կ'նստի և լաւ հետեւանք կ'ունենայ:

(Русская Хозяйка)

## 120. Միմիանց չ'վաասող բոյսերի անկելը:

(Журналъ Садоводства.)

Մերմացու և տնային բոյսեր անկելու հարցը շատ նշանաւոր է, զորօրինակ ինչ պիտի բոյսեր կարելի է միմիանց մօտ տընկել և ինչպիսիները կարելի չէ, որովհետև զրանցից է կախուած նրանց լաւութիւնը և կատարելութիւնը:

Միմիանց հետ աւելի ազգակցուած թիւն ունին և ուրեմն միասին չէ կարելի անկել հետեւեալ բոյսերը:

1.) Կաղամբը, բողկը, շողգամբ, մանանխը: Բոլոր պարտեզային բոյսերի մէջ, որոնք աւելի շուտով փոխալու՜ են միմիանց հետ, սրա համար նրանց մէջ պատահումեն շատ անսովոր խառնուրդներ: Վայրի բոյսերից վայրի բողկը (Хрѣнь,) մանաւանդ կարող է աւելի վատ ազդեցութիւն ունենալ յիշեալ բոյսերի սերմերի վերայ:

2.) Գաղար, կարսոն, նեխուր-(լեխուր, կարոս,) զեղին ստեպղին:

- 3.) Եղերդակ, վայրի հազար, հազար:
- 4.) Վարունկ, դյում, սիխ:
- 5.) Միսեռ, լոբիա, այգու բակլայ և այլն:
- 6.) Կանդառ (արտիճուկ), երնջակ,

Այստեղ յիշուած են մի սեռի զանազան տեսակները. իւրաքանչիւր մարդ պէտք է ո'չ թէ միայն այս յիշուածները, այլ և ուրիշ տեսակները այդ մի և նոյն սեռի ինքը լաւ հասկանայ և միասին չ'անկել տայ: Նրանց սերմերը պէտք է բոլորովին բաժանել միմիանցից:

## —121.—

Թերթաւոր կաղամբը (այսինքն, որը զլուխ չ'ունի) կարող է փուչացնել զլիսաւոր կաղամբին:

Գոյն զգոյն փետրաւոր կաղամբը առաջացել է կանաչ և կապոյտ թերթաւոր կաղամբների սերնդական խառնուելուց: Եթէ նրան սերմացու է հարկաւոր թողնելու, այն ժամանակ պէտք է նրան հեռացնել, ինչպէս մէկից նոյնպէս միւսից, որովհետև նա կարող է կորցնել իւր գոյնը գոյնուած թիւնը և փոխուել կամ հասարակ կա-

նաչ և կամ թէ կապոյտ թերթաւոր  
կաղամբ:

Արա համար ամենահարկաւոր է լաւ  
սերմեր ստանալու համար բոլոր տեսակները  
կարգաւորել միշտ հեռու մէկը միւսից:  
Տեղ չունենալու պատճառաւ կարելի է  
նրանց մէջերում ցանել բարձրահասակ  
սիսեռ, և որչափ շուտ լինի, այնքան աւելի  
լաւ է որ նա արդէն մեծացած լինի կաղամբ  
բի ծաղկած ժամանակը: Զորօրինակ կա-  
ղամբիմի քանի տեսակները կարելի է միջա-  
տնկել սիսեռի հետ հետեւեալ կարգով:

Ա.) կոլլարի, սիսեռ: Բ.) կապոյտ կա-  
ղամբ, սիսեռ: Գ.) կապոյտ կաղամբ, սիսեռ:  
Դ.) կոլլարի, սիսեռ զլիաւոր կաղամբ:

— 122. —

Նայելով այս օրինակներին և մտաբե-  
րելով ինչ որ ասացինք տեսակների հա-  
մար կարելի է այդ բոյսերին նման կարգա-  
ւորել և միջատնկել միւս տեսակ բոյսերը  
որ միմիանց չ'մնասնել:

Ե) կարսօն, հաղար կաղամբ, շամին:

Ձ) նեխուր, կաղամբ, շողգամ, վայրի  
հաղար:

Լ) դաղար, բողի, եղերդակ, շամին:

Ը) կաղամբ, քաղցրարմատ:

Ս) սիսեռ կամ բակլայ, վարունկ սոխ:

Այսպէս կարելի է անել և շատ ուրիշ  
փոփոխութիւններ, աշխատելով հեռացնել  
մի և նոյն սեռի տեսակները:

(Журналъ Садоводства.)

123. Լըրկրի պարարտացնելու  
մի կերպ.

Մէկ մաս ծծմբաթթուն խառնելով  
1000 մաս ջրի հետ ջրումեն դաշտերը:  
Անլուծելի ուրեմն և անսնդարար աղերը  
ծծմբաթթուով լուծվումեն և դառնում  
աննդարար բուսականութեան համար:

(Физ. Гано.)

124. Մաշոդը իբրև պա-  
րարտացնելու միջոց.

Միւս միջոցներով հոդը պարարտացնե-  
լու ժամանակ հարկաւոր է գալիս նախ մի  
քանի գործողութեանց ենթարկել: Բաց  
սևահոդը կամ տորիահոդը ամենևին չի  
կարօտում լաւացնելու և կարող է ուղղա-

պէս գործածուել որևիցէ երկրի պարարտացնելու համար: Տղձնոս կամ անպարտուղ կաւային հողը տորփի աւելացնելուց դառնումէ աւելի փուխը և բոյսերի արմատները խորանուսնէն նրա մէջ աւելի աղատ:

Մոյնպէս եթէ եղանակը խոնաւ է, հողը վերայ ջուրը այնպէս սաստիկ չէ մնում. իսկ եթէ չորէ, հողը այնքան պնդանում չէ, ինչպէս հասարակ հողը:

Եթէ աւազոտ երկրի մէջ աւելացնուի տորփի, նա աւելի երկայն ժամանակ է խոնաւութիւնը պահպանում երկրի մէջ և բոյսերը երաշտութիւն պատահած ժամանակ այնքան սաստիկ չեն վնասուում:

Եթէ տորփը մինչև գործածելը փթի, այդ աւելի լաւ է, և գործողութիւնը աւելի զորաւոր կ'ընին: Այդ նպատակին հասնելու համար լաւ կ'ընին ենթարկել տորփը ձմեռը ցրտի և երկու տարի շարունակ եղանակի փոփոխանելքների ազդեցութեան: Այս ժամանակը վերջանալուց յետ եթէ այդպիսի տորփը ետ տանուի և հետը խառնուի մի փոքր կաւ կամ աւաղ՝ կ'ստացուի ամենազեղեցիկ պարարտացնող նիւթ:

Եթէ տորփը խառնուի նոր հանդած և փոշիանման կրի հետ և մի քանի ամսից յետ խառնինթորել, կ'ստացուի նոյնպէս շատ լաւ պարարտացնող միջոց: Այս նպատակով աշունքուայ մէջ կամ ձմեռուայ սկիզբներում նրան քանդումեն և դէզ դէզ դնում: Այդ դեպքերը ենթարկումեն ցրտի ազդեցութեան և դրանով աւելի արատացնումեն փթելը:

Եթէ տորփը բոլոր ձմեռը բայ օդի մէջ էր աշունքին նրան դնումեն դաշտի վերայ: Գետ խոնաւ եղած ժամանակ նրան խառնումեն նրա հինգերորդ կամ եօթներորդ ծանրութեան չափ նոր այրած փոշիանման կրի հետ և դէզ դէզ դնումեն: Յետոյ խառն փնթորելով նա լաւ խառնվումէ կրի հետ և 4 կամ 8 շաբաթ անցնելուց յետ արդէն պատրաստ է պարարտացնող նիւթը:

(Книга тех-хим. Рецептовъ)

## 125. Քալէածխի մոխրով պարարտացնելու միջոց.

Ուրտեղ գործարանների կան կամ քարէածուխը դուրս է դալիս երկրից, կարելի է

Հողը պարարտացնել նրա մոխրով հետևեալ կերպով: 100 գրվանքայ քարեածխի մոխրի վերայ ածուժեն 1 գրվանքայ նոր հանգած կիր և թողնուժեն մինչև բոլորովին հանգչի 12 ժամ անցնելուց յետ բոլոր դէզը խառնփնթորում են շրջումեն և մինչև գործածելը պահպանումեն չոր տեղում: Այսպիսի պարարտացնելը գործ է ածվում ճահճային տեղերի համար:

(Книга тех-хим. Рецептовъ)

## 126. Ընկոյգներին թարմութիւն տալու միջոց.

Պէտքէ ընկոյգները թացացնել երկու օր շարունակ թոյլ տաքացրած կաթի մէջ, որից յետոյ նրանց հանումեն և ցրտացնումեն օդի մէջ:

Փոխանակ կաթի կարելի է վերառնել ջուր: Սրա համար կէս շաօի ջրին աւելացնումեն մի դրիալ աղ և թացացնումեն նրա մէջ ընկոյգները 5 կամ 6 օր շարունակ:—

(Миръ Практ. Жизни.)

## 127. Սպիտակ կամ դեղին մանանեխի ևւ մի օգուտը.

Բայցի այն օգուտներից, որ տալիս է սպիտակ կամ դեղին մանանեխը մարդկութեան, իբրև բժշկական միջոց, իբրև համեմիչ կերակրի մէջ, իբրև եղային բոյս, որով լուսաւորումեն աները կամ պատրաստումեն կերակրի համար. տալիս է ևւ մի ուրիշ օգուտ, որ դիտել է Պ. Կօզլովը Բօրիսօզլէբսկ քաղաքում: Մանանեխը իւր ծաղկած ժամանակ արձակումէ շատ սաստիկ հոտ, որով նա զրաւումէ շատ մեղրաձանձեր՝ իւր ծաղիկներին մօտ, ինչպէս гръиха-ն:

(Листовъ для всѣхъ).

— 128. —

Միւս ծաղիկների համար, որ կարելի է հայաստանում գտանել մեղուների համար, մեք շատ ընդարձակ դատելով մեր գրքոյի մեծութիւնից, թողնումենք երկար և մանրամասնաբար խօսելու մեղուապահութեան վերայ աշխատողներին աւայժմ:



## 129. Մալաթի և նրա տե- սակների ջրերը.

Բոլոր սալաթի բուսականները իրանց արմատների մէջ սարունակում են շատ թէ քիչ կաթնային հիւթ: Այս բոյսերը աւել լաւ են զարգանում քիչ ջրած ժամանակ: Սատիկ ջրած ժամանակ բոյսերի արմատները ցրտում են, վասն որոյ առաջացնում են աւելի փոքր գլուխներ, քան թէ այն միջոցներում, եթէ նրանց կամ շատ քիչ են ջրում և կամ բնաւին չեն ջրում:—

## 130. Աանեփը, իբրև նա- խապահայանողական միջոց կա- ղամբին և միւս բոյսերին որդուն- քներից.

Գիւղատնտեսներից իւրաքանչիւրին արդէն յայտնի է, թէ որչափ մեծ վնաս են պատճառում կաղամբի զանազան տեսակներին որդունքները: Այդ բոյսերի նախապահայանութեան համար առաջարկու-

ած են շատ միջոցներ և եղանակներ քիչ ու շատ ճշմարիտ և ձեռնառու:

Այդ միջոցներից մէկն էլ կարող է յարմարապէս լինել կանեփը, իբրև աւելի հոտաւէտ, ուրեմն անհաճոյ և անախորժ որդունքների համար: Այս նպատակաւ պէտք է կանեփը ցանել այն բոյսերի մէջերը, որոնց ցանկանում են նախապահայանել որդունքներից, զորորինակ, կաղամբի, շաղկամի և նրանց նման բոյսերի մէջ: Պրուսիայում շատ գիւղատնտեսներ համարուել են կանեփի այս ճշմարիտ օգտի մէջ: Աանեփը, նրանց հաւատացնելով, պահպանում է ոչ միայն կաղամբներին, այլ և ուրիշ պարտեզային բոյսերին և պողատու ծառերին, զանազան վնասակար միջատներից:

Յանկալի կ'լինէր, որ և մեր գիւղատնտեսները փորձէին պրուսական այս միջոցը, մանաւանդ այն տարիները, երբ որդունքները կտորում են համարեա բոլոր բուսականութիւնը:

(Астрах. Губ. Вѣд.)



### 131. Ծներեկի պահպանելը

Ծներեկը օգտակար է մեղամաղձոտ մարդկերանց թեթևացնելու, նրա արմատը ախորժակ է բաց անում: Ծներեկը պահպանելու համար պէտք է նրան մաքրել, և լուանալ և դնել ցուրտ ջրի մէջ մինչև կշտանայ: Յետոյ դուխները բարձր դնում են մի ամանի մէջ, ուր ածուած է ջուր և նրա ամեն մի շտօփին խառնած է 60 մնխալ աղ. իսկ վերևից ածուած է փայտի եղ: Այդպիսով Ծներեկը կարող է ամբողջ տարի մնալ:

(Mиръ Пpакт. Жизни.)

### 132. Լիմոնների պահպանելը

Լիմոնները պէտք է չորացնել հասարակ կրակի վերայ կամ մանր աւաղի մէջ, որը կամայ կամայ տաքացնում են վառարանի մէջ: Երբ որ աւաղը հովանում է, ածուակն չոր և մաքուր սարդափում տախտակամածի վերայ մի կարգ այդ աւաղից. խորքանչիւր լիմոնը փաթաթում են թղթի մէջ և դնում են աւաղի վերայ, այնպէս, որ լիմոնների սուր ծայրը չընկնի:

Բաշ կուրմէ և նրանք միմանց չ'կպւեն: Լիմոնների այս աւաղին կարգի վերայ ածուակն աւաղ կէս վերշոկից փոքր ինչ աւելի բարձրութեամբ և դրա վերայ դնում են մի և նոյն կերպով լիմոնների երկրորդ կարգը և այդպէս շարունակում են, մինչև կ'վերջանան բոլոր լիմոնները: Վերի կողմից ածուակն ամենաբարձր կարգի վերայ էլ աւաղ, որ բոլորովին ծածկում է նրանց:

(Mиръ Пpакт. Жизни.)

### 133. Դղումների պահպանելը.

Դղումները պէտք է ժողովել չոր և մութ խոհանոց, ամբար կամ սարդափ, նրանք այդպիսով մի ամանից աւելի կարող են մնալ: Իսկ ձմեռը, որովհետև նրանք շատ շուտ են փուչանում ցրտից, նրանց պէտք է ծածկել զարմանով: Իսկ եթէ դղումները չորացնում են կարող են մնալ մի քանի ամիս շարունակ:

(Mиръ. Пpакт. Жизни.)

### 134. Օշինդր կամ ափսինդ:

Սա ամենին յայտնի մի բոյս է իւր

դառն համով և մի քանի օգուաներով : Կրդողական և ստամոքս-ամրացնող զօրութիւն ունի, վասն որոյ օշինդրը մանաւանդ օգտակար է ստամոքսի երկայն ժամանակ թուլութեան դէմ, բայցի դա ջրզոզութեան դէմ և զեղնութեան, նոյնպէս ընդհատ ջերմի դէմ, որ զուգնթաց է ստամոքսի թուլութեամբ և աղիքներէ ալ կարութեամբ ձիճուներից: Սաստիկ ջերմի ժամանակ հիւթը ձգմամբ են և իւրաքանչիւր օր տալիս են մի կամ երկու դրկալ: Օշինդրը զործ են ածուճ նոյնպէս ջրի կամ զինու ընկելիքներէ մէջ, վերառանելով 2 զրվանքայ հեղուկին 1 մնխալ խտ:

Миръ. Практ. Жизни.)

### 135 Ծանուցայ համար ձու պահպանելը

Արա համար ՚ի հարկէ պէտք է ջակել ամենաթարմ, նոր ածուած հաւի ձուեր և զնել նրանց նախ և յառաջ մի ամանի մէջ, որ Լքցուած է կրաջուրով:

Այս կրաջրի մէջ պէտք է թողնել

նրանց զոնէ 15 րուկ. յետոյ նրանց հանել և առանց սրբելու զնել յարդի (զարմանի) մէջ, որ երանք իրանք չորանան բոլորովին: Յետոյ զանուամեն մի խտակ, մեծ և առանց ծակծուկի տակառ (բոշկայ) նրա յատակը ածուամեն մէջի կողմից մոխիր և զնուամեն ձուաներ, յետոյ կրկին ցանուամեն մոխիր և կրկին շարուամեն ձուաներ և այդ պէս մինչև զլուխ ճակատի վերի կողմը, ՚ի հարկէ պէտք է մոխրից զուրս լինի և տակառի կախարիչը պէտք է ո՛չ թէ զնել տակառի բերանին, այլ պէտք է այնպէս անել, որ կախարիչը մէջը չ՛մանի օդ չ՛մանելու համար: Քանի ձուաներ բանայնուամեն, մնացածներէ վերայ էլի պէտք է ցրուել մոխիր և կախարիչը ցածացնել կամաց կամաց, որ դրսի օդը չ՛մանի ներս: Երաջրի մէջ կերը շատ պէտք է չ՛լինի, որովհետև ձուի քշելը կ՛փուջանայ, վասն որոյ մէկ բաժին կրին պէտք է վեր առնել 10 բաժին ջուր:

(Русская Хозяйка.)

### 136. Մի և նոյն ձուի պահպանելու կերպը Ֆրանսիայում.

Վերջին ժամանակներս Ֆրանսիայում շատ յաջող հետեւանքներ ունեցաւ մոխրի մէջ ձու պահպանելը: Սրա համար ամանի կամ զամբիւղի յատակը պէտք է ծածկել մոխրով մինչև մէկ մատնաչափ հաստութեամբ և դնել այդ մոխրի մէջ ձուերն պտուկները բարձր: Յետոյ պէտք է ածել կրկին մոխիր մէկ մատնաչափ ձուի պտուկներէց բարձր և այդպէս շարունակել մինչև դուրս: Այդ ամանը կամ զամբիւղը պէտք է մի հով տեղ դնել:

### 137. Չուերի թարմութիւն իմանալը և նրանց պահելու միջոց.

Չու ամենայն մարդ գործ է ածում, բայց հիւանդներին շատ փաս է տալիս, եթէ նա հին է: Ֆրանսիացի դիժոնացի Պ. Գեւարիւրը հետեւեալ միջոցն է առաջարկում ձուերի թարմութիւն իմանալու: Երկու զրովանքակէս ջրի մէջ հալացնել 28 միխալ

8 լոտ հասարակ ջրի մէջ հալացնումեն 12 լոտ հասարակ սոսինձ (եափշխան,) և կոտորումեն դրա մէջ 12 լոտ սպիտակ սապոն և երբ որ բոլորը կ'հալուի, անդադար խառնելով աւելացնումեն 6 լոտ մանրացրած պողեղ: Այդպիսի կերպով պատ բացած խառնուրդի մէջ ընկղմումեն թղթի թերթերը կամ թէ սպունդը թացացնումեն խառնուրդի մէջ և յետոյ քսում թղթին: (Книга Тех-Хим. Рецентовъ.)

### 151. Սոսինձ լաւացնելու միջոց.

Երբ որ կամենումեն, որ սոսինձը իւր մէջ խոնաւութիւն չծծի և բաւականին կպչողական ոյժ ունենայ, եփ են տալիս և իւրաքանչիւր զրովանքին փոքր առ փոքր աւելացնումեն 1-1<sup>1</sup>/<sub>2</sub> լոտ մանրացրած այսինքն փշրած պողեղ:

(Книга Тех-Хим. Рецентовъ.)

### 152. Լաւ սոսինձի նշաններ.

Հիւանային (դիւրգարի) լաւ սոսինձը շատ թէ քիչ բաց-կիրամոնադեղին է կամ բաց-կիրամոնադոյն, բայց մոյգ չէ, առանց

բծերի, փայլուն, պինդ և ամուր. բայց ո՛չ դիւրաբեկ (հեշտ կոտչվող) կտորուած տեղերը ապաիւռ կերպ է, չպէտք է ծծի օղիցը խոնաւութիւն: Յուրտ ջրումը միայն ուռչումէ և փափկում է, բայց հալվում է: Իսկ երբ նրան տաքացնումեն, նա հալվումէ դառնալով թանձր և կաշող հեղուկ, որ ցբտացնելով խոկոյն սառչումէ և դառնում մի փափուկ բան:—

(Միրք Քրատ. Жизни.)

### 153. Ոսկեջրած պղնձեղէնների մաքրելը

Ոսկեջրած պղնձի առարկաները ընկրդմունքն տաք սապոնաջրի մէջ և այդ տեղ հարումեն թեթեւ փափուկ շշտկով: Յետոյ նրանց դնումեն մաքուր տաք ջրի մէջ և կրկին շշտկով մաքրում, որ սապոնը վայր դայ և մաքրուին մի քանի կեղտոտութիւններից: Վերջապէս առանց սրբելու նրանց դնումեն բաց օդի մէջ: Երբ որ նրանք երանք-իրանց չորացան փափուկ կտաւով սրբումեն կամ թէ աւելի լաւը լայկով, որով նրանք ստանումեն փայլու-

նութիւն: Երբէկ պէտք է միայն հարթ տեղերը, մուգ տեղերը-ամենեւին  
(Միրք Քրատ. Жизни.)

### 154. Սառ սապոնը ճանաչելու միջոց.

Պատահումէ երբեմն դնումեն վատ սապոն, որ վատ է փրկրում և շատ կոշտ է, սա նրանից է յառաջանում, որ ծախողները սապոնը ծանրացնելու համար կտոր կտոր դցումեն ջրի մէջ, որի մէջ հալացրած է ծովի աղ: Այդ խարբաշու թիւերը հեշտ կարելի է իմանալ: Սապոնը առնելու ժամանակ լեզուի ծայրը կպցրէք սապոնի այն կտորին և եթէ նա դցուած է ծովի ջրի մէջ, այն ժամանակ կզգաք անպատճառ շատ կծու աղի համ:

(Միրք Քրատ. Жизни.)

### 155. Մենեակների օդի չորացնելը.

Պինդ փափուած և ուրեմն անբնակ սենեակներում պէտք է այրել շատ ածուխ:

Քաղը, որ այդ պրեւուց դուրս կ'զայ կ'ծծի  
գոյնների հոտը և խոնաւութիւնը. և եթէ  
այս փորձը կրկնուի երկու անգամ, կարե-  
ւն է առանց վախենալու բնակուել ձմեռը  
այս սենեակներում. մինչև անգամ եթէ  
տունը նոր լինի շինուած:

(Русская хозяйка.)

### 156. Գիւղական աների մաք- րելը.

Գիւղական աները անպետան օդից  
մաքրելու համար կայ մի հեշտ և արժան  
միջոց, որ գործ է զնվում: Մարրօսսիում և  
Հայաստանի մի քանի տեղերում: Սենեակ-  
ների ներսի պատերը որչափ կարելն է  
պէտք է սպիտակացնել կրաջրով: Բայց  
պատերին լաւ կպչելու համար ամէն մէկ  
վեղրոյ կրաջրին պէտք է խառնել կէս  
գրվանդայ պողլիզ:

(Строитель, Технологъ и Меха-  
никъ.)

### 157. Տան մէջ խոնաւութիւնը խմանաւու միջոց.

Տան մէջ խոնաւութեան ներկայու-  
թիւնը կամ աննրկայութիւնը շատ մեծ  
զեր է խաղում անող ջապահութեան կա-  
նոնների մէջ, որովհետեւ խոնաւութիւնը  
կարող է դառնալ մի մեծ աղբիւր: նորա  
նոր հիւանդութիւնների և ցաւերի: Ահա  
մի միջոց խոնաւութիւնը խմանալու: Չհան-  
դած կիրը վառարանից հանելուն պէս,  
իսկոյն պէտք է սրբել, յետոյ կշռել և  
ածելով մի ամանի մէջ, դնել ամանը  
այնտեղ ուր տեղ հարկաւոր է փորձել և  
թողնել 24 ժամ: Յետոյ կշռեցէք կիրը.  
եթէ 500 մսխալ կրին աւելանայ մէկ մրս-  
խալ ջուր, այսինքն եթէ կիրը իւր մէջ  
ծծել է 1 մսխալ ջուր, այդ տեղը չոր է  
և կարելն է ապրել անվնաս և առողջ:  
Բայց եթէ ընդհակառակը կ'աւելանայ  
5-6 մսխալ, և աւելի, այդ տեղը ուրեմն  
խոնաւ է և վնաս առողջութեան: Այս  
միջոցը աւելի հարկաւոր է զալիս նորաշէն  
աները փորձելու համար:

(Журналъ Общепол. Свѣдѣній)

## 158. Վառարանի ծակերի՞ծ եփելը.

Եթէ նկատէք վառարանի մէջ ծակ, շատ հեշտութեամբ կարող էք ծեփել, և այն էլ այնպէս, որ ամենեւին ծուխ չգորսուի: Արա համար պէտք է վեր առնել հաւասար որքանութեամբ մոխիր և աղ, և ածել այնքան ջուր, որ խոնրի նման մի բան դուրս գայ: Այդ խոնրով պէտք է ծեփել վառարանի ծակերը ընչ տաքութիւն ունեցած ժամանակը:

## 159. Կանթեղի ապակու սրբելու միջոց.

Կանթեղերը լուսաւորութեան համար շատ գեղեցիկ են: Բայց նրանցից մի քանիսը վառվում են այնքան պայծառ և արձակում են այնքան առք շողիներ որ, ապակին թխանում է, և վառչայնում է զոյնը այնպէս, որ միւս առաւօտը դժուար է լինում բերել առաջուպ պայծառութեան: Տեսնելու համար յոյները կարում են և իրանց ձեռքով որչափ սրբում են, ինչպէս փոշի բանեցնում են, սապրում լուսնու մէջ, ինչ կարողանում են անարիւր: Փոշիով սրբած ժամանակը ապակու վերայ երևում են բծեր և սուտեր:

որոնցից ապակին կտրվում է, իսկ սապրում լուսցած ժամանակը, դեռ փոքր տաքացած ժամանակը չկարողանալով դիմանալ աւելի տաքութեան՝ տրաքվում է: Մենք, որ դրում ենք այս շաքերս, մի և նոյն նեղ դրութեան մէջն էնք, մինչև որ մէկ ծաւօթ կին ցոյց առաւ դրա հակառակ ճրջմարիտ միջոցը: Մի փայտի վերայ պէտք է փաթաթել շորի կտոր և թաթախելով քայտի մէջ ամեն առաւօտ սրբել դրանով ապակու մէջը: Կեղտաութիւնները շուտով անհետանում են, բայց խոնաւութիւն չմնալու համար, պէտք է միւսնոյն փայտը փաթաթել շոր և մաքուր շորով և կրկին սրբել: Եթէ այդ սեւութիւնը և այրուածը շատ ժամանակից է, այնպէս որ ապակին թխացել է, պէտք է նախ մէջը քսել քայտի մէջ հալացրած քրեմեր թարթարով և յետոյ սրբել քայտիով և չոր շորով: Այս փորձը մեք ինքներս փորձել ենք ամենասե ապակիներից մէկի վերայ և թէ և ճշմարիտ տրեւր փոքր ինչ շատ ժամանակ տեկց, բայց հեռեանքը շատ բաւականացուցիչ:

(Русская Хозяйка)

## 160. Այրող սաժի հանգցները.

Եթէ նկատէք, որ սաժան ծխնելոյղի մէջ այրվումէ, ծխնելոյղը պէտքէ ծածկել խասիրով ( рогожа ), կամ մահուղով, ինչքան կարելի է պինդ. իսկ վառարանի մէջ որտեղից վառուել է սաժան, ածեցէք մի քանի ափ մանրացրած ծծումբ (քիւքուրդ) և միևնոյն ժամանակը ծածկեցէք բարցրի դուռներ, երեսի կողմից կախելով խոնաւ շոր:

Այսպիսով վառարանումն էլ և ծրխնելոյղում կրակը կ'հանգչի: Եթէ ծխնելոյղը չ'ծածկուի, այն ժամանակն էլ կ'հանգչի, միայն փոքր ինչ ուշ և շատ ծծումբ ածելով: Վառարանը փակուած պէտք է պահել մինչև բոլորովին կ'հովանայ, որովհետև այնտեղից դուրս եկած հոտը շատ վնաս է մարդու առողջութեան:\*

(Русская Хозяйка).

\*) Ծծումբը այրվելով արձակումէ ծծմբաթթուի գազ, որ յատկութիւն ունի հանգցնել բոլոր վառվող մարմինները: Նա շատ վնասակար է մարդու առողջութեան:

## 161. Արակ հանգցնելու միջոց.

Եթէ մէկ վեղրօ ջրի մէջ ածէք մէկ գրվանքայ անուշադր, որ գործ են ածում առհասարակ կրայեկողները աման մաքրելու համար, կարող է քսան անգամ աւելի բոց և տաքութիւն հանգցնել և էլ աւելի, քան թէ մաքուր ջուրը: Բայցի սա մեծ հրդէհների ժամանակ մաքուր ջուրը այնպէս շուտով շողիանում է, որ այրվող առարկաները, թէ և պատած են ջրով, բայց ներսի տաքութեամբ կրկին բորբոքվում են և այրվում: Բայց եթէ այրվող առարկաները պատած լինին անուշադրա-ջրով, նրանք իսկոյն կ'ծածկուին նրա աղով, որ թոյլմն չէ տալ օդի հաղորդակցութեան և ուրեմ կրկին բորբոքման:—

(Таврич. Губ. Вѣд.)

## 192. Արծաթի բաների մաքրելը.

Չուն շատ շուտ փուլացնումէ արծաթի դրկաներին և ամեն խոհարար արդէն տիղէ, թէ ինչպէս պուտեր են երևում նրանց վերայ ձուածեղից յետոյ: Արծա-



Թին \*) իւր առաջուայ փայլունութիւնը տալու համար պէտք է նախ քացախի մէջ դնել (հալել) սածը (сажа дани́дախարիթ մեղծ) և քսել նրանով և յետոյ մաքրել հետեւեալ խառնուրդովը, որ շատ օգուտ է արծաթի մաքրելուն: Վերառ՝ մի բաժին ջուր, տանկերորդ մասը կաւիճ՝ փոշիացրած, քսաներորդ մասը ս օ դ է կ ի ս լ օ ա ա յ և կէսը սպիրտ որոնք անպատճառ կզրտնուեն ապտեկայում: Թրջելով կեղտոտուած արծաթը այս խառնուրդի մէջ, փաթաթեցէք չոր շորի մէջ և թողէք լաւ չորանայ և յետոյ, երբ կ'չորանայ, սրբեցէք բարակ սրբիչով և յետոյ շ շ օ ա կ ո վ: Աւելի փայլունութեան համար կարելի է լաւ սրբել լայնով: և շատ կ'փայլի արծաթը:

(Русская Хозяйка.)

163. Մի ուրիշ միջոց.

Կեղտոտած արծաթի վերայ ածեցէք փոքր ինչ աղ և սրբեցէք մինչև աղը կ'կեղտոտի,

\*) Սա նրանից է, որ ձուլի մէջ կայ ծծումբ, որ շատ շուտ միանում է արծաթի հետ. սրա համար արծաթը մինչև անզամ պէտք է մօտիկ չ'պահել ծծմբային բաների:-

յետոյ վերաննելով աւելի մաքուր աղ կրկին սրբեցէք:-

164. Ժեստի ամանների մաքրելը.

Խառնեցէք մի քիչ փայտի մոխիր հասարակ եղի հետ (չորօրինակ կանթեղի.) ա յնպէս որ մի հեղուկ բան դառնայ: Յետոյ նրանով քսեցէք կեղտոտուած ժեստը և սրբեցէք պինդ, առաջ քաթմանի, յետոյ բրդի շորով:

(Листокъ для всѣхъ.)

165. Ղերմակեղէնի ժանգը հանելու կերպ.

Շոր լուացողները շատ անգամ անըզգուշութեամբ, լուացած շորերը կախ են տալիս երկաթի բևեռներից կամ թէ պահում են չորացած պղնձի մէջ և այլն: Այդպիսի պատահմունքներում ժանգոտած տեղը պէտք է թրչել շատ թոյլ ծծմբաթթվով, (այսինքն շատ բաժինը ջուր իսկ մի փոքր մասը ծծմբաթթու) և ածել նրա վերայ լեղակի փոշի կամ լեղակի ջրի մէջ թաթախել: Ժանգոտած բիծը իսկոյն կ'կա

պըտի և եթէ լուացուի սապոնաջրով, նա  
բոլորովին կ'անհետանայ:

